Բլեյան Ա.

Ապագա ունենալու համար ապրել է պետք.

Երեւան, « Շաղիկ », 2000թ.,

*Գրքում ամփոփված հոդվածները ընթերցողին կծանոթացնեն « Նոր ուղու» գաղաղափարախոսությանը: 1992-ից սկսած հեղինակը հանդես է եկել մամուլում, իր խոսքն ասել երկրի հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր իրադարձությունների կապակցությամբ: Իսկ 1998-ի նախագահական ընտրություններում ներկայացրած ծրագիրը այն ելքն է, որն առաջարկում է Աշոտ Բլեյանը հայաստանցուն:*

*Ընթերցողը կհամոզվի, որ քաղաքական գործչի դիրքորոշումն ու հայացքները բռնել են ժամանակի քննությունը եւ մնացել հաստատուն:*

*Օգտակար չլինել չեմ կարող:*
*Չեմ կարող հանդիսատես լինել,*
*երբ աչքիս առաջ փլուզվում են*
*տասնամյակներ գուրգուրած*
*երազ ու ծրագիր,*
*երբ վտանգված է երկիր Նաիրին:*
*Ինչպե՞ս օգնել:*
*Այս ժողովածուով ուզում եմ*
*հասկացված լինել ու*
*ապացուցելի դարձնել*
*իմ առաջարկները:*

**Աշոտ Բլեյան**

# Պահին ասված ճշմարիտ խոսքը գործողություն է դառնում

*Առաջաբանի փոխարեն*

Մեր ապագան մութ էր ու անորոշ: Այդպիսին է եւ մեր ներկան՝ հասարակությանը պատած ուժգնացող շփոթով: Իմ սերնդին այսպիսի շփոթն անծանոթ է: Թվում է՝ մեր ընթացքը (թող որ դժվար ու ծանր կորուստներով) պետք է տեսանելի լիներ մեզ. չէ՞ որ մենք լրիվ նրա մեջ ենք: Բայց հենց ներկան է անթափանց վարագուրված մեզանից: Այն լուսավորված պիտի լիներ անցյալի լրիվ իմացությամբ, որը որպես հիմք է ծառայում ներկային:

Այսօր մենք պարապ ենք: Մեր անելիքի թերի կամ թյուր իմացությունն է ծնողն աճող անհավատության, որն ավարտվում է նիհիլիզմով: Նիհիլիզմը նորից դառնում է այսօրվա հայ մտածողության տիրապետող տիպը: Այսօր մեր գրագետը (արվեստագետ, գիտ-աշխատող, ուսուցիչ թե ձեռնարկատեր) իր գլխավոր գործը դարձրել է գլխապահությունը (ձեզ ծանոթ գոյապահությունը): Ճշմարիտը փնտրելով նիհիլիզմի մեջ՝ նա հասարակությանն անզիջում ու դաժան լինելու կոչ է անում... Այն դեպքում, երբ ժողովուրդն ու հենց ինքը՝ գրագետը, մխիթարանքի ու հույսի ծարավ ունեն: Իսկ անհուսությունն առաջացնում է պատրանքի պահանջ, կյանքի դատարկությունը՝ սենսացիայի, անզորությունը՝ ավելի թույլի նկատմամբ բռնության պահանջ... Հարվածի տակ է կուլտուրա կուտակող ու փոխանցող ավանդույթը: Այսպես եթե երկարի, մեր վայրի կյանքը կհարատեւի նոր ավանդույթների ձեւով: Մարդն իր եղելությամբ ավանդութային է, եւ ժառանգականությունը չէ, որ ավանդույթ է փոխանցում: Զգուշանա՛նք...

Ով քիչ թե շատ ծանոթ է դարասկզբի մեր պատմությանը, ասում է՝ այս ամենը եղել է: Այս ամենը կշարունակվի, քանզի անգամ ոչ հեռավոր անցյալը միայն հատվածաբար կա մեր հիշողության մեջ: Մեր քաղաքական միտքը չի զարգանում նոր իրականության, նոր արժեքների պայմաններում՝ Ստեղծագործ խոսքի, կենդանի գործողության նկատմամբ դրսեւորելով իր սնանկությունը:

Այդպես էլ պիտի լիներ. այլ կերպ չէր կարող լինել, քանի որ նոր խոսքն ու նոր միտքը ձեւավորվում են մեկնաբանության ու յուրացման անընդհատ փոխանցման մեջ: Սա գիտակից փոխանցում է, իր նշանակությամբ՝ վճռական աշխատանք, երբ քննադատական վերլուծություններն ու հետազոտությունները դառնում են պարտադիր կենսական տարր: Ահա այս «կենսական տարրը» հայ իրականության մեջ բացակայել է երեկ, բացակայում է այսօր:

Ես ուրախ եմ «Շաղիկ» հրատարակչության «Հայ քաղաքական միտք» մատենաշարի հրատարակումով: Մատենաշարը շրջանառության մեջ կդնի հասարակությանն անծանոթ կամ քիչ ծանոթ գործեր: Թվում է՝ դրանք կդառնան նաեւ քաղաքական մտքի պատմության դասընթացի սկզբնաղբյուրներ՝ շիտակ, փաստարկված ու լայնախոհ մի դասընթացի, որը կառաջարկվի ավագ դպրոցի սովորողին եւ բուհի ուսանողին.

1. Լեո, Թյուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր Ա, Փարիզ, 1934:
2. Լեո, Թյուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր Բ, Փարիզ, 1934:
3. Եղիշէ Ա. Քահ. Գեղամեանց, Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, Բագու, 1919:
4. Հ. Քաջազնունի, Հայ յեղափոխական դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923:

Այս հայտնի մարդկանց՝ դարասկզբի անցքերի ականատեսների ու քաղաքական գործիչների հասուն տարիքում գրված գործերն ինչո՞ւ այդպես էլ չհիշեցին ո՛չ պետական, ո՛չ բազմակուսակցական եւ ո՛չ էլ անկախ հրատարակչությունները: Լուրջ հարց է:

Որքան էլ մեզանից դուրս մեղավոր փնտրենք, փախչենք իրականությունից, յուրաքանչյուրս այսօր պարտադրված է հստակ պատասխանել երեք հարցի.

1. Որո՞նք են մեր շարունակվող փորձանքների իրական պատճառները:

2. Ի՞նչ ենք ուզում, այսօր ի՞նչն է հնարավոր մեր անձնական-ընտանեկան, հասարակական-պետական կյանքում:
3. Ո՞րն է ստեղծված կացության ելքը, որո՞նք են քաղաքացու, հասարակության, իշխանության մարմինների առաջնահերթ անհրաժեշտ քայլերը:

Փորձենք անչար լինել, մի քիչ փիլիսոփա, անկեղծ ու փաստարկված: Մեր քննադատական մտքին ապավինենք:

Ավարտելով պիտի տառ-տառ կրկնեմ Կարլ Յասպերսին (փիլիսոփա, հետպատերազմյան Գերմանիայի հոգևոր առաջնորդ). «Իրականում ոչ ոք չի տիրապետում վերջնական բացարձակ ճշմարտությանը:

Ճշմարիտը փնտրելու համար պետք է միշտ պատրաստ լինել հաղորդակցության եւ այդպիսի պատրաստակամություն սպասել ուրիշից: Նրա հետ, ով իրապես ձգտում է ճշմարտիտին, հետևաբար հաղորդակցությանը, կարելի է լրիվ բացահայտ խոսել ամեն ինչի մասին (ինքը նույնպես կարող է խոսել ամեն ինչի մասին), բայց այնպես, որ չվիրավորես եւ միեւնույն ժամանակ չխնայես նրան, ով իրականում ուզում է լսել: Ազատության պայմաններում ճշմարիտի համար պայքարը պայքար է սիրո համար»:

## Մենք հասել ենք այն սահմանին, որ պիտի կանգնենք

Չեզ չի՞ թվում, հայրենակիցներ, որ, այո, 1988 թվականի փետրվարին համազգային պոռթկում-ոգևորությամբ լծվեցինք մի խնդրի, որի լուծումն այսօր այն տեսքով, որ փնտրում ենք, մեր ուժերից վեր է եւ սպառնում է, թող որ քիչ, բայց մեր ունեցածի կորուստով: Մենք չենք մեղավորը, ոչ էլ մեր շնորհքի, վճռականության ու նվիրումի պակասը: Ոչ: Տարածքային-ազգային հարցերի լուծման այսօրվա քաղաքակիրթ անվիճելի օրենքներով աշխարհը պարտադրում է մեզ իրենը: Հրաշքով պահպանելով մեզ որպես ապրող ազգ, միավորված ազգերի ընկերակցությունում որպես անկախ պետություն ապրելու դարերի մեր երազանքը իրագործած՝ կարո՞ղ ենք չընդունել այդ ընկերակցության կեցության պայմանները, հանդգնել-պարտադրել մեծ աշխարհին խաղի մեր կանոնները... Հանդգնելը հանդգնենք, բայց ի՞նչ հույսով-ելքով: Որ նորի՞ց հայտնվենք խաղից դուրս...

Ի՞նչ ենք ի վերջո պատասխանելու մենք որպես այս ազգի մտավորականներ ու քաղաքական գործիչներ: Շարունակելո՞ւ ենք խաբել ինքներս մեզ ու ժողովրդին՝ հանգստացնելով մեր վրդովված խղճմտանքն ու տանելով ժողովրդին նոր ընդհարումների: Շարունակելո՞ւ ենք գնալ նույն ճանապարհով, նույն կարգախոսներով թե՛ քաղաքական խառնաժողովներում, թե՛ խորհրդարաններում, թե՛ մամուլի էջերում, թե՛ երիտասարդության շրջանում... միշտ ատելություն բորբոքելով, թունավորելով հասարակական առողջ միտքը, փորձելով գրավել ավելի մեծ բազմություններ, թշնամացնելով մեզ աշխարհի հետ, արհամարհելով իրատեսությունն ու անհերքելի իրողությունները:

Սա ասել եմ 1990 թ. հունվարին Ռիգայում, երբ սովետական զորքով նվաճված Բաքվի դեպքերով խանդավառ՝ մենք վիժեցրինք բանակցությունները Ադրբեջանի ազգային ճակատի հետ: Բարձրաձայն ասել եմ Կապանում, Եղեգնաձորում, Երևանում, երբ մեր

հաղթանակներից գինովցած, թվում էր ուր որ է, հաղթական Բաքու ենք մտնելու: Ասել եմ վերջերս Արտաշատում, անկեղծ ու ամբողջական:

Արցախում ես չեմ կրվել, ավելին՝ այս չորս տարիների ընթացքում Արցախում չեմ եղել: Ես արցախյան շարժման մասնակից հարյուրհազարից մեկն եմ ամենահամեստ իմ ներդրումով: Արցախում կռվողը, Արցախում զոհվողը իմ եղբայրն է, ինձանից արժանավորը, եւ դու, անձնուրաց եղբայր, ինձ ճիշտ կհասկանաս: Ոչ, իզուր չէ քո հերոսական կռիվը, դու արցախցի քո հայրենակցին թև եղար, չորս տարի ահեղ թշնամուց պաշտպանեցիր Արցախը, անհերքելի ապացուցեցիր աշխարհին ու Ադրբեջանին, որ ոչ ոք չի կարող կռվի ուժով նվաճել մեր հայրենի տունը: Սա անպայման ապացուցել էր պետք, թե չէ կրկնվելու էին Սումգայիթն ու Բաքուն, Գետաշենն ու Ազատը: *Ակնհայտ է, որ արցախցուն բռնի ուժով չես տեղահանի: Մնում է ապրել:*

*Արագ հաղթահարելով վախի ծնունդ ատելությունը թուրքի նկատմամբ, խաղաղ կարգավորելով Ադրբեջանի հետ մեր վեճը, շուտափույթ հաշտվելով ադրբեջանցու հետ, ազատվելով վրացու կերպարի ընկալման նախապաշարումներից, զուլալելով մեր պատմական հիշողությունը՝ քաղաքակիրթ արժեքներով լծվելու ենք մեզ այնքան սազող ստեղծագործական աշխատանքին՝ դրսևորելով մեզ բնորոշ լավագույն գծերը՝ աշխատասիրություն, կենսունակություն, աստվածատուր շնորհք: Թե չէ չարանալու ենք արդարադատ ազգի կերպարով՝ մահապարտի կռիվ տալով մեր հարևանների հետ, շարժելով աշխարհի գութը: Մաքառման դատապարտված կնվեք, ճանճի պես, կկորչենք... Կորյուն Սարդարյանի հիշեցումը տեղին է՝ եթե չսթափվենք այսօր, դարը կփակենք այնպես, ինչպես սկսել ենք: Բայց ուզում եմ, որ ճիշտ լինի նաև այն, որ մենք հասել ենք սահմանին, որից կարող է սկսվել մեր նոր վերելքը:*

*22.04.1992թ.*

*«Հայաստանի Հանրապետություն»*

## Ցանկությունների ժամանակը, գործելու ժամանակը

Ըստ իր ոչ ամենաջերմեռանդ երկրպագուների գնահատականի՝ հանդուգն է, խորաթափանց, նպատակին հասնելու համար բոլոր միջոցներն օգտագործող, անվիճելի է տաղանդավոր, բայց կախված իրադրությունից, նաև խուսանավող: Ամերիկացիները, որոնց մենք սովորույթ ենք դարձրել տեղի-անտեղի վկայակոչել, հարգանքով կվերաբերվեին մարդկային այս հատկանիշներին, քանզի անհատական նախաձեռնության պաշտամունքն անքննելի է, ինչպես կրոնական դոգման՝ «ինքն իրեն արարող մարդ»:

Մենք տոտալիտար համակարգի խստավարժությունն անցածներս, աշխատելով հատկապես այդ անհատական նախաձեռնությունը ճնշելու ուղղությամբ, երկար տարիներ շարունակ արժեքավորել ենք բոլորովին հակադիր արժանիքներ. ինտելիգենտ փափկամորթություն, մանկայնություն ու անգործնականություն: Միջակությունը դարձել էր չափանիշ և ինքնապաշտպանության փիլիսոփայության համբավ ձեռք բերել:

Արժե՞ արդյոք զարմանալ, որ առանց քրեական օրենսգրքի հետ հակամարտության, իրենք իրենց օգնող մարդիկ շատ ու շատ պակասեցին: Բայց և այնպես... Հիշում եմ դեռ 4 տարի սրանից առաջ, ծանոթանալով Երևանի թիվ 183, այժմ արդեն ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրին, ինձ ապշեցրեց տնօրեն Աշոտ Բլեյանի ոչ «մերոնքականությունը», հաստատակամությունն ու կենսունակությունը: Այն ժամանակ նա հատկապես հաստատակամ ու կենսունակ թվաց մշտապես պետբյուջետային փշրանքներ մուրացող կրթական համակարգի ավանդական որբության ֆոնի վրա: Բնական է նա, ով կարողանում էր ավելի հյութեղ պատառ պոկել, արժանանում էր համընդհանուր անբարյացակամության: Նրան այսօր էլ կարող են չսիրել, վերագրել հարկի-անհարկի մեղադրանքներ ու նախատինքներ: Բայց փաստը մնում է փաստ, որ նրա հետ չեն վիճում նույնիսկ ամենամոլի հակառակորդները: Բանն այն է, որ ընդամենը մի քանի տարվա ընթացքում Բլեյանը կարողացավ քաղաքի ծայրամասային սովորական

դպրոցը վերածել առանձնահատուկ, ինքնակառավարվող ուսումնական հաստատության, որը ներառում է բոլոր աստիճանները մանկապարտեզից մինչև ավագ դպրոց, հագեցած տեխնիկայի վերջին խոսքով, որն իր մասնաճյուղերն ունի Աշտարակում, Եղեգնաձորում, ունի հեքիաթային ջերմոցային տնտեսություն, գիտահետազոտական լաբորատորիա, ուր մշակվում են դասագրքեր ու ուսումնական ծրագրեր, եւ այլ բաներ, որոնց մասին անհարմար է գրել մեր այսօրվա դպրոցի համընդհանուր աղքատության պայմաններում: Բայց նա այդ արել է՝ չունենալով ՀՀ Գերագույն Խորհրդի պատգամավորի կարգավիճակ եւ փայփայված չլինելով իշխանության ներկայացուցիչների բարեկամությամբ:

Գերմարդ մանկավարժության մե՞ջ: Դժվար թե: Կարևորը սեփական սկզբունքների, միջոցների մշտական փնտրտուքն է: Եթե նրանք կան, կուլ կգնան չար լեզուները:

Ահա նրանց սկզբունքների մասին է մեր հարցազրույցը տնօրեն, ՀՀ ԳԽ պատգամավոր, ՀՀՇ վարչության անդամ Աշոտ Բլեյանի հետ:

*- Ասում են Դուք «վերմակի պոչը դեպի Ձեզ եք քաշում»: Ձեզ եք վերցնում ամենաշատն ու լավը, դրանով իսկ խոչընդոտում մյուսներին, ովքեր նույնպես ցանկանում են կրթական համակարգում որևէ փոփոխություն մտցնել:*

- Գիտեք ինչ, ես չեմ անհանգստանում, երբ որևէ մեկն ինձ չի սիրում: Ես ընդհանրապես այդ մասին չեմ մտածում: Չնայած պարզորոշ գիտակցում եմ այդ հետևանքը ծնող պատճառները:
  Ահա ասում են Բլեյանն ունի ջերմոց, տպարան, եւ այս, եւ այն, բայց դրանք որպես բարի քեռու նվերներ չեն, որ կան: Ես եմ դրանք ստեղծել: Իսկ սա, համաձայնեք, այլ բան է: Երբ 1985թ. ես դիմեցի քաղխորհուրդ, թե խնդրում եմ դպրոցին հատկացնել 1հա քարքարոտ հողային տարածք, քաղխորհրդի նախկին նախագահը զարմացած հարցրեց. «Ի՞նչ ես անելու այդ հողը»: Իսկ մենք այնտեղ 3 հազար քառ.մ տարածքով հրաշալի ջերմոց կառուցեցինք: Քարշ տվեցինք հումքն ու տնկիները, աշխատում էինք օր ու գիշեր: Ո՞վ կամ ի՞նչն էր խանգարում, ասենք, հարևան դպրոցի տնօրենին:

Պարզապես նա չէր ուզում, իսկ ես ուզում էի: Նրան պետք չէր, ինձ պետք էր: Ահա թե որն է տարբերությունը:

*- Շատ լավ, ջերմոցը, արհեստանոցները դուք ինքներդ կառուցեցիք, բայց, օրինակ, համակարգիչների համար դրամական միջոցներ դուք ինչ-որ տեղից վերցնում էիք, չէ՞:*

- Դրա՞մ. միշտ էլ դրամի խնդիրն ամենադժվարն է: Դրամը, սովորաբար, գտնում, վերցնում, հայթայթում են: Մի խոսքով, անհրաժեշտ է կարգին չարչարվել եւ, միևնույն ժամանակ, ամենաքիչը լինել Աշոտ Բլեյան: Այո, ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, որ ինձ այդ դրամը տալիս էին, իսկ ուրիշին՝ ոչ, եւ ոչ նրա համար, որ ես ունեմ որոշակի կարգավիճակ, երևի արժանացել եմ դրան: Չէ՞ որ իմ վերցրած միջոցները չեն դարձել ավելորդ ճոխություններ եւ շքեղ առանձնասենյակ, այլ վերածվում են այն ստեղծագործական միջավայրին, ուր ծնվում է նոր դպրոցն իր բովանդակությամբ՝ դասագրքերով եւ ուսումնական ծրագրերով:
Լավ, հանենք իմ պատգամավորության մեկուկես տարին, չնայած հենց այդ ընթացքում մեզ մոտ ամենաքիչը նյութական ձեռքբերումներն են եղել: Մինչ այդ ես մի սովորական դպրոցի սովորական տնօրեն էի. մեկը հարյուրներից: Ես չունեի ազդեցիկ բարեկամներ եւ ամուր ձեռք «վերևներում»: Բայց ինձ հաջողվում էր իմ համակարգում գտնել համախոհներ, համոզել նրանց, ոգևորել իմ գաղափարով: Ուրեմն ինչո՞ւ ես պետք է մյուսների հետ նույն պայմաններում լինեմ, եթե ես ընդունակ եմ ավելիին, նշանակում է՝ ավելին էլ պիտի ստանամ:

Ինձ ոչինչ չի տրվել, ամեն ինչ ես ինքս եմ վերցրել: Ասենք, ամբողջ քաղաքի համար կա երկու համակարգչային դասարան: Ո՞ւմ պիտի տրվի: Նրան, ում պետք է: Եվ ես դրանք կստանամ, որովհետև ամեն ինչ կանեմ այն ձեռքբերելու համար: Ինձ պետք է համակարգչային հրատարակչական համակար՞գ, կփորձեմ բոլոր ճանապարհները՝ նախագահ, Հ. Գալստյան, Վեհափառ Կաթողիկոս, Լուիզ-Սիմոն Մանուկյան, Գարեգին սրբազան... մի դուռ կբացվի:

*- Ինձ միշտ զարմացրել է, թե ձեզ ինչպե՞ս հաջողվեց պահպանել դպրոցը 1988-89 թթ.: Հիշում եմ, այն ժամանակ երիտասարդ լրագրողիս նյութը պարզապես «կտրեցին», որովհետև այն այդ նույն դպրոցի մասին էր, որ համարվում էր «այլախոհների բույն»: Դուք այն ժամանակ էլ կարողանում էիք իշխող կառույցների հետ լեզու գտնել:*

- Մենք ուժեղ էինք ու դիմացանք: Չնայած արդեն կային դպրոցը փակելու, ինձ կուսակցության շարքերից վտարելու որոշման նախագծեր: Հնարավոր է օգնեց նաև այն, որ ռեպրեսիաները մշտական չէին. շարժման վերելքի դեպքում մեզ հանգիստ էին թողնում, երբ սկսվում էր անկումը, ուժեղանում էին հետապնդումները:
*- Լավ, Դուք կենսունակ, գործնական, նպատակասլաց մարդ եք, ընդունակ կրթական համակարգում մեծ փոփոխություններ մտցնելու, ինչո՞ւ այն ժամանակ թողեցիք քաղխորհրդի գործադիր կոմիտեի փոխնախագահի պաշտոնը, դրա հետ մեկտեղ դպրոցի բարեփոխման ծրագրերն ու պլանները:*

- Ինձ արդեն բազմիցս վիճակվել է պատասխանել լրագրողների այդ հարցին: Եվ տարօրինակ է, որ այդ հարցին այդքան մեծ նշանակություն է տրվում: Ուրեմն այսպես. ես պրոֆեսիոնալ մանկավարժ եմ, սա իմ կրթական հաստատությունն է, իմ գործը, և ես այստեղ առավելագույնս օգտակար եւ լիարժեք եմ զգում: Ես համոզվեցի, որ կրթության պետական կառավարումը այնքան խարխլված, այնքան քայքայված է ու այլափոխված, որ տեղաշարժ հնարավոր է ամբողջ համակարգը փոփոխելով միայն: Սա, ցավոք, շատ դանդաղ է ընթանում, որովհետև հարկ է փոխել ողջ կրթական համակարգն իր բովանդակությամբ: Ես սպասել չեմ կարող: Ես ունեմ հստակ ծրագիր, որը անավարտ մնաց իմ դպրոցից հեռանալու պատճառով: Վերադարձս թելադրված էր գործը մինչև վերջ հասցնելու ցանկությամբ: Ի դեպ, պիտի ասեմ, որ վերջին կես տարվա ընթացքում ինձ հաջողվեց անել ավելին, քան նախորդ երկու տարիների ընթացքում: Մենք աշխատում ենք մի քանի տասնյակ ծրագրերի, դասագրքերի ստեղծման ուղղությամբ, որոնք հրատարակվում եւ հրատարակվելու են մեր կրթական համալիրի հրատարակչությունում: Գլխավորը ես մեկընդմիշտ պարզեցի ինձ համար. կրթության բարեփոխումը նոր բովանդակության ստեղծումն է, իսկ նոր բովանդակությունը նոր կրթական

հայեցակարգն է, նոր արժեքների համակարգը, նոր ծրագրերն ու դասագրքերը, նոր մոտեցումները, որոնք կծնվեն հենց դպրոցում՝ նրա ստեղծագործական լաբորատորիայում: Տեսեք, թե ինչ է ստացվում. մեր կրթական հաստատությունը շատ ավելի պտղաբեր է, գործունյա եւ արդյունավետ, քան այնպիսի հզոր կառույցը, ինչպիսին լուսնախարարությունն է:

*- Դուք ուսուցիչ եք եւ միաժամանակ քաղաքական գործիչ: Քաղաքականություն եւ բարոյականություն. չկա՞ արդյոք սկզբունքային հակասություն այս երկու ձևերի համատեղման մեջ:*

- Դուք ուզում եք իմանալ, թե ես ավելի շատ քաղաքական գործի՞չ եմ, թե՞ ուսուցիչ: Ես շատ լավ կզգայի քաղաքական գործչի վիճակում, եթե ուսուցիչ չլինեի: Մեկը մյուսին, իհարկե, խանգարում է, բայց միայն ժամանակի իմաստով, որը միշտ չի հերիքում: Քաղաքականությունը նույնպես մասնագիտություն է, ինչպես մանկավարժությունը, եւ նրան պետք է տրվել ամբողջությամբ: Ինչ վերաբերում է հակասություններին, այդպիսիք չկան: Ի դեպ, անբարոյական կարող է լինել ոչ միայն քաղաքականությունը, այլև մանկավարժությունը:
Մեզանից յուրաքանչյուրը պետք է իրեն հարց տա՝ ի՞նչ է նշանակում արցախյան խնդրի լուծում՝ Արցախի ազատ-անկախ հանրապետությո՞ւն: Հրաշալի է: Բայց մտածել այսօր ստեղծել այդպիսի ազատ-անկախ Արցախ պետություն առանց պատերազմի, միջազգային միջնորդությունների օժանդակությամբ, նշանակում է մոռանալ մեր պատմության բոլոր դասերը: Ոչ ոք եւ երբեք տարածքային ոչ մի հարց չի լուծել առանց պատերազմի: Կարո՞ղ է արդյոք Հայաստանը պատերազմել առանց վառելանյութի, սննդամթերքի, խարխլված տնտեսությամբ: Նրա ստրատեգիական պահեստավորումը կհերիքի մեկ-երկու շաբաթ, ոչ ավելի: Մի խոսքով, պատերազմի մեջ ներքաշվելը այսօր մեզ համար վերջնական պարտության տանող արկածախնդրություն է: Եվ խորհրդարանը, և նախագահը պարտավոր են վերջապես կողմնորոշվել այս հարցում եւ այդ մասին պարզ ու հստակ ասել ժողովրդին: Քանզի ցանկությունների ժամանակը սպառվել է: Անցած 4 տարիները բավարար էին հասկանալու համար, որ քաղաքականության մեջ ցանկանալը

այնքան էլ անմեղ բան չէ: Հիմա ժամանակը չէ պատասխանատվության հսկայական բեռը ծանրացնելու միևնույն կազմակերպության մեկ-երկու անդամի ուսերին: Եթե դա արվում է այդ մարդկանց պատժելու կամ փաստի առաջ կանգնեցնելու նպատակով, ապա հատուցելու ենք սարսափելի գնով: Նրանք իրականում կրում են պատասխանատվություն, այդ թվում հավանաբար եւ ես, ու պիտի պատասխան տան յուրաքանչյուրն իր չափով: Բայց այդ հետո: Կա այսօրվա խնդիր:

*- Ձեր կարծիքը կիսո՞ւմ են ՀՀՇ վարչության անդամները:*

- Ոչ բոլորը, բայց շատերն են հակված. այն սթափ հայացք է իրողությանը:
*- Իսկ այդ չի՞ նշանակում ՀՀՇ կազմակերպության քաղաքականության վախճան:*

- Չեմ կարծում: Նախ եւ առաջ, ոչ թե շարժումն է Ղարաբաղի շարժառիթը, այլ Ղարաբաղը՝ շարժման: Իսկ եթե ուշադիր վերլուծենք շարժման զարգացման պատմությունը, ապա կհամոզվենք, որ դեռ 1988 թ-ից շարժումն իր գերխնդիրն էր դարձրել հայկական պետականության վերականգնումը: Եվ մեծ թվով մարդիկ սկսեցին գիտակցել, որ արցախյան հակամարտության խնդրի լուծումը, սկզբնական ձևակերպմամբ, հակասում է այդ գերխնդրին: Մեզ անհրաժեշտ են տնտեսության մեջ շոշափելի վերափոխումներ. ժողովրդական դժգոհություններն առանց այն էլ հասնում են իրենց գագաթնակետին, իսկ վերափոխումներ հնարավոր են, եթե միայն Արցախի հարցում հստակություն լինի: Իսկ առայժմ մեզանում իրարամերժ հարցադրումներ են նետվում, ընկնում ենք մի ծայրահեղությունից մյուսը:

19. 05.1992 թ.

“Республика Армении”

## Անապահով հողը հայրենիք լինել չի կարող

Մեր բազմաքանակ ազատ, անկախ ու միացյալ պահանջատիրությամբ լցված մամուլի էջերում ծանոթ ու անծանոթ համազգային գործիչների քաղաքական վերլուծություններն ու կանխատեսումներն եմ կարդում... *Ինձ օտար եմ զգում, խորթ ու ավելորդ: Պարզ գրեք հասկանանք ի՞նչ եք ասում: Զուլալե՛ք գալիքը տեսնենք: Թողե՛ք մտքի ճախրանքն ու վետվետումներ: «Եթեների» ու «հնարավորի» լեզվական բարդություններից ազատե՛ք մեզ սովորական մահկանացուներիս: Այս հողի իրական տերը ես եմ: Դուք պարզապես ձեր մասնագիտությունն եք դարձրել քաղաքական գործը, պինդ բռնել եք մամուլ ու եթեր, շատ եք թվում ու ժողովուրդ եք երևում: Այդպես էլ ներկայանում եք: Բայց ես ձեզ մեկիկ-մեկիկ հաշվել եմ, ձեր քանակը հաստատ գիտեմ՝ հարյուրից թե ավելի եք, ապա հազարից պակաս ու պակաս:*

Մեր խռովված, մեր չարչարված հոգին ու միտքն ինչո՞ւ եք շարունակ պղտորում: Թումանյանով մեծացած սերունդ ենք՝ կարճ ասեք, պարզ ու խաղաղ:

*Կգնայի: Կճարեի մի հայտնի-անհայտ մոլորակ... Բայց այս մի քանի սար ու ձոր Հայաստանի պաշտամունքն ունեմ: Այս 30 հազար քառակուսի կիլոմետր հողակտորի մշակն եմ ու այս տան պահապան շունը:*

Մեր զավակները կներեն մեզ տնտեսական մեծ ու փոքր անգրագիտությունների, քաղաքական վրիպակների ու ձախողումների համար: Կուղղեն, կճշտեն մեր արածը՝ ներված կլինենք: *Բայց հողի կորստի ու հայրենիքում ապրող մարդու կորստի համար ներում չի եղել ու չի լինի: Մենք չենք ներել մեր հայրերին, ու մեզ չեն ների մեր զավակները, որովհետև այսպիսի կորուստը, որպես կանոն, անդառնալի է:* Սերունդների անփոփոխ պատգամը՝ անկորուստ փոխանցել հայրենի հողն ու հողի վրա ապրող մարդուն, պարտադրում է աչքի լույսի պես պահպանել քեզ ժառանգվածը ու դողալ ունեցածի վրա: *Բոլոր ժամանակներում մեծ Աշխարհի հզոր իրողությունները հայրենյաց հողի պահպանման իրենց կերպն են թելադրում: Հողի ու հողի վրա ապրող մարդու կորուստը չունի «մեղմացուցիչ դեպք հանցանաց»: Հանցագործ են և՛ ազգային*

*ոգևորությունը, և՛ հաջորդ սերնդի գործն անելու ամբարանքը, և՛ ազգային ազնիվ-մաքուր ռոմանտիզմը: Միայն արդյունքով են մեր արածը չափելու: Սա որպես ելակետ:*

Քրիստոսի ծնունդից չեմ սկսելու: *Իմ ապրած-տեսած ժամանակից* ասեմ: Յոթանասուն տարի խորհրդային պետական կառույցը, ինքնավարությունների տեսքով կամ առանց դրա, հզոր պարիսպների մեջ վանդակեց հայոց Հայրենիքը և հայոց գաղութները: Կորուստները թողնենք:

Մեզ փոխանցվել է սա՝ 30 հազար քառակուսի կմ տարածքով, 3.5 միլիոն ժողովրդով Հայաստան-պետություն ու հայոց հոծ գաղթօջախներ՝ անկախ Ադրբեջանում ու Վրաստանում, «խորհրդային» ոչ կենսունակ սփյուռք՝ նախկին միության մյուս հանրապետություններում: Այսպիսի պատեհություն, այսպիսի աստեղային ժամ հայոց պետություն ստեղծելու, հավաք-ապահով-ամբողջական լինելու՝ չի հիշում մեր պատմությունը: *Իմ սերնդի անելիքն այնքա՜ն պարզ է, այնքա՜ն վեհ ու իրական: Մեծ Աշխարհի կողմից մեր ճանաչված 30 հազար քառակուսի կիլոմետրի վրա կայացնել անկախ ու զորացող Հայաստան պետություն՝ մեր մահմեդական հարևան Ադրբեջանից ու մեր քրիստոնյա հարևան Վրաստանից ունենալով երաշխիքներ իրենց անկախ պետության հայ քաղաքացիների կյանքի ապահովության վերաբերյալ: Հաշտ մեր անմիջական հարևանների՝ Ադրբեջանի, Թուրքիայի, Վրաստանի ու Իրանի հետ՝ գոնե այսօր առանց հողային պահանջ-կռվի, առանց նախապաշարումների վստահ հարաբերվենք մահմեդական աշխարհի հետ, չոգևորվենք քրիստոնյա Եվրոպայով, մեծ Ռուսիային անմնացորդ չտրվենք՝ տնտեսական-ստեղծարար աշխատանքում հաղթելու պատրաստ, արտադրելով-առուծախով Անդրկովկասը նվաճելու վճռականությամբ: Սրանից որի՞ հետ համաձայն չեք: Ո՞նց չողջունես Հայոց համազգային շարժում քաղաքական կազմակերպությանը, որը գալիս էր ձևակերպելու ազգային-պետական այս առաջնահերթ խնդիրները, կազմակերպելու այդ խնդիրների լուծումը: Այո, ես «մոլի» ՀՀՇ-ական եմ, բայց այսքանով:* Ազգային-ազատագրական պայքարի ցեցով ինչպե՞ս խոցվեց-վարակվեց բոլշևիկյան թմբիրից նոր-նոր արթնացող-զուլալվող ժողովուրդը: Ինչպե՞ս ՀՀՇ-ն չկարողացավ կանխել ազգային-ազատագրական պայքարի մոլեգնող թափը՝ պարզ տեսնելով, որ այն սպառնում է նոր-նոր ձևավորվող պետականության

խարխլմամբ ու Արցախի հայաթափմամբ: Արցախյան շարժման մեր ազգային-հերոսական ռոմանտիզմի առաջին փուլի (1988-90թթ.) պոռթկումը ինչպե՞ս չենք կարողանում հաղթահարել, ինչո՞ւ հայոց նոր պետականության կերտման երդումով ժողովրդից իշխանություն ստացած ՀՀՇ-ն հանրապետության իր նախագահով ու խորհրդարանով, միասնական չէ, որ հաշվի նստենք մեզանից դուրս գոյություն ունեցող աշխարհի ու նրա հզոր իրողությունների հետ, որ հաղթենք մեր տեսակին: Ինչո՞ւ մեր սերունդը չի աշակերտում ոչ միայն իր հայրերի պատմությանը, այլև տակավին խուլ ու կույր ենք ահա արդեն 5 տարի շարունակվող մեր մաքառման դասերի նկատմամբ: Մեր ազգովի ձգտումը՝ գտնվել Տիեզերքի ուշադրության կենտրոնում, մի՞թե չենք հաղթահարելու: Հողը ու հողի վրա ապրող մեր հայրենակիցներին կորստյան տանող, կործանարար «Մահ կամ ազատություն»-ից ե՞րբ ենք հրաժարվելու: Իմ հանձնելիքը չէ: Մեր ժամանակակի պատմագրին թողնեմ այս հարց-խնդիրների քննումը: Իմ գիտացածն ասեմ:

Ճիշտ է՝ Ադրբեջանի հետ պատերազմում մեր ունեցած 30 հազար քառակուսի կմ-ից ոչ մի քառակուսի մետր հող, ի վերջո, չենք կորցնի: Աշխարհն իր կառույցներով ու սահմանած իրողություններով թույլ չի տա: Բայց կավերենք (ավերում ենք) մեր շենները, կվերածենք դրանք ավերակների, կլքենք տասնյակ տարիների տքնանքով ստեղծած մեր շենները, արյունաքամ կանենք մեր տնտեսությունը, մեր վայրի իրականությամբ կանջրպետենք մեզ քաղաքակրթությունից, ճարպիկն ու ընդունակը կգաղթեն հայրենիքից: Ո՞վ է հաշվում: Ո՞ւմ մեղադրես Ազգային մազոխիզմի դրսևորումից ուրիշ ոչինչ: Անապահով հողը հայրենիք լինել չի կարող: Իսկ Ադրբեջանից, ի վերջո, ոչ մի թիզ հող չենք կարող խլել, կսպանենք, կավերենք, դարերի թշնամությունը կթարմացնենք: Ինչո՞ւ ենք մեզ մխիթարելու Ադրբեջանին հասցված վնասի մեծությամբ: Այսօր արդեն հպարտանում ենք:

Արցախը Ադրբեջան պետության մասն է եղել յոթանասուն տարի: ՄԱԿ-ի կողմից ճանաչված է որպես նրա օրինական տարածք, ու այսօր այդպես էլ կմնա... *Մեր սերնդի*

*այսօրվա խնդիրը չէ: Մեր սերնդի այսօրվա հնարավոր-լուծելիք, պարտադիր-լինելիք խնդիրն արցախցու իր հողում ապրելու իրավունքի ապահովումն է: Չի կարելի այս խնդիրը նույնացնել անկախ Արցախ պետության հաստատման հետ:*

Ամեն անգամ գրիչ վերցնելիս ես ամաչում եմ, որ անտաղանդ կրկնելու եմ բոլորին հայտնի ու պարզ, քրեստոմատիական իրողություններ: Մեր ժողովրդի դաժան պատմության դասերը վկա, աշխարհում վերջին քառասուն տարում կատարվածը տե՛ս, ՄԱԿ-ի և Եվրախորհրդի բոլոր փաստաթղթերն անընդհատ թերթի՛ր: Մենք բացառիկ ենք նաև մեր ազգակործան հոխորտացող ռոմանտիզմով:

Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն: Եվ ո՞րն է խաղաղության գինը: Սրանք անցած հարցադրումներ են: Ադրբեջանի հետ պատերազմը ցանկացել, թե մերժել ենք, նախապատրաստվա՞ծ ենք եղել, թե անպատրաստ, պատերազմը հայտարարված է եղել, թե թաքուն, երեկվա ու այսօրվա իրողություն է: Այսօր Հայաստանը պատերազմում է Ադրբեջանի հետ ոչ միայն Արցախում, այլև Ադրբեջանին սահմանամերձ Հայաստանի 12 շրջաններում և 4 սահմանամերձ քաղաքներում: Ի՞նչ է, պատերազմը պոզով-պոչով է լինո՞ւմ: Հաշվե՞ք հայ-ադրբեջանական առճակատման ողջ ընթացքում երկու կողմից էլ քանի՞ խաղաղ բնակիչ է զոհվել, տուն է ավերվել ու չեն դատարկվել, քանի՞ զինվոր է զոհվել ու քանի՞ միլիարդ ռուբլու միջոցներ են ծախսվել զենք-զինամթերքի վրա, ինչպիսի՞ զինական տեխնիկա է օգտագործվել: Ազգային-ազատագրական թեժացող պատերազմն իր թվացյալ-ժամանակավոր հաղթանակներով Արցախի վերջնական հաղթանակի ճանապարհը չէ, այլ Արցախի հայաթափման հավաստի ելքը: Արցախցու զինական ինքնապաշտպանությունը պիտի ուղեկցի նրան իր հողում ապրելու իրավունքի հաստատման ընթացքում:

Ինձ ուղղված դաշնակցական ընկերների հայհոյանքը կմեղմվի ՀՀՇ-ական պարոնների քաղցր հորդորներով ու իմ անկեղծ-մաքուր, բայց անտեղի մտքերով չի կազմալուծի Արցախի ինքնապաշտպանությունը: Սակայն մեր աչքի առաջ երևանյան

հրապարակներում գետաշենցի մեր հայրենակցին փոխարինեց շահումյանցին, հետո Մարտակերտի շինականը: Այսօր Ստեփանակերտի բնակիչն է կլոր ընդմիշտ, թե համազգային միասնության, ազգային ուժեղ բանակի ու համաժողովրդական զորեղ պայքարի չթուլացող կոչերի ուղեկցությամբ օրը ցերեկով չդատարկվի Արցախը: Մխիթարե՞նք մեզ, թե Արցախից եկողը կռվող տղամարդը չէ, այլ առավելապես կին ու ծեր, վիրավոր ու երեխա: Բայց եթե Արցախում կռվող զինվորն իր տունն ու այդ տանն ապրող իր կնոջն ու քրոջը, մեծ ու պստիկին չի պաշտպանում, ի՞նչ կռիվ է դա. կամ շատ շուտով ինչի՞ կվերածվի, հանուն ինչի՞... Տղամարդկային թասիբի՞, իր զոհված ընկերոջ, թե նահատակ նախնու վրեժը լուծող ֆիդայո՞ւ կռիվ... Այս կռիվը հայտնի վերջ ունի՝ հերոսական պարտություն ու բարոյական հաղթանակ:

Կներեք, սա իմ կռիվը չէ: Իմ նախնիների հերոսական պարտությունների ու բարոյական հաղթանակների կենսագրությունն իմ ամոթն է, իմ տառապանքն ու խոցը, որ խեղճ-թուլացրել է ինձ... Իսկ արդյունքում՝ հողի կորուստ ու գաղթական ազգ, ողբի երգեր ու անարդար աշխարհ, հարևան ելուզակներ ու անիծված աշխարհագրական դիրք... Իմ նախնիների բոլոր պարտություններն իմ պարտքերն են ու իմ Ուսուցիչը: Ինձ պարտվել չի կարելի: Դուք ինձ մեղադրում եք, թե իմ պարտվողական տրամադրությամբ թուլացնում եմ պաշտպանությունը, հանձնում Արցախը: Կհամաձայնեի ու կլռեի, եթե այս տարվա ապրիլ ամսին, նվաճելով ամբողջ Արցախը, Շուշվա մատույցների մոտ կանգնեինք, մեր առաջարկներով հնարավորություն ընձեռեինք Ադրբեջանին պատերազմից դուրս գալու տարբերակներ ընտրել, թե Շուշվա ու Լաչինի գրավմամբ չտապալեինք իրանական միջնորդությունն ու պատերազմական գոտին չընդարձակեինք՝ ներառելով Կրասնոսելսկը, Կապանը, Մեղրին... Կախարդական շրջան է՝ մեկ-երկու ռազմական հաջողություններից ոգևորվում ենք ու նշանակետ ենք ընտրում Աղդամը կամ Նախիջևանը:

Այսօրվա Ռուսաստանն Ադրբեջանի՞, թե՞ Հայաստանի հարազատ «ավագ եղբայրն» է: Պատմականորեն հարևանության դատապարտված երկու ժողովուրդներ սրա՞ համար

են իրենց լավագույն զավակների արյունը հեղում՝ իրենց հեթանոս հավատարմության չվերջացող ապացույցներ բերելով: Չե՞նք կարող դրկիցություն անել առանց Ռուսաստանի: Թե՞ ապավինելով մեր ուժերին, «Մահ կամ ազատություն» «պոռալով», միայն զենքով, օտարի զենքով ենք ուզում արցախցուն փրկություն բերել, ազգային-ազատագրական պայքար ենք սկսել Արցախի հողը «ադրբեջանցի ելուզակներից» մաքրելու համար: Անկախ-ազատ Հայաստան ու անկախ-ազատ Արցախ. ուզում են միանան: Սա՞ է մեր հնգամյա պայքարի՝ «արցախյան պայքարի վերջնական հաղթանակի» հայտնագործած տարբերակը: Երկու դեպքում էլ մենք պատերազմելու ենք այսօրվա մեծ Աշխարհի ու այդ Աշխարհի այսօրվա հզոր իրողությունների դեմ՝ արձանագրելով «խաղից դուրս վիճակը»: *Պատատապարտված պարտության զգացումը (խոստովանես ինքդ քեզ, թե ոչ) բարոյալքում է ու քայքայում: Այդպես էլ կա:* Մենք մեկ էինք, մենք միասնական էինք մինչև իսկական պատերազմը, երբ արդար-անմեղ պահանջատեր էինք, արդարությունը ֆիդայական կռվով պաշտպանելու վճռականությամբ: Իսկ երբ այն ռոմանտիկ ֆիդայական կռվից վերածվեց իսկական պատերազմի... Մեզ չեն փրկի անգամ Արգենտինան ու Վենեսուելան, ո՛չ ՀՀՇ-ի քաղաքական երկվությունը, ո՛չ ՀՅԴ-ի հոխորտացող կեցվածքը, ո՛չ արտաքին գործոց նախարարի մեծկալիֆորնիանոց ինքնավստահությունը (շփոթո՞ւմ է Հայաստանն ու Ամերիկան):

Շատ լավ: Մենք չենք սկսել պատերազմը, մենք զոհ ենք, ու ագրեսորն Ադրբեջանն է: Ադրբեջանը կարող էր կամենալ այս պատերազմը, կարող էր և չխուսափել պատերազմից՝ փորձելով հայաթափել Արցախը, փակել հարցը բոլոր ժամանակների համար: Մենք մի ելք ունեինք, մի հնար, մի հաստատուն նպատակ՝ չպատերազմել: Ասում եք անհնար էր: Չեմ վիճում, քանզի իրողություն է, որ պատերազմում ենք... Լավ ենք պատերազմում, հերոս ժողովուրդ ունենք, մի կասկածեք ու մի մեղադրեք, տվեք ենք պայքարին լավագույնը, հնարավորը... Հարցի միջազգայնացմամբ զզվեցրինք աշխարհին, կորցրինք արժանապատիվ կեցվածք ու գոյ: Պատերա՞զմ, չէ խաղաղություն: Հիմա *խաղաղության ժամն է: Պարտադրված-դատապարտված խաղաղության ելակետն*

*այն է, որ մենք ադրբեջանցիների կողքին չենք ապրում, այլ իրար մեջ:* Ապարդյուն են սահմաններն ուղղելու մեր բոլոր ջանքերը, սահմանի ողջ երկայնքով «չինական պարիսպ» չես քաշի: Առանց Ադրբեջանի հետ լավ դրկիցության լիարժեք չենք ապրի: Ափսոս, որ մեր պաշտոնական ու ոչ պաշտոնական մտավորականությունը պարտադրված կամ իրեն կերակրող «ինտերնացիոնալիզմը» չփոխարինեց սովորական հումանիզմով, քաղաքակիրթ մարդու բարյացակամությամբ ու հանդուրժողականությամբ... Թումանյանի օրինական հոգևորդի չեղանք: Երբ պատանու՝ իմ աշակերտի աչքերով, ականջներով, մտքով ու սրտով եմ ընկալում այս հինգ տարվա ընթացքում ադրբեջանցու հասցեին մեր թափած թույնն ու հայհոյանքը, մաղձն ու ատելությունը, սարսռում եմ՝ ամենակարճ ժամանակամիջոցում կկարողանա՞նք այդ կեղտն ու թույնից մաքրել մեզ ու մեր սերունդը, որ երկու դրկիցներ կարողանանք իրար օգնելով լիարժեք ապրել... *Հաստատակամորեն սպիտակ դրոշ պարզող, ապրող մարդկանց ձեռքեր են պետք: Մեզ ներս ու դրսից մաքրվել է պետք, խաղաղվել ու զուլալվել:*

*Զինվորը պիտի կռվի:* Մենք՝ մեծ ու փոքր իշխանավորներս, մտավորական ու աշխատավոր, պատերազմի ու խաղաղության միջև ընկած վիհը պիտի խիզախենք հաղթահարել, պիտի օգնենք իրարու մի երկար ժամանակաշրջան խաղաղության վարքով, հոգեբանությամբ ու տրամաբանությամբ ապրել ու գործել: Փոքր նախաձեռնությունները, տեղային պայմանավորվածությունները ոչինչ չեն տալու, եթե երկու ժողովուրդներով «պատերազմի ռեժիմը» չփոխենք խաղաղ կարգավորման ռեժիմով: Հայաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների խաղաղ կարգավորման ռեժիմի անցնելիս միջնորդներ պետք չեն, մասնակից պետություններ են պետք: Հայաստանի իշխանությունները, զորացնելով Արցախի ռազմական ինքնապաշտպանությունը, պիտի Արցախի խնդրի կարգավորման տարբերակներ առաջարկեն Ադրբեջանին բոլոր տարբերակներում ճանաչելով-հարգելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Արցախը միջազգային իրավունքի սուբյեկտ ներկայացնելու, Ադրբեջան-Արցախ երկխոսությունն աշխատեցնելու ջանքերը կենսունակ չեն, ավելին՝ ենթադրում են զինական ուժի պարտադրանք Ադրբեջանին:

Միջնորդներ պետք չեն, ոչ էլ որևէ տեսակի խաղաղարար ուժեր: Հայաստանն ու Ադրբեջանը այդքան իմաստնություն ու վճռականություն պիտի դրսևորեն Արցախի համար ընդունելի լուծում գտնելու համար:

Արցախը պիտի գիտակցի, որ 1988 թ. կարգավիճակին վերադառնալն էլ նվաճում է, քաղաքակիրթ աշխարհի իրողությունների ու օրենքների նվաճում: Ո՞վ է մեղավոր, որ թանկ ենք վճարել:

Մենք մեզ պիտի հաշիվ տանք, որ ժողովրդին ու պետությունը տարանք փորձության՝ շփոթելով-խառնելով քաղաքական արկածախնդրությունը դատապարտվածության հետ: Ի՞նչ եք առաջարկում. մի կողմից արյունաքամ լինել՝ փակելով տնտեսությունը սնող բոլոր երակները, ավելի կատարյալ դարձնելով շրջափակումն աշխարհից, մյուս կողմից՝ միջազգայնացնել-տիեզերականացնել մեր վեճը մեր հարևանի հետ՝ մաշելով փարիզների, նյույորքների ու վիեննաների ճամփաները: Ռուսից աղերսած զենքով շարունակել կռվել նույն զենքով զինված մեր հարևանի դեմ, շարունակ «պոռալ» անկախ ու ազատ Հայաստան՝ աննախադեպ աստիճանի ստրկացնելով Հայաստանը, հայաթափելով Արցախն աշխարհից: Մինչև ե՞րբ: Ի՞նչ հույսով: Շարունակելո՞ւ ենք «ցնցել Ադրբեջանը» մեր ռազմական հաջողություններով՝ ապակայունացնելով ադրբեջանցիների քաղաքական կյանքը, հրճվելով, որ Վեզիրովին հաջորդում է Մութալիբովը, Մութալիբովին՝ Մամեդովը, սրան՝ Էլչիբեյը: Ո՞վ է հաջորդը: Այսպես մինչև Ադրբեջանը նախագահի ճիշտ ընտրություն կատարի՞: Այսպես շարունակեցինք՝ ռուսը գալու է:

Ամենատարբեր խմբերով ու վայրերում, տարբեր միջնորդների օգնությամբ Ադրբեջանի ու Հայաստանի միջև սկսված հանդիպումները հուսադրող են, ողջույնի և աջակցության արժանի: Մնում է բարեկրթորեն ազատվել բոլոր տեսակի միջնորդներից: Կոնֆլիկտի խաղաղ կարգավորման առաջին փուլում Արցախը չպիտի պնդի բանակցություններին իր մասնակցության մասին: Ադրբեջանն ու Հայաստանը, կարգավորելով

համագործակցության փլված կամուրջները, խաղաղեցնելով իրենց սահմանները, կարողանան հուսալի երաշխիքներ ստեղծել Ադրբեջանի կազմում Արցախի ապահով գոյության համար:

Թույլ տվեք մի անգամ ևս հիշեցնել. հասարակարգից հասարակարգ անցնելու, մեծ պետության փլուզման ու անկախ Հայաստանի կայացման բախտորոշ փուլում մենք պահանջ ունեցանք պառլամենտական Հայաստանի Հանրապետության նախագահի, որը նոր ձևավորվող դեմոկրատա-թողտվության մթնոլորտում անհրաժեշտ պետական վճիռները չթաղելու վճռականությամբ օժտված լինի: Ես մեր այսօրվա նախագահի ընտրողներից մեկն եմ՝ միլիոնից մեկը: Ես ներհանրապետական կյանքին առնչվող ցանկացած մեծ ու փոքր բացթողում, սայթաքում ու անկատարություն կներեմ հանրապետության նախագահին: Ամեն ինչ շտկելի է: Նախագահին չի ներվի Արցախը արյունաքամելով հայաթափելը, Արցախը հայաթափող չհայտարարված, բայց թեժացող պատերազմը:

*02.10.92*

*«Հայաստանի Հանրապետություն»*

## Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահներին, խորհրդարաններին, կառավարություններին, քաղաքական գործիչներին, մտավորականներին

Ղարաբաղյան խնդրի կարգավորումն անվերջ երկարում է: Հակամարտության կարգավորումը զինական ուժի միջոցով երկուստեք մարդկային եւ նյութական ահագնացող կորուստներ է բերում, խորացնում Ադրբեջան-Հայաստան ռազմական առճակատումը: Երկու ժողովուրդների համար բախտորոշ այս ժամանակաշրջանում, փոխանակ միմյանց սատար կանգնելու, փոխանակ Անկախ ժողովրդավարական պետություն ստեղծելու մեր ժողովուրդների վաղեմի երազանքին աջակցելու, փոխանակ մեր տարածաշրջանում տնտեսական-քաղաքական կյանքի ամենախորին դժվարությունները համատեղ դիմագրավելու եւ հաղթահարելու, փոխանակ մեր ողջ կարողությամբ խաղաղ-բարգավաճ աշխատանքի լծվելու մենք մեր նոր-նոր զորացող պետությունների դեռեւս թույլ հնարավորությունները ամբողջությամբ ուղղել ենք իրար դեմ ավերելով մի քանի սերունդների տասնյակ տարիների քրտինքով, անչափ դժվարությամբ ստեղծածը: Կորուստներն այնքան ողբերգական են, որ չեն կարող չստիպել հակամարտող կողմերին ավելի եւ ավելի համարձակ հրաժարվել հարցի զինական ուժի միջոցով լուծումից եւ անհրաժեշտ վճռականությամբ ու եռանդով լծվել հակամարտության խաղաղ կարգավորմանը: Խաղաղ կարգավորման միջնորդական առաքելության համար արժանին մատուցելով Իրանին, Ռուսաստանին, Ղազախստանին, Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդի բոլոր պետություններին այսօր մենք տեսնում ենք, որ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ծրագիրը իրական բովանդակություն կստանա հայ-ադրբեջանական երկկողմ հարաբերություններում դառնալով հակամարտության մասնակից բոլոր կողմերի համար ընդունելի եւ իրագործելի:

Պատմականորեն դատապարտված ոչ միայն իրար կողքի, այլեւ իրար մեջ ապրելու, այս չհայտարարված, բայց օրեցօր խորացող, անիմաստ-անհեռանկար, ինքնակործան մաքառումը պիտի ստիպի մեզ վերջապես դրսեւորել այնքան անհրաժեշտ

իմաստնություն ու խիզախություն հաղթահարելու երկու ժողովուրդներին բաժանող թշնամության, թյուրիմացության ու վայրենության վիհը: Մենք չենք դիմում հայ ու ադրբեջանցի ժողովուրդներին, որովհետեւ մեր ժողովուրդները չեն, որ խորացրին-խճճեցին այս վեճը մինչեւ իսկական պատերազմ, այլ իշխանավոր ու քաղաքական գործիչ, մտավորական ու կայսերապաշտ ուժերը: Հայ եւ ադրբեջանցի ժողովուրդներն այսօր ավելի, քան երբեւէ, խաղաղ եւ ստեղծագործ կյանքի կենսական պահանջ ունեն եւ մեզ հաշտեցման ուղին են մատնանշում: Մենք դիմում ենք Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին, խորհրդարաններին ու կառավարություններին, բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպություններին ու մտավորական անձանց:

Կոչ ենք անում անմիջական, ուղղակի, երկկողմ բանակցությունների, առանց որեւէ նախապայմանի, առանց որեւէ միջնորդի Երեւանում, Բաքվում թե այլուր: Մենք համոզված ենք, որ մերժելով-փոխարինելով օտարության ու թշնամության մթնոլորտը փոխըմբռնման ու վստահության մթնոլորտով կօգնենք մեր երկու անկախ պետությունների ղեկավարներին արագ խաղաղեցնելու հայ-ադրբեջանական սահմանները, գտնելու Լեռնային Ղարաբաղի հայ եւ ադրբեջանցի բնակիչների խաղաղ-ստեղծարար աշխատանքի ու հայրենի տանն ապահով ապրելու հնարավորություններ դառնալով Լեռնային Ղարաբաղի բնակիչների ապահով կյանքի երաշխավորները:

Պատերազմի ժամը երկարեց ցավալիորեն. ժամն է խաղաղ գործակցության: Չէ՞ որ մենք ունենք դրա համար անհրաժեշտ բարի կամք, իմաստնություն, համարձակություն ու համբերություն:

*Աշոտ Բլեյան*

*Ստորագրել են Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի պատգամավորներ*

*Ռաֆայել Պապայան, Ռաֆիկ Մխիթարյան, Խաչիկ Ստամբոլցյան, Սլավիկ Հայրապետյան, Գագիկ Աբրահամյան, Թամարա Ալոյան, Վալերի Միրզոյան, Տեր-Հուսիկ*

*Լազարյան, Օհան Պետրոսյան, Արկադի Սարգսյան, Վազգեն Պողոսյան, Հենզել Առաքելյան, Յոլակ Խաչատրյան, Վրեժ Մնացականյան, Գ. Ա. Մխիթարյան, Ս. Փ. Մելքոնյան, Ա. Ե. Մանուկյան, Գ. Սուքիասյան, Թ. Ա. Թադևոսյան, Վ. Զուռնաչյան, Մ. Արամյան, Յ. Հարությունյան, Կամո Վարդանյան, Խաչատուր Բեզիրջյան, Գևորգ Բաղդասարյան, Վաչագան Հարոյան, Բագրատ Ասատրյան, Էդուարդ Զաղինյան, Ավետ Գրիգորյան, Սուրիկ Ամարյան, Մարտին Շահրամանյան, Համլետ Դալլաքյան, Եղիա Շամշյան, Սլավիկ Ամիրյան, Ռաֆիկ Վարդանյան, Նարինե Բալայան, Անահիտ Գևորգյան, Ռուբիկ Թադևոսյան, Յուրիկ Ալավերդյան, Արամայիս Սահակյան, Հայկ Չախոյան, Յուրի Մովսիսյան, Յուրի Վարդանյան, Ալեքսանյան, Գևորգ Մանուկյան, Ռադիկ Սարուխանյան, Արամ Մանուկյան, Հակոբ Սանասարյան, Աշոտ Ոսկանյան, (անընթեռնելի) Հ. 127, 147, ընտրատարածքներից ընտրված պատգամավորներ:*

*13.10.1992թ.*

## Երբ շատ է դժվար, փափախդ դիր առաջդ ու խորհիր

Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահներին, խորհրդարաններին, կառավարություններին, քաղաքական գործիչներին, մտավորականներին ուղղված ուղերձին, հուսով եմ, ծանոթ եք: Որպես այդ ուղերձի նախաձեռնող՝ նպատակահարմար գտա այն անձամբ հանձնել հասցեատերերին: Հայաստանում դա արեցի մեկ օրում՝ հանրապետության նախագահը հարգալից ընդունեց-ողջունեց, նույն վերաբերմունքին արժանացրեց ՀՀ ԳԽ փոխնախագահ Արա Սահակյանը: Ուղերձն Ադրբեջանի իշխանություններին հանձնելու համար ստիպված էի օգտագործել ուսումնական տարում ինձ հասնող արձակուրդի մի կտորը: Նստեցի Երևան-Մոսկվա ինքնաթիռը ու նոյեմբերի 1-ին հայտնվեցի ռուսաց մայրաքաղաքում: Այցելեցի Մոսկվայում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանին: Կես խոսքից իրար հասկացանք: Մյուս օրը Ֆելիքս Մամիկոնյանն ու ինձ շատ սիրալիր ընդունեց Մոսկվայում Ադրբեջանի Հանրապետության ներկայացուցիչ Հիքմեթ Հաջի Զադեն: Հիքմեթի հետ ողջագուրվեցինք որպես հին բարեկամներ. 1990 թ. հունվար ամսին Ռիգայում մերձբալթյան հանրապետությունների ազգային ճակատների նախաձեռնությամբ կայացած հանդիպման ժամանակ, ՀՀՇ վարչությունը ներկայացնում էի նաև ես, իսկ Հիքմեթն ու Ադրբեջանում այսօր շատ հայտնի ու հարգի քաղաքական ու տնտեսական գործիչ Սաբիթ Բաղիրովը ներկայացնում էին ժողովրդական ճակատը: Հիմնավոր-անկեղծ զրույց ունեցանք: Սրտանց ափսոսացինք հայ-ադրբեջանական առճակատման խորացման, ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման անցած տարիներին չօգտագործված բոլոր հնարավորությունների համար: Հիքմեթն ու ներկայացուցչության իր ընկերները ողջունեցին մեր պատգամավորների նախաձեռնությունը, խոստացան իրենց աջակցությունը: Մյուս օրը մեր հանդիպումը շարունակվեց: Ադրբեջանի իշխանություններն ստացել էին և ուղերձը, և մեր նախորդ օրվա խոսակցության արձանագրությունը: Պաշտոնական հրավերով Ադրբեջան ժամանելու և ամենատարբեր հանդիպումներ ունենալու մասին իմ խնդրանքին Ադրբեջանի իշխանությունները խոստացել էին պատասխանել ավելի ուշ: Որոշեցի չսպասել և գործել որպես մասնավոր անձ, իմ անունից: Ես գիտեմ այն հարցը, թե ինչ

լիազորություններով եմ մեկնել Ադրբեջան, ում հանձնարարությունն եմ կատարում, Երևանում անընդհատ մլմլալու են, շուռումուռ են տալու, ենթադրելու... Ավելի արդյունավետ ու վստահ գործելու համար կուզեի ունենալ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության, հանրապետության նախագահի կամ կառավարության, վերջապես ՀՀՇ վարչության որոշումն ու որոշակի լիազորությունները: Օգտակարությունը մեծ կլիներ: Ավա՜ղ: Սրան էլ պիտի սովորենք: Մեր հողը կոխել են, չէ՞, տասնյակ սենատոր-կոնգրեսմեններ ու Լորդերի պալատի անդամներ ներկայացնելով իրենց, հետապնդելով իրենց տեսակետը: Ինչո՞ւ չի կարող մասնավոր այցով ՀՀ երեսփոխանը գնալ Ադրբեջան, շարադրել-զարգացնել իր տեսակետը հայ-ադրբեջանական հարաբերությունների հետագա զարգացման մասին: Հայաստանն ու Ադրբեջանը դեռ չհայտարարված պատերազմի մեջ են: Կարող եմ ու պարտավոր եմ վճռեցի ես ու գնեցի ինքնաթիռի տոմս: Նոյեմբերի հնգին կեսգիշերին, ես Ադրբեջանի Հանրապետության մայրաքաղաքում էի: Տեղավորվեցի «Ադրբեջան» հյուրանոցի 15-րդ հարկում, կառավարության շենքի դեմ-դիմաց, Կասպից ծովի անմիջական հարևանությամբ:

Մոսկվայում Ֆելիքս Մամիկոնյանն ինձ ծանոթացրել էր լիտվացի քաղաքագետ Էյմեն Բելսկիտիսին, որն ինձ խորհուրդ էր տվել սկզբում հանդիպել Ադրբեջանի մեջլիսի անդամ, գրող Ռուստամ Խանլի Օղլի Սաբիրին: Այդպես էլ արեցի: Շատ արագ մտերմացանք:

Որքան հնարավոր է ամբողջական պատկերացում կազմելու, շատ թվով մարդկանց հետ հանդիպելու իմ մեծ ցանկությունը ես ստիպված էի խցկել-տեղավորել իմ ունեցած չորս օրվա մեջ: Թվարկեմ հանդիպում-առանձնազրույցները Ադրբեջանի ԳԽ փոխնախագահներ Թամերլան Կարաևի ու Աֆիադին Ջալիլովի, ԳԽ-ի նախագահի գլխավոր խորհրդական Ռասիմ Մուսաբեկովի, արտգործնախարար Թոֆիկ Կասիմովի, պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիևի, ներքին գործոց նախարար Իսկանդար Համիդովի, կրթության նախարար Ֆիրուդին Ջալիլովի ու նրա տեղակալի, «Քաղաքացիական համերաշխություն» կուսակցության նախագահ, միլի մեջլիսի անդամ

Սաբիր Ռուստամ խանլու, ԳԽ արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ դոկտոր Նամիգ Ախունդովի, ԳԽ հանձնաժողովների նախագահներ Վագիֆ Կասիմովի, Ռամիզ Ֆատալիևի և Իուսիֆ Վեքիլովի, «Ազգային անկախություն» կուսակցության նախագահ Էթիբար Մամեդովի, միլի մեջլիսի մի քանի անդամների, մեկ-երկու թղթակիցների, ԳԽ բաժինների մեծ թվով աշխատակիցների, փոխգնդապետ Սադիկովի, պարզապես բաքվեցիների ու զինծառայողների հետ: Այցելել եմ Բաքվի կենտրոնական դպրոցներից թիվ 46-ը, հանդիպել դպրոցի ուսուցիչների հետ: Վաղը ես հրաժեշտ եմ տալիս Բաքվին ու իմ պնդմամբ՝ Գյանջա-Ղազախով վերադառնում եմ Երևան: Ամենաքիչը աղմուկ եմ ուզում, քաղաքական շոու: Հոր, ուսուցչի, համայնքի ներկայացուցչի, այս մի քանի սար ու ձոր Հայաստան երկրի զավակի գիտակցումը, պատասխանատվությունը իմ աղջիկների, իմ սաների ու ծնողների, Հայաստան պետության ճակատագրի նկատմամբ են գլխիցս ենթադրում են շիտակություն եւ խիզախություն, բայց եւ խելամտություն, սթափություն, որովհետև սիրելով կարելի է սպանել եւ շատ ուզենալով կորցնել: Իսկ մեր զավակները արդյունքով են չափելու մեր արածն ու չեն ներելու:

Բաքվում եղել էի քսան տարի առաջ ու շատ բռուցիկ: Ես տեսա խաղաղ-մաքուր, գիշերները լուսավոր, օրվա բոլոր պահերին հմայիչ ու բարեկեցիկ Բաքու: Երեք օրվա ընթացքում ոչ մի կրակոց չլսեցի, զինված խմբեր ու մարդիկ փողոցներում չկան, միլիցիոներներն աչք չեն ծակում, ոչ մի երթ ու մարդկային հոծ բազմություն չտեսա: Մտահոգված են մարդիկ, բայց ոչ լարված, լծված իրենց ամենօրյա հոգսերին: Քաղաքական պայքարն ու կյանքը փողոցներից վերջնականապես տեղափոխվել է պետական հաստատություններ: Նախագահ Էլչիբեյը նոր է վերադարձել մեծ խմբով Թուրքիա կատարած այցից ու հերթական հրամանագիրն է ստորագրել մի խումբ քաղաքացիների Ադրբեջանի Հանրապետության հերոսի կոչում շնորհելու մասին: Ադրբեջանի ԳԽ նախագահ Իսա Ղամբարովի ղեկավարությամբ մեծ շուքով «Մուսավաթ» կուսակցության հիմնադիր համագումարն է ընթանում: Հեյդար Ալիևը ավարտեց «Ենի Ադրբեջան» կուսակցության կազմկոմիտեի հավաքը Բաքվում, եռօրյա նիստն ավարտեց Ադրբեջանի միլի մեջլիսը...

Զբոսաշրջիկների հոսքն ու աշխարհագրությունը մեծանում է. օտարերկրացին իրեն վստահ ու ազատ է զգում: Իմ բոլոր հանդիպումների ու շփումների ընթացքում ես տեսա պետական մտածողության, քաղաքակրթության ու բարեկրթության առողջ ծիլեր: Իսկ իմ սենյակից նայելով ծովին, Բաքվի նավահանգստում կանգնած բեռնատար ու մարդատար բազում նավերին, իմ առաջ փռված, բարգավաճած ու բազմամիլիոն քաղաքին, կառավարական շենքին ես Ադրբեջանի հզորությունից սարսափեցի ու զարմացա՝ ո՞նց ենք կարողանում թերագնահատել այդպիսի ամուր պետությունը:

Հայաստան պետության, Լեռնային Ղարաբաղի ու հայերի նկատմամբ չարություն չզգացի: Հասկանում-ընդունում են անխուսափելիությունը իրար կողք, իրար մեջ ու իրար օգնելով ապրելու, շեշտում են լավ դրկիցներ լինելու իրենց պատրաստակամությունը: Բոլորն ինձ շիտակ ասում են՝ դուք արեցիք, ինչո՞ւ արեցիք, ի՞նչ շահեցիք, ո՞րն է ձեր հույսը: Ասում են Զորի Բալայաններին ու բոլոր այն մտավորականներին, ովքեր թույնով ու ատելությամբ բորբոքել են մարդկանց կրքերը, երկու վաղուցվա դրկիցների իրար հանդեպ հանել:

Ժողովրդական կրթության նախարար, մեջլիսի անդամ Ֆիրուդին Ջալիլովը ձևակերպեց այսպես. «Իմ էությամբ ես «պանադրբեջանիզմի» կողմնակից եմ, բայց ես միշտ ինձ հարց եմ տալիս, թե իմ սերը իմ ազգի հանդեպ ի՞նչ է տալիս իմ ժողովրդին իրականում, ի՞նչ օգուտ է ստանում ժողովուրդն իմ սիրուց...»:

Շատ ծանր են տանում յուրաքանչյուր ադրբեջանցու զոհվելու փաստը: Չեն հաշտվում դրա հետ: Ոչ մի դժվարություն չեն տեսնում պատերազմի դադարեցման մեջ՝ «Միայն թե հայերով հրաժարվեք տարածքային պահանջներից: Ձեզ՝ ձեր Հայաստանը, մեզ՝ մեր Ադրբեջանը»: Շատ ուշադիր հետևում են դեպքերի զարգացմանը Ռուսաստանում, Վրաստանում և Հյուսիսային Կովկասում: Մեր ուղերձից առանձնացնում էին այդ տողերը փոխանակ իրար օգնելու, մասին պատրաստվելու, միասին դիմագրավելու հնարավոր քաղաքական շրջադարձերը՝ ինչո՞վ ենք զբաղված: Ատելությունը ռուսական

մեծապետականության նկատմամբ չեն թաքցնում, նաև վախը... Հայ իշխանավորներին չեն հավատում, չեն վստահում. «Միշտ հայավարի, բանակցությունների ժամանակ ինչ-որ բան թաքցնում եք, ինչ-որ բան ստորագրում, հետո դրժում ձեր խոսքը, հետո նենգաբար նախահարձակ լինում»: Բերում են մեծ ու փոքր բազում օրինակներ: Իրենց Էլչիբեյի նկատմամբ չթաքցրած ու մեր Լևոնի նկատմամբ թաքցրած հարգանք ունեն: Գտնում են, որ նրանք կարող են պայմանավորվել:

Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի հրաժարականը ողջունում են ու շատ հետաքրքրված են նոր նախարարի թեկնածությամբ: Շատ մտահոգված են Հայաստանի պաշտպանության նոր նախարարի նշանակմամբ ու Հայաստանում անցկացվող աշնանային զինակոչով: Չեն հասկանում, չեն ընկալում 1988 թվին հայերի ընդվզումը Ադրբեջանում ու բողոքում են. մի՞թե վատ էին հայերն ապրում Բաքվում կամ Լեռնային Ղարաբաղում, մի՞թե ադրբեջանցին ավելի լավ էր ապրում, խորհրդային տարածքում ուրիշ որտե՞ղ էին ստեղծված առավել նպաստավոր պայմաններ հայերի համար... Ինչո՞ւ հայերդ ձեր քրտինքով ստեղծած բարգավաճած տունը ձեր իսկ ձեռքով քանդեցիք: Շատ մեծ տարակույսներ ունեն մեր հանրապետության ներքաղաքական կայունության մասին: Կասկածում են, որ Հայաստանի իշխանությունները, թուլացած մեր կուսակցական զզվոտոցից, ընդունակ են վճռական քայլերի: Դաշնակցությունը չի թողնի: Հպարտ են իրենց քաղաքական կյանքի կայունությամբ՝ ինչպես կորոշի Էլչիբեյը, այդպես էլ կլինի: Շատ զգուշանում են, որ հայերը, հնարավոր քաղաքական կարգավորման որոշումներից հետո, իրենց պայմանադրժությամբ, կապակայունացնեն Ադրբեջանի հետագա հաջողությունների գլխավոր երաշխիքը՝ ներքաղաքական կայունությունը: Ես տեսա Ադրբեջանի ներքաղաքական կյանքի կայունության, ամրապնդվող պետականության բազում նախանձելի ապացույցներ:

Ոչ մի պետական գործիչ, ինձ հանդիպած ոչ մի ադրբեջանցի մտքով իսկ չի անցկացնում, որ մեկ թիզ հող կարող են նվաճել իր պետությունից: Պետական-հասարակական անսասան միակարծիքություն կա. խորշելով-ատելով շարունակվող պատերազմը՝ ամեն ինչ կտան հանուն իրենց օրինական մի կտոր հողի: Սրտանց ծիծաղում էին, երբ խոսք էր բացվում Հայաստանում շատ տարածված Զանգեզուրի նկատմամբ ադրբեջանական

նկրտումների մասին... Հատու էր պատասխանը. Լեռնային Ղարաբաղը մեր, Զանգեզուրը ձեր օրինական հողն է, եկեք ճանաչենք ու հարգենք միմյանց ունեցածը... Հակառակ դեպքում... Պաշտպանության նախարարը հատ-հատ արտասանեց. «Մենք չենք հավատում այս պատերազմի անհրաժեշտությանը, մենք չենք ուզում մեր հարևանների հետ պատերազմ՝ բոլոր օրենքներով: Բայց մի փորձեք մեր ուժն ու հնարավորությունները: Դրանք հաստատ ավելին են, քան Հայաստանինը»: Շարունակ շեշտում են Լեռնային Ղարաբաղի ու նրա ժողովրդի իր հողում ապահով ապրելու իրավունքի օրինականությունը: Չեն կասկածում, որ իրավասու են եւ կարող են լինել այդ իրավունքի ապահովողները: Չեն խուսափում ապահովության ցանկացած երաշխիքների քննարկումից, պատրաստակամ են անցնել այդ երաշխիքների իրագործմանը, եթե Ղարաբաղի ժողովուրդը հարգում է Ադրբեջանի սահմանադրությունը, ընդունում Ադրբեջանի քաղաքացիությունը... Չեն ներում Ղարաբաղի հարցի միջազգայնացումը, սփյուռքահայության միջամտությունը Հայաստանի ներքին գործերին կործանարար են համարում մեր հանրապետության համար: Հայերի հետ ուղիղ-անմիջական երկխոսության առաջարկի հեղինակ իրենց են համարում, պատրաստական են դրան և այսօր: Իմ այցը նրանց չշփոթեցրեց (հայերը նոր խա՞ղ են հորինել), բայց հենց առաջին օրվանից ընդունեցին ու պահեցին ասպետավարի, իրենց բնորոշ հյուրասիրությամբ: Իմ անկաշառ ուղղամտությունը, համոզմունքն ու մեր վեճը խաղաղ կարգավորելու, լավ դրկիցներ լինելու պատրաստակամությունը կոտրում էին կասկածի ու օտարության սառույցը...

Զայրացնեմ-չարացնեմ մեր ընթերցողներին: Բենզինի լիտրն արժե յոթ ռուբլի, իսկ լավորակ հացի (ազատ դրված էր խանութում) մեկ կիլոգրամը՝ 8 ռուբլի: Դեռ դրամական փոխհատուցում էլ ստանում են: Ամեն ամիս շատ մատչելի գներով ստանում են կարագի, շաքարի ու մսի երաշխավորված նորմերը: Քի՞չ է՝ Կոմերցիոն խանութներում սննդամթերքի գները մեր նախանձը կշարժեն: Փալաս-փուլուսը, արտասահմանի գիզի-բիզին ավելի թանկ է, քան Երևանում: Մանաթը՝ ազգային դրամը, գործում է ռուբլուն հավասար: Բաքվեցիք խնայողություններ անում են ետ գցելով մանաթը... Սառն ու տաք

ջուր բնակարաններում միշտ կա. գազն ու էլեկտրական հոսանքը մատակարարվում են անխափան։

Մեջլիսի անդամ, Ադրբեջանի արտաքին գործոց նախարար Թոֆիկ Կասիմովի հետ տևական ու հիմնավոր զրույց ունեցանք։ Արտգործնախարարը իմ մեջ տպավորվեց որպես անկախ, լայնախոհ ու բարեկիրթ մտավորական։ Նոր էր վերադարձել Թուրքիայից։ Նա խոստացավ մերձավորարևելյան երկրներով տասնօրյա շրջագայությունից հետո պաշտոնապես ներկայացնել ղարաբաղյան հակամարտության կարգավորման իր ամբողջական ծրագիրը։ Խոստացավ ընդարձակ հոդվածով պաշտպանել իր տեսակետը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում։

Թոֆիկ Կասիմով. «Պատերազմը բարբարոսություն է իրար ոչնչացնելու համար։ Ողջունում եմ հայ-ադրբեջանական մեր հակամարտությունը երկուսով որպես երկու անկախ պետություններ լուծելու մասին Ձեր հարցադրումը։ Ռուսաստանը չի կարող լինել խաղաղության նախաձեռնող։ Եկեք ճանաչենք միմյանց, եկեք դադարեցնենք արյունահեղությունը, թող մարդիկ չմեռնեն, իսկ հետո կբանակցենք թեկնուզ մի տարի։ Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը թողնենք Մինսկի միջազգային խորհրդաժողովին»։

Թամերլան Կարաևը և նրա խորհրդական Ռասիմ Մուսաբեկովը հիանալի քաղաքական զուգընկեր են թվում, ծանրակշիռ ու ճշգրիտ։ Մենք հանգիստ զրուցում ենք ճաշի սեղանի շուրջ։ Թամերլանը, ուշադիր լսելով իր խորհրդականի մեկնաբանությունները, դնում է վերջակետեր. «Ամենագլխավորը զինական ինչ-որ հաջողություններով չոգևորվելն է։ Այդպիսի հաջողության գայթակղության վերջնական հաղթահարումը մեր հետագա հաջողությունների կարևորագույն պայմանն է»։

Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունները պիտի համատեղ նպաստեն խաղաղության շարժման ու նրա կուսակցության ստեղծմանը։ Մենք ողջունում ենք

վճռական անձնական քայլ անելու Ձեր խիզախ նախաձեռնությունը։ 56 պատգամավորի ուղերձը հիմնավոր սկիզբ է»։

Ադրբեջանի պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիևը ինձ ընդունեց շատ պատրաստակամ։ Խորհրդային Միության 7-րդ բանակի հրամանատարության ու շտաբի շենքում տեղավորված Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հզոր, ձևավորված բանակ ունեցողի տպավորություն գործեց։ Մոսկվայում կրթություն ստացած ու պաշտպանած, նախկինում դասախոսական-հետազոտական աշխատանք կատարած դոցենտ-ինժեներն այս տարվա մարտի 12-ից ստանձնել է պաշտպանության նախարարի պարտականությունները։ Մեր զրույցը ստացվեց։ Իր երազանքի անկախ Ադրբեջան պետության անվտանգության պահապանի պատասխանատու դերը գիտակցող նախարարը գիտի գլխավորը՝ միշտ չէ, որ անհաշվենկատ միլիտարիզացիան ու անհեռանկար պատերազմը անվտանգության ապահովման միջոցներ են. «Պետք է ղարաբաղյան խնդիրը ուղիղ դնել եւ նոր միայն լծվել այդ խնդրի լուծմանը։ Ադրբեջանի զինված բոլոր ուժերը լրիվ ենթարկվում են ինձ. ես կարող եմ հրամայել կանգնե՛ք, եւ նրանք կկանգնեն։ Ես հավատարիմ եմ իմ պետությանն ու հնազանդ նրա պրեզիդենտին։ Թող պրեզիդենտը վճռի։ Ես պատրաստ եմ։ Իմ զինված ուժերը պատրաստ են»։

Ադրբեջանի ազգային անկախության կուսակցության լիդեր, Էլչիբեյի սան, 37-ամյա Էթիբար Մամեդովը Ադրբեջանի քաղաքական կյանքի ամենավառ դեմքերից է։ Նախապաշարումներով ենք ապրում, անգետ ենք մեր հարևանի ներքաղաքական կյանքին, թերագնահատում ենք նրա հնարավորությունները։ Անհերքելի վկան Էթիբար Մամեդովը։ Այն, ինչ լսել ու կարդացել էի, ուշ մի եզր չունի իրականության հետ։ Ես, որ ներսից գիտեմ մեր քաղաքական կյանքը, մոտիկից գիտեմ մեր բոլոր կուսակցությունների ղեկավարներին, Էթիբարի գոյության համար անթաքույց նախանձեցի Ադրբեջանին։

«Իմ կուսակցությունն այսօրվա իշխանությունների նկատմամբ ընդդիմության մեջ է։ Բայց մեր անմիջական հարևանների հետ խաղաղ ապրելու հարցում լրիվ համերաշխ ենք Ադրբեջանի այսօրվա իշխանությունների հետ։ Հայերն են նախաձեռնողը այս խառնաշփոթի, եւ իրենք պիտի վճռական քայլեր անեն վիճակի խաղաղ կարգավորման համար։ Ես համոզված չեմ, որ Հայաստանի այսօրվա իշխանությունները տիրապետում են հանրապետության այսօրվա իրավիճակին։ Իսկ Լեռնային Ղարաբաղը կենթարկվի՞ Հայաստանի իշխանությունների վճռին։ Եթե ոչ՝ ի՞նչ հայ-ադրբեջանական անմիջական-ուղիղ երկխոսության մասին է Ձեր խոսքը»։

Ադրբեջանի կրթության նախարարը միլի մեջլիսի անդամ է, բանասիրության դոկտոր։ Լավ ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմությունը։ Հասկանալի է ու հարգանքի արժանի մտավորական նախարարի ծրագիրը՝ փակել իր ժողովրդի նահանջի ստրկության-վայրենության բոլոր ճանապարհները նրան անընդհատ մղելով աշխարհի պետությունների քաղաքակիրթ ընկերակցության մայրուղի։ Շարունակ պնդում էր համատեղ պրոֆեսիոնալ խմբեր ստեղծելու առաջնայնությունը. թող քննեն-պարզեն ու համոզվեն, որ Խոջալուն ոչ այնքան հայերի, իսկ Սումգայիթն ու Բաքուն ոչ այնքան ադրբեջանցիների կազմակերպածն էր։ Լավ ունկնդիր է, փաստարկներ ընդունող։ Իսկ արանքում անընդհատ հետաքրքրվում էր մեր կրթության բարեփոխումների վիճակով։ Հրավիրում եմ Հայաստան։ Պատրաստ է գալու անմիջապես։

«Ձեր պատմության ուսումնասիրությունից մի հայտնագործություն արեցի. հայ մտավորականները պարբերաբար իրենց ժողովրդին քաշում են ահավոր խաղի մեջ, հետո իրենք սուսուփուս քաշվում են մի կողմ։ Իսկ իրենց հանցագործ գրքերը մնում են սերունդներին որպես դասագիրք են ծառայում։ Ե՞րբ եք հրապարակավ այրելու Զորի Բալայանի ու նրա նմանների գրածները... Դա ձեզ է պետք»։

Ադրբեջանի խորհրդարանի շենքում միլի մեջլիսի մի խումբ անդամների հետ հանդիպումը կողմերի լուռ համաձայնությամբ երկարում է։ Երբեք այդպիսի շիտակ խոսակցություն չի եղել։ Ադրբեջանցիներն այնքան գիտեն մեր հայ իրականության մասին, որքան մենք՝ այսօրվա ադրբեջանցու եւ նրա ձգտումների մասին։ Այսքա՛ն մոտ

իրարու, այսքա՛ն իրարից կախված ու այսքա՛ն գերի նախապաշարումներին ու Ռուսաստաններից փչող լուրերին... Ապշելու է: Թշնամանքի ու թյուրիմացության վիհը հաղթահարելու ցանկություն ու անհրաժեշտություն կա՞: Կա: Այս երեքշաբթի միլի մեջլիսը պաշտոնապես կքննարկի մեր պատգամավորների ուղերձն ու կարձագանքի: Հիմա դրա վրա աշխատում են հանձնաժողովները: Փոխելո՞ւ ենք թշնամության ու հակամարտության ռեժիմը բարյացակամության ու համագործակցության ռեժիմով: Այո: Ադրբեջանը խոստանում է, որպես բարի կամքի դրսևորում, միակողմանի մի շարք անլուծելի թվացող հարցեր կարգավորել: Անելու այդպիսի քայլեր ունի նաև Հայաստանը: Օրակարգում են միջխորհրդարանական կապերի զարգացման, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության ուղիղ-անմիջական փոխանակման, աշխատանքային խմբեր առանձնացնելու, ցայսօր կնքված հայ-ադրբեջանական բոլոր պայմանագրերի կատարման վիճակը վերլուծելու, Ադրբեջան-Հայաստան փոխադրական միջանցքը բացելու հրատապ-լուծելի հարցեր...

Խոսքը արարք: Բոլորս խաղաղությո՞ւն ենք ուզում: Չեմ հավատում խոսքիդ: Արածդ ցույց տուր: Դրկիցության, համագործակցության որքա՛ն կամուրջներ այրեցիք: Մենք ենք այրել: Հայ ու ադրբեջանցի այսօրվա սերունդը: Իմ սերունդը: Հայերս ենք սկսել ու խորացրել: Կորուստներ՝ որքան ասեք: Մեր շահածն ասեք: Սկսենք վերականգնել կամուրջները երկու հարևան ժողովուրդների միջև, որ մենք ենք փշրել: Մեր զավակները պիտի օգտվեն այդ կամուրջներից դարձնելով դրանք ավելի բանուկ ու անխափան:

Ադրբեջանում ես տեսա ինձ ու ձեզ համար գլխավորը. Ոչ ոք չի ուզում մեռնել: Ուզում են ապրել բարգավաճ պետության մեջ եւ անպայման խաղաղ ու բարեկեցիկ: Հրաշալի է: Հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ-շուտափույթ կարգավորման ավելի լավ երաշխիք ու նախապայման չկա: Իմ այցը Բաքվի թիվ 46 դպրոց նորից հաստատեց բաքվեցիք հոգեբանորեն պատրաստ են թյուրիմացության ու թշնամության անդունդն անցնելու: Ուսուցիչները սիրով, շատ սիրով էին խոսում իրենց նախկին հայ գործընկերների մասին, շեշտում նրանց մարդկային-մասնագիտական արժանիքները:

Մեծ ու խստապահանջ լսարան էր հավաքվել։ Հարցեր-մեղադրանքներ, հարցեր-ապացույցներ... Ես համառորեն պնդում եմ, որ յուրաքանչյուր ժողովուրդ պիտի մտասևեռվի հակամարտության ողջ ընթացքում իր թույլ տված սայթաքումների, բացթողումների վրա քավելով իր մեղքերը, լծվելով հակամարտության խաղաղ կարգավորմանը։ Ընդունվում է։ Շիտակ, բարձրաձայն ինքնախոստովանության հասնող խոսակցությունը բարյացակամ ու պատրաստակամ էր դարձրել լսարանին։

Երկու ժողովուրդներին անջատող թշնամության այս վիհը տարիներով է խորացել։ Այն հաջողությամբ հաղթահարելու համար երկու ժողովուրդներն էլ այսօր հիանալի հնարավորություններ ունեն։ Ես չեմ խուսափում, ես փնտրում եմ ծայրահեղ իրավիճակներ ստուգելու և իմ, և ադրբեջանցու պատրաստակամությունը։ Երեկոյան ժամը 11-ն անց է։ Ես դուրս եմ գալիս հյուրանոցից եւ գնում հին Բաքվի ուղղությամբ։ Մոտենում եմ մի երիտասարդի ու խնդրում օգնել կողմնորոշվելու։ Քայլում ենք միասին։ Ես ասում եմ, որ հայ եմ, պատմում եմ այցիս նպատակը։ Երիտասարդ դերձակը հիացած է։ Հրավիրում է տուն։ Սիրով ընդունում եմ։ Ջերմ ընտանեկան մթնոլորտ է՝ կին եւ երկու երեխաներ։ Գալիս են հարևանները։ Ոչինչ սարքած-հնարած չէ։ Պարզապես ճիշտ է Վիլյամ Սարոյանը՝ սերն անմահ է, ատելությունը մեռնում է ամեն րոպե...

Մոսկվայով Երևան չեմ վերադառնա, ոչ էլ Թիֆլիսով. հաստատ է։ Մենք ընդհանուր մեծ սահման ունենք ասեք խնդրեմ ո՞րն է ձեր պետության դուռը։ Ապահով չէ՞, ապահով դարձրեք հարևանի համար։ Իմ փաստարկներն անառարկելի են։

*«Ազգ»*

*14.11.92թ.*

## Պատերազմը մերժելով՝ խաղաղություն չի հաստատվում

Հայաստանի համար արցախյան հակամարտության զարգացման երեք ճանապարհ է երևում։

Ճանապարհ առաջին, որը ես պայմանականորեն անվանում եմ հավաստի պարտության և առավելագույն կորստի ճանապարհ։ ՀՀ խորհրդարանը ճանաչում է Արցախի անկախ պետությունը։ Արցախի անկախության զինական պաշտպանության նպատակով Հայաստանն անհրաժեշտ ռազմաքաղաքական դաշինք է կնքում Արցախի հետ, պատերազմ հայտարարում Ադրբեջանին ու պատերազմի բոլոր օրենքներով տոտալ մոբիլիզացիա ու ռազմական դրություն հանրապետությունով մեկ, մեծի-պստիկի զինվորագրում, ունեցած-չունեցածի զոհում ռազմաճակատին։ Հանուն ազատության ու պատմական արդարության կռիվ Աշխարհի հետ մինչև... Ճանապարհը հստակ է։ Արդյունքները հետո... Որտեղի՞ց այս ճանապարհը, ովքե՞ր են սրա ջատագովները առանձին հոդվածի նյութ է։

Ճանապարհ երկրորդ, որը ես անվանում եմ ամոթխած պատերազմի ու երկչոտ իրատեսության ճանապարհ։ Ուրիշ ի՞նչ անուն տաս Ղարաբաղի հակամարտության լուծման իշխանությունների բռնած ճանապարհին։ Այսօր Հայաստանում դեմ են պատերազմին։ Իշխանությունն ու ժողովուրդը միակարծիք են այս հարցում։ Սակայն պատերազմը մերժելով խաղաղություն չի հաստատվում։ Վկան մեր հնգամյա խորացող մաքառումն է չհայտարարված, բայց սողացող պատերազմի տեսքով։ Հայտարարված պատերազմի Հայաստանը չի գնա, և աշխարհը չի թողնի, և պետության նյութական ու ժողովրդի կամային-հոգեկան ռեսուրսներն են անբավարար։ Բայց այս չարչարված-բզկտված հողում խաղաղություն չի հաստատվի այնքան ժամանակ, քանի դեռ ժողովուրդն ու իշխանությունը խիզախություն չեն ունենա վերջնական հրաժարվելու ամոթխած պատերազմի ու ամաչկոտ իրատեսության ճանապարհից, քանի դեռ էական գծերով չեն բանաձևի հարևանի հետ հակամարտության խաղաղ կարգավորման ուղին անդավաճան բռնելով հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման ճամփան։ Թե չէ, ճիշտ ու ճիշտ 80-ական թվականների խորհրդային իրականության

հայտնի անեկդոտի նման պատերազմ չի լինի, բայց խաղաղության համար այնպիսի պայքար կլինի, որ քարը քարին չի մնա։ Հրեղեն վկան մեր անմխիթար ներկան։ Ինչպե՞ս հայտնվեցինք այս վիճակում, ինչո՞ւ այսպես եղավ. հռչակելով մեր անկախ պետությունը ինչո՞ւ չկարողացանք հաղթահարել մեր հանցագործ ռոմանտիկ ուզվորությունը։ Պիտի գրվի, պիտի ասվի շիտակ ու մինչև վերջ։ Հանրապետության Նախագահի, Հայոց համազգային շարժման լուռ կամ բարձրաձայն համաձայնությամբ առ այսօր վարած ամոթխած պատերազմի ու երկչոտ իրատեսության քաղաքականությունը հանրապետությունը հասցրել է մի սահմանագծի, որից այն կողմ հայոց պետականության փլուզումն է, Արցախի հողի ու ժողովրդի հավաստի կորուստը։ Մինչև ե՞րբ իշխանություն, պետական հեռուստատեսություն ու մամուլ կշարունակեն սա ներկայացնել որպես հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման ողջամիտ ուղի, որն այլընտրանք չունի։ Շատ եմ ափսոսում, շատ եմ հավատացել իմ Նախագահին, ՀՀՇ իմ ընկերներին։ Բայց... Այս տարվա նոյեմբերի 11-ին, երդման արարողության մեկ տարին լրանալու կապակցությամբ, հանրապետության Նախագահը լրագրողների հետ հանդիպման ժամանակ ի լուր աշխարհի հավաստեց անդավաճան հավատարմությունը իր դավանած «Պայքար, պայքար մինչև վերջ» նշանաբանին. «Համենայն դեպս, ես մեր ժողովրդին խոստանում եմ, որ կանեմ ամեն ինչ, որպեսզի չներքաշվենք լայնամասշտաբ պատերազմի մեջ և այսքան զրկանքների վրա չավելացնենք նաև մեր զավակների անմեղ արյունը»։ Մնում է մի հրամանագրով սահմանազատել ոչ լայնամասշտաբ պատերազմը լայնամասշտաբից... Այսքա՜ն կորուստից ու զրկանքից հետո մինչև ե՞րբ պիտի մեզ մխիթարեն սրանով։ Ուրեմն ի՞նչ վերջնական ընտրություն են կատարել հանրապետության իշխանությունները պայքար, պայքար մինչև դանդաղ, աննկատ վերջանա՞լը։

Իշխանություն ու ժողովուրդ պիտի ազատվեն երկվությունից, գործելակերպի կիսապատրաստությունից ու հակասականությունից։ Ի՞նչ ենք ուզում. այս խնդրի շարունակվող քննարկումներն ու գործողությունները ոչ միայն ժամանակավրեպ են, այլև կործանարար։ Որպես պատգամավոր, ՀՀՇ վարչության անդամ, այսօր, ինձ համար,

իհարկե, մի հարց կա՝ ի՞նչ կարող ենք անել-իրականացնել։ Սակայն եկեք ճշգրիտ ու ազնիվ լինենք մինչև վերջ։ Հայոց պետություն ու ժողովուրդ հայտնվել ենք մի վիճակում, որի համար պատասխանատու ենք բոլորս՝ իշխանավոր թե շարքային քաղաքացի՝ ամեն մեկն իր չափով։ Չպիտի թույլատրել որևէ իշխանավորի գործելու, ինչ-ինչ վճիռներ կայացնելու, քանի հստակ ու ամբողջական չի շարադրել ո՞ր ուղու հավատարիմ ճամփորդն է ինքը, ո՞րն է համարում մեր այս վիճակից դուրս գալու միջոցը։ Ցանկությունները մի կողմ։ Այսօր ո՞ւր և ինչպե՞ս եք կարգադրում շարժվել, հարգելի իշխանություն։

Ես ձեր երեխաների ուսուցիչն ու ձեր համայնքի ծառան, խնդրում եմ թողե՛ք դատավորի, ուզվորի, պահանջատերի կեցվածքը, հաղթահարե՛ք թույնն ու նեղացկոտությունը, մի պահ մոռացե՛ք դուր գալու արվեստը։ Անսացե՛ք ձեր ողջախոհությանը. նստե՛ք սպիտակ թղթի առաջ ու պարզ-ճշգրիտ սահմանենք հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման բանաձևի ձեր տարբերակը։ Տրամաբանական ու ամբողջական բոլոր շարադրանքները մեր պաշտոնական ու ընդդիմադիր մամուլը թող տպի, հրապարակի առանց թունոտ ու խուժուժ-մուժուժ մեկնաբանությունների։ Թե չէ անհեթեթ, անբարոյական բան է ստացվում։ Գիտենք, որ տնտեսությունը երկարատև ու խոր մեկուսացումից անբուժելի հոգեվարքի մեջ է ու չի արտադրում։ Գիտենք, որ հանրապետության կառավարման համակարգը երկարատև անորոշությունից ու անպաշտպանվածությունից կաթվածահար է եղել, կորցրել իշխանավորի պատասխանատու, հոգատար վերաբերմունքը, զրկվել վճռելու, համարձակ ու հստակ գործելու պարտադիր հատկությունից։ Բայց սպառնում ենք գործադուլով, պահանջում սոցիալական վիճակի բարելավում ու աշխատավարձի քառապատկում։ Նորի՞ց ոչ պետական միտք ու գործելակերպ. ամեն մեկն առանձին փորձում է իր գլխի ճարը տեսնել, իսկ սեղանի շուրջ, հեռուստաեթերում ու թերթերում քննարկում միացում ու համազգային խնդիրներ։

Ես հավատավոր ու անհոգնել ճամփորդն եմ մի երրորդ ուղու, առավելագույն ձեռքբերման կամ նվազագույն կորստի ճանապարհին է իմը։

Եթե «արցախյան հակամարտության խաղաղ կարգավորում» ասելով հասկանում եք խաղաղ բանակցություններով «հայավարի ֆոռացնելն» ու Լեռնային Ղարաբաղն Ադրբեջան պետությունից անջատել-կտրելը, ուրեմն խուլերի խոսակցությունն ուզում եք շարունակել։ Կներեք։ Եթե դա նկատի չունեք, ուրեմն, որպես Հայաստանի Հանրապետություն պատասխանատվություն կրելով հայերի անվտանգության համար, պիտի ունենանք Արցախի խնդրի կարգավորման մեր տարբերակը՝ ընդունելի նաև Ադրբեջանի համար (հակառակ դեպքում ի՞նչ խաղաղ կարգավորում)։ Իսկ Լեռնային Ղարաբաղի այսօրվա ղեկավարության կարծի՞քը։ Հարցնենք, բայց Ղարաբաղի ժողովրդին։ Ասում եմ առանց ժողովրդով ու իշխանություն իրար հակադրելու։ Պարզապես ժողովուրդն ինքն է կայացնում իր պապական հողում ապրել-չապրելու վճիռը։ Մի փորձեք ինձ լռեցնել Ղարաբաղի Անկախության հանրաքվեով ու ընտրված Գերագույն խորհրդով։ Ես ասում եմ ձեզ՝ եթե Հայաստանի Հանրապետության այսօրվա Գերագույն խորհուրդը պատերազմ հայտարարի Ադրբեջանին, դա կլինի ժողովրդի՞ վճիռը։ Իր հողում ապրելու անսասան վճռականությամբ լցված ղարաբաղցին պիտի ընդունի Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման բանաձևը վերջնական տեսքով։ Բայց մինչ այդ պիտի ծնվի, ձևակերպվի այդ բանաձևը։ Ընդամենը այս եմ ասում։ Ես ունեմ, պարտավոր եմ ունենալ բանաձևի իմ տարբերակը ու պատասխանատվությամբ այն կներկայացնեմ իմ ընտրողներին ու իմ պետության քաղաքացիներին։ Իսկ այսօր, շարունակելով խոսքս՝ ասում եմ ակնհայտ բաներ.

Խոշոր տնտեսագետ կամ քաղաքագետ պետք չէ լինել արձանագրելու համար, որ մեր հարևան Ադրբեջան պետության հետ բարի դրացիությունը, ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը, Հայաստան-Ադրբեջան տնտեսական-քաղաքական-հոգևոր ավանդական ու փոխշահավետ համագործակցության շուտափույթ վերականգնումը, դրանց հետագա զարգացումն ու ծավալումը երկու

պետությունների անկախության ու ժողովրդավարության պայմաններն են։ Այսօր ժողովուրդ ու պետություն ինչքա՜ն շահեկան վիճակում կլինեինք, եթե մեր անկախության հռչակագրի ընդունման պահին հստակեցնինք մեզ համար այսօր արդեն ակնհայտը՝ «Առանց Ադրբեջանի հետ հարաբերությունները կարգավորելու, չի լինի անկախ Հայաստան» (Կտրիճ Սարդարյան, «Հայք», 20. 11. 91թ.)։

Շա՞տ է կտրուկ, խնդրեմ, ավելի մեղմ ձևակերպում։ Ադրբեջան պետության հետ բարի դրացիությունը, ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը, Հայաստան-Ադրբեջան տնտեսական, քաղաքական ու հոգևոր փոխշահավետ համագործակցության շուտափույթ վերականգնումը ավանդական (խորհրդային) մակարդակում, համագործակցության հետագա զարգացումն ու ծավալումը երկու պետությունների անկախության ու ժողովրդավարության անհրաժեշտ պայմաններն են։ Հայ ու ադրբեջանցի այսօրվա սերունդն է քանդել համագործակցության բոլոր կամուրջները շարունակ խորացնելով հակամարտության վիհը։ Այդ սերունդն էլ պարտավոր է մեկիկ-մեկիկ վերականգնել դրանք... Ոչ ոք դա չի կարող ու չի անի մեր փոխարեն։ Որպեսզի դրսից պետությունների միջև այսօր առկա ու չթուլացող թշնամության-օտարության մթնոլորտը փոխարինվի փոխըմբռնման ու վստահության մթնոլորտով, պահանջվում են երկու պետությունների իշխանավորների, հասարակական ու քաղաքական, գիտության ու մշակույթի գործիչների, ձեռնարկատերերի ու անհատ անձանց շիտակ ու բարի քայլեր, վստահ ու հետևողական գործեր... Իմ մասնավոր այցը Ադրբեջան հաստատեց, որ այսօր պարարտ հող կա առողջ կյանքի սերմեր ցանելու համար։ Համառոտ թվարկեմ.

- Երկու ժողովուրդներն էլ նկատելի հոգնել են այս չհայտարարված, բայց օրեցօր խորացող, ինքնակործան, արդյունքում անիմաստ-անհեռանկար մաքառումից։
- Եվ Ադրբեջանում, և Հայաստանում ավելի ու ավելի մեծ թվով քաղաքացիներ ավելի ու ավելի լսելի են խոստովանում, որ այս պատերազմը նաև անբարոյական է, ոչ իսկական պատերազմի կանոններով. ավելի շատ խաղաղ-անմեղ բնակիչ է զոհվում, քան զինվոր, ավելի ու ավելի շատ գյուղ ու շեն է ավերվում, քան ռազմական նշանակության օբյեկտ։

- Պատերազմը, այո, չհայտարարված, մի տեսակ խաղի նման, բայց իրական ու մեծաքանակ կյանքեր է տանում: Մահվան բոթը թափանցել է ամեն մի գյուղ ու քաղաք, սպառնում է շատուշատ ընտանիքների: Հասարակությունը շատ ծանր է տանում յուրաքանչյուր բոթը, ցնցվում է ամեն մի զոհի համար... Ոչ ոք չի ուզում մեռնել: Ոչ ոք չի ուզում մերձավորին կորցնել: Նոր զինակոչն ու զորահավաքը և Ադրբեջանում, և Հայաստանում չեն կարող չբախվել հասարակության չկամությանը, քանի որ...
- Մի քանի սերունդների տասնյակ տարիների գերագույն լարումով ստեղծածի շարունակվող ավերումը, երկու ժողովուրդների միջև թշնամության ու թյուրիմացության խորացող վիհը, մշտական թույնն ու ատելությունը, կենցաղի վատթարացումը զորացնում են լիարժեք ապրելու, խաղաղ կառուցողական գործով զբաղվելու կենսական պահանջը:
- Խելահեղ հասարակական խառնաշփոթից, բոհուբոհից հետո յուրաքանչյուրն ուզում է հասկանալ և հասկանում է կատարվածը, տալիս ոչ թե ամբոխային, այլ անհատական գնահատական, հաշվում ոչ թե հասարակության-պետության իրեն անտեսանելի ձեռքբերումները, այլ անձնական կորուստները:
- Ավելի մեծ թվով մարդիկ ուզում են հստակ տեսնել-պարզել շարունակությունը, հակամարտության հեռանկարը: Եվ բաքվեցին, և երևանցին հասկանում են, որ եթե կռվով-բռնի ուժով լուծվեց Ղարաբաղի խնդիրը, պատերազմը չի ավարտվի... Պերմանենտ մաքառման իրական հեռանկարը մարդկանց մղում է հաշտության եզրեր գտնելու չափավորելով նախնական ցանկությունները:
- Երկու պետությունների մեծ թվով քաղաքացիներ և հատկապես իշխանավորներ ու քաղաքական գործիչներ իրենց այսօր հաշիվ են տալիս, որ անժամանակ ներքաշվեցին այս պատերազմի մեջ, հակառակ իրենց կամքին: Աշխարհի հզորների ցանկությամբ և ծրագրով մենք առճակատեցինք: Ղարաբաղում ռազմական իրավիճակն այսօր այնպիսին է, որ առանց որևէ հզոր պետության զինական մեծ աջակցության անհնար է կողմերից որևէ մեկի շուտափույթ-վերջնական հաղթանակը: Իսկ այսպիսի պարագայում երկու կողմերի համար էլ

իրական է դառնում անկախ պետության կորուստը։ Ռուսաստանում ներքաղաքական կյանքի խառնաշփոթը, Հյուսիսային Կովկասում ծավալվող բուռն իրադարձությունները շատ սուր են ընկալվում Ադրբեջանում...

- Տարիների ներքաղաքական արյունոտ ցնցումներից ու բախումներից հետո Ադրբեջանը Էլչիբեյի ընտրությամբ ձեռք է բերել և այսօր վայելում է ներքաղաքական կայունության, անձի ապահովության ու խաղաղ կենսագործունեության բավարար պայմաններ։ Ադրբեջանցին շատ թանկ է վճարել իր այսօրվա ունեցածի համար և հեշտ չի զրկի իրեն խաղաղ կյանքի իրավունքից։ Այսօրվա իշխանությունները չեն կարող հաշվի չառնել այս իրողությունը։ Իսկ հայ-ադրբեջանական առճակատման խորացումը կամ շարունակումը սպառնում են կորցնել ունեցածը։ Հայաստանում այսօր վտանգված է ներքաղաքական կայունությունը, որովհետև անհեռանկար կասեցված է արտադրական գործունեությունը։ Եթե մոտ ժամանակում մարդիկ չլծվեն խաղաղ-ստեղծագործ աշխատանքի, ապա ժողովրդական դժգոհությունը այլևս Ղարաբաղի խնդրի լուծման համար անհրաժեշտ ներքաղաքական կայունությամբ չես զսպի ու սանձի։
- Վերջին վեց ամսում հայ-ադրբեջանական բանակցությունների մեծ պաշար է գոյացել։ Երկու հանրապետությունների սահմաններում կամ «չեզոք հողում» միջնորդների նախաձեռնությամբ կամ երկկողմ-ուղղակի հանդիպումներ են կազմակերպվել թե հանրապետության նախագահի ներկայացուցիչների, թե ԳԽ անդամների, թե տեղական իշխանությունների, թե զինվորականների մակարդակով։ Երկկողմ սովորույթ է դառնում բանակցելը, պայմանավորվելը։

Այս թվարկումը կարելի է շարունակել։ Բավարարվենք սրանով ու արձանագրենք՝ այսօր Հայաստան-Ադրբեջան խզված հարաբերությունների վերահաստատման լավ պայմաններ կան, և չի կարելի դրանցից չօգտվել։ Համարձակ ու իմաստուն պիտի օգտվել չմոռանալով ակնհայտը. առանց պետական աղմկոտ վճիռների, աննկատ եւ արդյունավետ զորացնելով ինքնապաշտպանությունն Արցախում, այն դիտելով որպես հակամարտության կարգավորման ոչ թե ճանապարհ, այլ հակամարտության խաղաղ

կարգավորման այսօր անհրաժեշտ ուղեկից։ Ուղեկից, առանց որի անհնար է Ադրբեջան պետության կազմում ապահովել Լեռնային Ղարաբաղի անվտանգությունն ու ղարաբաղցու իր հողում ապրելու իրավունքը։

Ո՞վ սկսի։ Ադրբեջանն ասում է Հայաստանը, նա է սկսել այս հակամարտությունը։ Մեր վիճակն այնքա՜ն է օրհասական, որ իրավունք չունենք տեսական անպտուղ վեճերի մեջ թաղելու գործը։ Մենք ոչ միայն պիտի հատու ու հետևողական քայլեր կատարենք հայ-ադրբեջանական հարաբերությունների վերականգնման ուղղությամբ, այլև գործելու մեր վճռականությամբ, անկեղծությամբ ու անսպասելիությամբ ակտիվացնենք համագործակցության պատրաստ ուժերը Ադրբեջանի համար ապացուցելի-հեռանկարային դարձնելով առճակատման խաղաղ կարգավորման ճանապարհը եւ պարտադրելով դա Ադրբեջանին։

Հայաստանը պիտի բարիդրացիության նախաձեռնող հավատավորը լինի։ Ովքե՞ր եւ ինչի՞ց սկսեն։

Ինչպե՞ս սկսենք հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորումը, որ այն այլևս չկանգնի, գործի ինքնակարգավորման եւ ինքնազարգացման ռեժիմում։ Իմ առաջարկը շատ պարզ է. չհայտարարված, բայց ընթացող հայ-ադրբեջանական պատերազմի ու հակամարտության ռեժիմից անցնել չհայտարարված, բայց իրագործվող դրկիցության, վստահության ու փոխըմբռնման ռեժիմի։ Անձնական նախաձեռնություններ են պետք, բարի կամքի դրսևորման ոչ միայն խոսքեր, այլև կոնկրետ իրագործումներ։ Նրանք, ովքեր հոգեբանորեն պատրաստ են հաղթահարելու թշնամության-օտարության վիհը, նրանք, ովքեր հավատում են, որ հասել է ժամը հարևան ժողովրդի հետ խաղաղ գոյակցության, պիտի գործեն վստահ ու շիտակ։ Բարիդրացիության յուրաքանչյուր դրսևորում-իրագործում խաղաղ գոյակցության օգտին ցանկացած տեսությունից արժեքավոր է։ Յուրաքանչյուր չափահաս հայ մարդ ադրբեջանցի 1-2 լավ ընկեր կամ ծանոթ ունի։ Պիտի հիշել ու փնտրել։ Զանգել ու գրել։ Իրար շնորհավորելու առիթները բաց չթողնել։ Վերականգնել մարդկային կորսված կապերը։ Հրավիրել ու արձագանքել

հրավերին։ Վախենալս ո՞րն է։ Մի՞թե մեր կյանքն ավելի թանկ է, քան մեր զավակի կամ եղբոր կյանքը։

Կարևորագույն գործ է հայ-ադրբեջանական սահմաններում կայուն խաղաղության շուտափույթ հաստատումը։ Սահմանային շրջաններում, գյուղերում ու քաղաքներում զոհվող ու վիրավորվող ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու, ավերվող յուրաքանչյուր տան ու մեր հողում պայթող յուրաքանչյուր արկի հետ մեռնում է հայոց պետականությունը։ Ի՞նչ պետություն, եթե լրիվ չի վերահսկում իր տարածքը, չի կատարում իր գլխավոր պարտականությունը իր քաղաքացիների հանդեպ նրանց կյանքի անվտանգության ապահովումը։ Կյանքը համոզեց, որ հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով չինական պարիսպ չես քաշի, ոչ էլ հայոց ազգային բանակը նրա համար է, որ հայ-ադրբեջանական սահմանը դարձնի ռուս-թուրքական սահմանի նման։ Մեր հարևանների հետ մեր սահմանները կյանքի դռներ ու հարստության մուտք են եղել։ Հարկավոր է պարզապես կարողանալ դրկիցների հետ հաշտ ապրել։ 1988 թ. Ղարաբաղում ծագած վեճը մահացու էր Հայաստան պետության համար, եթե պիտի վերածվեր տարեցտարի խորացող հայ-ադրբեջանական հակամարտության ընդգրկելով սահմանային 12 շրջան ու 4 խոշոր քաղաք, թշվառության եզրին հասցնելով հանրապետության ողջ ժողովրդին։ Պիտի անվախ այցելել ու պայմանավորվել ադրբեջանական կողմի հետ, պիտի ստեղծվեն ու իրագործվեն պայմանավորվածությունների վերահսկման մեխանիզմները։ Ղազախի ու Նախիջևանի գոտում ամենակարճ ժամանակում ոչ միայն կայուն խաղաղություն պիտի հաստատվի, այլև պիտի աշխատեն ավտոճանապարհներն ու երկաթուղին։ Ադրբեջանի ճանապարհները մեր տնտեսության թոքերն են։ Չինաստաններում ու ամերիկաներում մեր վաճառականներն ի՞նչ են կորցրել, երբ մեր քթի տակ վրացի ձեռներեցները Ադրբեջանի բենզինը վաճառում են մեզ դիզելով հեքիաթային գումարներ։

Հայ և ադրբեջանցի գործարարները պարտավոր են իրենց մասնակցությունը բերել հակամարտության խաղաղ կարգավորմանը։ Ես գիտեմ, որ նրանք շատ լավ գործակցում են Մոսկվայում։ Ինչո՞ւ գործարար շրջանների մեծ հավաք չկազմակերպել, ասենք, սկզբի համար, Մոսկվայում, չքննարկել ստեղծված տնտեսական վիճակը, չհաշվել

հակամարտության վնասները, կոչով չդիմել հանրապետությունների իշխանություններին։ Կարելի է ստեղծել փախստականների օգնության միացյալ հիմնադրամ, համատեղ մշակել ու ֆինանսավորել երկու հանրապետություններից փախստականների վիճակի ուսումնասիրման, նրանց վիճակի բարելավման ու նրանց հետագա վերաբնակեցման ծրագրեր։

Հայ և ադրբեջանցի գրողները հանդիպեցին Ղազախ-Իջևան սահմանագլխին։ Ինչո՞ւ չշարունակել, ինչո՞ւ չզարգացնել։ Եթե մեր մտավորականությունը Թումանյանի հոգեորդին չէ, ապա ի՞նչ արժեքներ է փոխանցում այսօրվա սերնդին, ինչպե՞ս է օգնում մեր ժողովրդին ապրելու։ Ինչո՞ւ հայ ու ադրբեջանցի նկարիչները, կինոգործիչները, երաժիշտները, գիտաշխատողները և դերասանները չվերականգնեն այրված կամ մոռացված կամուրջները ցույց տալով անհիշաչարության և հավատարմության օրինակներ։

Ես դիմում եմ երկու հանրապետությունների լրագրողներին, ինֆորմացիոն գործակալությունների աշխատողներին։ Կարելի է կազմակերպել ուղղակի տեղեկատվություն, ունենալ լիարժեք լրատվական գործակալություններ։ Մոռանանք «ելուզակ», «թշնամի», «բարբարոս» որակումները, չբորբոքենք ու շաղ չտանք թյուրիմացություն, չուրախանանք զոհված «թշնամիներով» ու սկսենք ցավել իրար համար ու ցավակցել իրար, ներկայացնենք հանրապետությունների ներքին կյանքը լրիվ սև, սպիտակ, կարմիր... բոլոր գույներով։

Թող առաջին հեռուստամարաթոնը կայանա երկու հանրապետությունների դպրոցականների և ուսանողների միջև. ի՞նչ են մտածում իրար մասին, ինչպե՞ս կարելի է հակամարտությունից անցնել համագործակցության։ Ինչո՞ւ չի կարելի հրապարակումներ պատրաստել հարևան երկրի թերթի կամ ամսագրի համար, տրամադրել մեր էջերը մեր հարևաններին։ Ինչո՞ւ չեն կարող մեր քաղաքացիները հոդվածներով ու նամակներով հանդես գալ հարևան երկրի թերթերում։

Պիտի սկսեն իրար նամակներ ու բացիկներ ուղարկել երկու հանրապետությունների դպրոցականներն ու ուսուցիչները, փոխայցելության նախապատրաստվեն երեխաների առաջին խմբերը...

Հայաստանի Հանրապետության ԳԽ պատգամավորների հայտնի ուղերձը վկայում է, որ հայոց խորհրդարանը կարող է ու պարտավոր է վճռական դեր խաղալ հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման գործում: Լավ ուսումնասիրված ու մշակված առաջարկներով պիտի հեղեղել Ադրբեջանը, հետևողական զարգացնել միջպառլամենտական կապերը, առանձին վիճահարույց հարցեր ուսումնասիրող համատեղ խմբեր ստեղծել: Վերջին մեկ-երկու տարում Հայաստանի ու Ադրբեջանի միջև կնքվել են տարբեր կարգի տասնյակ պայմանագրեր: ԳԽ-ն ու կառավարությունը պարտավոր են լրջորեն ուսումնասիրել յուրաքանչյուր համաձայնագրի կատարումը: Պիտի պարզվի ինչո՞ւ չի կատարվել այս կամ այն համաձայնագիրը կամ նրա որևէ կետը, ո՞վ է մեղավոր: Հարևանների հետ բոլոր պայմանավորվածություններում հարկ է շիտակ ու ճշգրիտ լինել, դա կավելացնի վստահությունը երկուսի հարաբերություններում: Հայաստանի իշխանությունները, որպես բարի կամքի դրսևորում, միակողմանի պիտի գնան որոշ հարցերի լուծման:

Այս թվարկումը կարելի է շարունակել ու շարունակել: Մի հայրենիք մենք ունենք, մեկը՝ ադրբեջանցիները: Լավ, վեճ ենք ունեցել, այսօր էլ ունենք, վաղն էլ կունենանք: Հետո՞: Պիտի սովորենք, պիտի ստիպենք իրարու մեր վեճերը քաղաքակիրթ միջոցներով կարգավորել: Դրա համար փոխըմբռնման ու վստահության մթնոլորտը պարտադիր պայման է: Ժողովրդական դիվանագիտությունը իր ողջ զինանոցով պիտի գործածենք: Դեմքով շուռ գանք դեպի հարևանը, գնահատենք ու հարգենք նրան, կարևորենք բարիդրացիությունը: Պետք չէ չափազանցնել հակամարտության խորությունը. հայն ու ադրբեջանցին հոգեբանորեն պատրաստ են համագործակցության:

Ես կգնամ Ադրբեջան, մեծ թե փոքր քաղաք ու գյուղ, կբախեմ իմ հարևան ժողովրդի ցանկացած տան դուռ, կկիսեմ հացը, կհանդիպեմ շարքային զինվորին, հայտնի ու անհայտ քաղաքական գործչին միայն թե խաղաղեցնեմ այս հողը, հանդարտվի մեր խռովված հոգին, որ վերջապես լծվենք ամենօրյա մեր խաղաղ գործին։

*19.11.1992 թ.*

*«Ազգ»*

# Ապագա ունենալու համար ապրել է պետք

*Զորավոր ազգերի մեջ, ահագին բանակներին հրամայող ամենաճարպիկ զորապետներն անգամ, երբ իրենց դեմը անկարելին կտեսնեն, ազգը անդարմանելի աղետից ազատելու համար վայրկյան իսկ չեն վարանի առժամանակապես նահանջելու. ինչո՞ւ դուք էլ այդ խոհեմ արարքին չհետևեք գոնե առայժմ:*
*Արփիար Արփիարյան*

Սա՞ է մեր հանճարի 70-ամյա պոռթկում ղարաբաղյան շարժման, հայոց հերթական-անժամանակ պահանջատիրության հնգամյա սարսռման ավարտը: Պետությունն ու ժողովուրդը անզոր ու անօգուտ խմբերի բաժանված, առանց լուրջ, գործնական ու իրագործելի ծրագրերի, առանց նյութական եւ բարոյական ուժերի... Ազգի փրկության ու շարունակվող հեղափոխության կարգախոսները «ռադիկալ կոնցեպցիաներով» փոխարինած Հայաստանի իշխանավորն ու քաղաքական գործիչը անորոշ-արկածախնդիր նոր գործողություններով ի՞նչ նոր փորձությունների են տանում անպաշտպան ու հուսալքված ժողովրդին:

**Եթե մարդ իր տունն իր ձեռքով չքանդի, ուրիշ ոչ ոք դա անել չի կարող**

Ամենից շատ ուժն եմ սիրում, հետո ուժը կրկին: Պարտվել չեմ կարողանում. հաղթողի ու հաղթանակի ցնծությունը անձնային գերագույն ապրում է: Պարտվողի նվնվոցի ու պարտության խեղճության թշնամին եմ: Իմ ժողովրդի ջարդ-կորուստի ու պարտությունների պատմությունը իմ ողբերգությունն է ու իմ ամոթը: Ոչ թուրքին, ոչ ադրբեջանցուն, ոչ պարսիկին եւ ոչ վրացուն մեղադրել ու հայհոյել չեմ կարող: Իմ կռիվն ինձ հետ է ու իմ ազգի տեսակի: Ազգային բացառիկության ոչ մի բարդույթ չունեմ: Շատ ենք սովորական ազգ: «Եթե»-ներով, մեր անհիմն բացառիկության ծնունդ լեգենդներով ու ծրագրերով ինձ չես ոգևորի. համր եմ ու կույր: Այնքան ենք, ինչքան կանք այսօր ոչ ավելի: Չիրագործված-չիրականացված ինչպե՞ս ուրիշներին տեսանելի ու ընկալելի կդառնանք: Կոմիտասն ասում էր երգեք ձեր տանը ուրիշներն ականջ ունեն, կլսեն:

Ասում եք պարտվողակա՞ն, ասում եք ոչ արժանապատի՞վ... Կնշանակի Ադրբեջանի հետ հնգամյա պատերազմում հաղթողը դո՞ւք եք: Հա՞:

Ազգայինի դիտանկյունից ամենաանդառնալին հողի ու այդ հողի վրա ապրող բնիկ ժողովրդի կորուստն է: Շահումյանը, Գետաշենն իր ենթաշրջանով իրենց տոհմիկ ժողովրդով, իհարկե, չեք կորցրել. երգ ու պատմություն կդարձնեք, կառասպելացնեք, կփոխանցեք հաջորդ սերնդին, որ նրանք «շուն-թուրքից» վրեժ առնեն, ինչպես մենք առանք Ղարսի ու Արդահանի վրեժը:

Անձի համար ամենաողբերգականը բռնագաղթն է, հարազատ տուն-ընտանիքի կորուստն է, երբ մարդ մի օրում զրկվում է հենարանից, արմատից, վերածվում տաշեղ-տերևի ու տրվում քամու բերան: Փախստականի դեգերումներ... Մի քանի սերունդ Բաքվում ծնված-մեծացած, Բաքուն հրաշալի կառուցած, Բաքվի օրինական տեր մեր հայրենակիցների 200 հազարից ավելի համայնքի կորուստը ձեր գտածն է երևի: Հիմա, երբ իրենց հազարի ժամանակը պիտի լիներ, շուկայական տնտեսության պայմաններում Բաքուն պիտի իրար մեջ սեփականաշնորհեին, իրենց տուն-տեղն ո՞ւմ թողեցին: Որտե՞ղ են հիմա ծվարած: Ի՞նչ ողբերգություն են ապրում: Ի՞նչ շահեցին նրանք: Իսկ համայն հայությո՞ւնը...

Ազգային ինքնավարության համար ամենակորուստաբերը տվյալ պետության ձևավորման շրջադարձային պահին ըմբոստանալն է նոր-նոր կայացող պետության ու նոր-նոր ազատագրվող ժողովրդի տասնյակ տարիներ կուտակված-զսպված ավերիչ մոլուցքի շանթարգելը դառնալով: Այդպես մեր նախնիք Տաճկահայաստանը լցեցին: Լեռնային Ղարաբաղի այսօրը ձեր հպարտությո՞ւնն է ու նվաճո՞ւմը...

Հայոց պետականության համար մեծ կայսրության փլուզման ընթացքում ու հետո հասարակարգից հասարակարգ անցման փուլում, ամենակործանարարը խաղաղ-ստեղծագործ աշխատանքի համար միջավայրի բացակայությունն է, նորաբուխ

պետության ուսերին իսկական պատերազմի լուծը դնելը... Հայ մարդը հայոց նոր պետության լիարժեք քաղաքացիությունն իր անձնային առավելությունների ու շնորհների գործադրմամբ հաստատելու փոխարեն վերջնական բարոյալքվում է իր բնույթին հակառակ գործունեություն ընտրելով: Չտեսնված համազգային թշվառություն ու բարոյալքում, համատարած թալան ու գողություն, քանզի սովորական հայ մարդը պետության պարտադրմամբ գործազուրկի, թոշակառուի, հաշմանդամի կարգավիճակում է հայտնվել, առանց գողության ու մուրալու իրեն ու իր ընտանիքը կերակրել չի կարող...

Այս հնգամյա սարսռման ընթացքում ժողովրդի ու պետության կորուստների ինձ ոչնչացնող թվարկումից ինձ ազատեք ու ձեր շահածն ասեք:

Դուք անընդհատ ներքին ու արտաքին մեղավոր ու թշնամի եք որոնում, իսկ ես արձանագրում եմ՝ մեծ հաշվով ոչինչ չենք շահել ու չէինք կարող շահել: Չենք շահում. կորցնում ենք հակամարտության ամեն օրում: Կորցնելու ենք Լեռնային Ղարաբաղն ու փլուզելու ենք Հայաստան պետությունը վերջնականապես, եթե մեր սխալը ճանաչելու իմաստնությունից բացի սխալի կեսին կանգնելու ու մեր հետագա ճանապարհն ուղղելու խիզախություն չունենանք: Ես թշնամի եմ ձեր երազ-ամբողջին, եթե իմ աչքի առաջ այն մաս-մաս կորցնում եք: Կորցնելու ենք վերջնականապես, եթե եռանդով կամ ինտրիգով շարունակելու ենք մեր պահանջատիրությունը սկզբում պատմական իրավունքի եւ պատմական արդարացիության վերականգնման հիմնավորումով, հետո հավաստի ցեղասպանությունից մի ամբողջ ժողովուրդ փրկելու առաքելությամբ, վերջապես քաղաքակիրթ աշխարհի մոգոնած ժողովրդի ինքնորոշման իրավունքի ձևակերպումով: Միևնույն է:

Եկեք հայիս մեր միամիտ-կործանարար խորամանկությունը թողնենք. Ադրբեջան անկախ պետությունից հող ենք ուզում, խնդրել-խլել-պոկել: Երկու տարի Մոսկվային աղաչեցինք-պաղատեցինք՝ չեղավ. ժողովրդի ճնշմամբ Հայաստանի ԳԽ-ը 1989 թ.

դեկտեմբերի մեկի որոշումով փորձեց կատարված իրավական փաստի առաջ կանգնեցնել խորհրդային պետությանը հայտարարելով Հայաստան-Արցախ միավորված պետության մասին: Չեղավ: 1991 թ. դեկտեմբերին ղարաբաղցիների անկախության հանրաքվեով հռչակեցինք Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ու սկսեցինք Ադրբեջանից «Ղարաբաղի պոկման խաղաղ գործընթաց»: Այդ ընթացքը խաղաղ-անմեղ լինել չէր կարող: Ոչ մի պետություն Ադրբեջանի փոխարեն այդ հողը զիջել չէր կարող: Դա Ադրբեջանի պետության փլուզումն էր նշանակում: Ղարաբաղի անկախության հռչակումը իսկական պատերազմ հայտարարել էր Ադրբեջանի անկախ պետությանը: Այն ժամանակ ղարաբաղցիք այդ մասին չգիտեի՞ն: Իսկ Հայաստան պետության ղեկավարնե՞րը: Քանի՞ անգամ փորձեցինք սևեռել նրանց ուշադրությունը անկախության հանրաքվեի ու Ղարաբաղի ԳԽ-ի ընտրությունների հետևանքների վրա: Ղարաբաղը պիտի իսկական պատերազմում պաշտպաներ իր անկախությունը, իսկ դա առանց Հայաստանի ռազմական, մարդկային ու նյութական աջակցության չէր կարող: Հայաստանի իշխանությունների թույլտվությամբ այս անգամ էլ ղարաբաղցիները որոշեցին Հայաստանի փոխարեն: Իսկ Շուշի-Լաչին դեպքերից հետո Ղարաբաղի ինքնապաշտպանության լոկալ խնդիրը վերածվեց Հայաստան-Ադրբեջան լայնամասշտաբ սահմանային ընդհարումների: Այսպես որոշեցին Հայաստանի իշխանությունները: Ասում եք Հայաստան-Ադրբեջան, Ադրբեջան-Ղարաբաղ պատերազմում մենք հաղթե՞լ ենք: Արդյունքով չդատե՞նք:

- Շահումյանի հողի ու ժողովրդի կորուստ:
- 1991 թ. սեպտեմբերին Ղարաբաղում քանի՞ խաղաղ բնակիչ էր ապրում, ու քանի՞սն է այսօր բնակվում:
- Այսօր որտե՞ղ են բնակվում Ղարաբաղից դուրս եկածները: Եթե Մարտակերտի կորուստը ժամանակավոր է, ինչո՞ւ մարտակերտցիք, լքելով իրենց շրջանը, բոլորով Շուշի քաղաքում ու Ղարաբաղի մյուս ավաններում չտեղավորվեցին բնակվելու:
- Քանի՞ զինվոր ու խաղաղ բնակիչ է զոհվել:

- Հայաստանում ու Ղարաբաղում քանի՞ տուն ու կառույց է ավերվել։ Ինչքա՞ն է Հայաստանին ու Ղարաբաղին հասցված նյութական վնասը։

Ի՞նչ տվեց Ղարաբաղի հարցի եռանդուն միջազգայնացումը։ Դույզն-ինչ։ Մեկ քայլ իսկ մոտեցե՞լ ենք Անկախ Արցախի խնդրի լուծման հնարավորությանը։ Ի՞նչ հույսով ու իրավունքով ենք շարունակելու Անկախ Արցախի հաստատման քաղաքականությունը։

Ի՞նչ ենք անելու, եթե խորանա Հայաստան-Ադրբեջան առճակատումը։ Հայոց համար ի՞նչ կանխատեսելի ու անկանխատեսելի կորուստներ կունենա պատերազմի խորացումը։ Ինչո՞ւ սա քաղաքական արկածախնդրություն չէ։

Թվում է այսօր և Ղարաբաղում, և Հայաստանում բոլորը գիտեն Անկախ Արցախ կամ Միացյալ Հայաստան հնարավոր են միայն զինական ուժով Ադրբեջանին հաղթելով-նվաճելով։ Թվում է ակնհայտ է, որ Հայաստան-Ադրբեջան հայտարարված պատերազմն այս հողն էլ, Ղարաբաղն էլ կվերածի ավերակի։ Նշանակում է թե իշխանավոր, թե քաղաքական գործիչ վերջապես պիտի իրենց ժողովրդին հարազատ բարբառով հասկանալի ներկայացնեն Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման իմաստը։

Մեծ ամոթով արձանագրենք ժողովրդի համար անցումային բարդ ու հակասական շրջանում, երբ առաջնային էր ինքնուրույն պետության ստեղծման անհրաժեշտությունը, մեր քաղաքական միտքն այս անգամ ևս չկարողացավ ճիշտ համադրել հնարավորությունն ու ցանկությունը։ Եվ հախուռն, ազգովի նետվեցինք Արցախը ետ բերելու փոխանակ մի երկար շրջան պետություն կայացնել-զորացնելու, Ղարաբաղի և նրա ժողովրդի անվտանգությունը նոր ձևավորվող Ադրբեջան անկախ պետության կազմում առնվազն բազմապատկելու։

Թվում է, որ Հայաստանի իշխանությունները պիտի որ սերտած լինեին գլխավոր դասը՝ հաղթելու միակ ձևը ապրելն է ու ժողովրդին ապրեցնելը, որն անհնար է առանց մեր հարևան ժողովուրդների հետ վարվելիք խաղաղասիրական քաղաքականության, նախ և

առաջ Ադրբեջանի և Թուրքիայի հետ համակեցության կերպի հաստատման: Ղարաբաղի խնդիրը նորից ամենաստոր ու վտանգավոր շահարկումների առարկա է դարձել ներկայացվելով անլուծելի ու անելանելի: Սա մեր քաղաքական կյանքի փչացածության հաստատումն է: Իրոք, հայոց պետության ու հայ ժողովրդի ջանքերի համադրմամբ ու գործողությունների միասնականությամբ է միայն հնարավոր ապահովել ղարաբաղցու իր հողում ապրելու իրավունքը... Իսկ տեսեք նեղ քաղաքական ամեն կարգի ինտրիգների ու պարզունակ ժողովրդայնության, քաղաքական համարձակության պակասի ու կարճատեսության ավելցուկի ինչպիսի խճանկար... Հայաստանում ու Ղարաբաղում կործանելով-թշվառացնելով հող ու ժողովուրդ հայ քաղաքական գործիչները շարունակում են իրենց գլխավոր գործը ժողովրդին հաճոյանալը: Պատասխանատվությունից խուսափող իշխանությունները և Հայաստանում, և Ղարաբաղում շարունակում են գնալ ինքնախաբեության կամ անորոշության ճանապարհով ձգձգելով Ղարաբաղի հարցի հստակումն ու լուծումը: Հրաշքի սպասում կա:

**Մոտ հարևանի հետ կռվում ենք՝ հուսալով հեռու բարեկամի աջակցությունը**

Ինչի՞ վրա է ձեր հայերիդ հույսը յուրաքանչյուր խոսակցության ժամանակ հարցնում էին ադրբեջանցի թե քաղաքական գործիչը, թե պաշտոնյան: Իրոք, ինչի՞ վրա է մեր հույսը:

Հայաստանի ժողովուրդը ղարաբաղյան շարժմանը տվեց առավելագույնը՝ հրաժարվեց 70 տարի փայփայած ծրագրերից, զոհեց իր լավագույն զավակներին, զրկեց իրեն կենսական անհրաժեշտից հավատալով հրաշքի Հայաստան պետության կայացմանը զուգահեռ ու դրա հաշվին տեսնել անկախ կամ միացյալ, բայց անվտանգ Ղարաբաղն ու բավարարված ղարաբաղցուն: Չլինելու բան էր՝ չեղավ ու չի լինում: Հայաստանցին ամեն ինչ պարզ տեսնում է, հասկանում է ու անխուսափելիի հետ հաշտվել է: Անազնիվ է նրան նորից դիմելը: Ժողովուրդը կուզի, որ իշխանավոր ու քաղաքական գործիչ իրեն համոզեն-խնդրեն, որ զիջումն անհնար է: Հայտարարված-վճռված պատերազմի ժողովուրդը չի գնա, եթե անգամ իշխանությունները սահմանված կարգով որոշեն: Այս չհայտարարված, բայց սողացող պատերազմից պետություն ու ժողովուրդ

արյունաքամվել են։ Էլ ուժ չկա։ Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման ու հայ-ադրբեջանական հարաբերությունների վերականգնման ամբողջական ու խելամիտ ծրագիրը, իշխանությունների կողմից այդպիսի ծրագրի վճռական իրագործումը ժողովուրդը ոչ միայն կողջունի, այլև դրան կաջակցի։

Լեռնային Ղարաբաղի գեղջուկ-աշխատավոր ժողովուրդը շվարած է ուժեղացող շփոթի մեջ։ Ղարաբաղի ժողովրդի համար այս տարիների «համաշխարհային քաղաքականության ղոգան» մեծ էր չի մարվում։ Ժողովուրդը կյանքով գիտեր ադրբեջանցու հետ ապրելու կերպը, յուրացրել էր այդ համակեցությունը բոլոր նրբություններով։ Այս «պաշտոնական քաղաքականությունը» նրա տունը քանդեց, նրան դարձրեց գաղթական։ Ժողովուրդը կրկնում է հանրաճանաչ քաղաքական դարձվածքներ, բայց հոգու խորքում փայփայում է, որ վերջապես կստեղծվեն պայմաններ, և ինքը կդառնա գլխավոր գործող անձն ու շատ արագ կվերագտնի ադրբեջանցու հետ ապրելու կերպը։ Ով չի կարող չապրել հայրենի հողում, հասկանում է, որ վաղ թե ուշ պիտի ընդունի Ադրբեջան պետության քաղաքացիությունը։ Շատերը, իհարկե, հավատում են, որ Ռուսաստանի միջնորդությամբ հաշտությունը շատ շուտ կկայանա ու ավելի հուսալի կլինի։

Ղարաբաղի իշխանավորի ու մտավորականի հոգեբանությունը շատ ավելի խճճված է։ Նրանց մեջ շատ են ռուսական կրթություն ստացածները։ Սրանք հոգու մի շերտով թրքատյաց են, մյուս շերտով ռուսահպատակ։ Անկախ Արցախի հնարավորությանն այսօր քչերը, շատ քչերն են հավատում։ Եթե անգամ Ղարաբաղը 1988 թ. սահմաններով անկախություն ստանա, միևնույն է, տարածքով հայտնվում է Ադրբեջան պետության տարածքային շրջապատման մեջ, առանց Լաչինի հումանիտար միջանցքի։ Հեռանկար չկա։ Մշտապես մեն-մենակ Ադրբեջանի հզորության առաջ։ Հայաստանի հնարավորություններին Ղարաբաղը լավ ծանոթ չէր, գերագնահատում էր, այժմ տեսավ-խղճաց, գիտի, որ Հայաստանից սպասելիքները մեծ լինել չեն կարող։ Ղարաբաղի իշխանավորի ու մտավորականի վերջնական ապավենը Ռուսաստանն է։ Անդրանիկ Միհրանյանի նման գլոբալ քաղաքագետների Մոսկվայում ծնած ծրագիրը սարսափեցնում է իր պարզունակությամբ. Ադրբեջանն ըստ նրանց, որպես բազմազգ

պետություն, իմպերիա է։ Եթե ազգային փոքրամասնությունների (հայեր, լեզգիներ, քրդեր...) պայքարի միջոցով Ադրբեջանը մի տևական շրջան ցնցես, ապա այն կփլուզվի մանր պետությունների կամ կդառնա ֆեդերատիվ կառուցվածք։ Ահա թե ինչու սրանց ամենամեծ նպատակը Ադրբեջանի քաղաքական ապակայունացումն է, իշխանությունների հերթափոխը։ Չեն ուզում տեսնել, որ իշխանությունների հերթափոխից Ադրբեջանը ոչ միայն չի թուլանում, այլև կազմակերպվում է ու զորանում։

Շարունակությունը պարզ է. առճակատումն Ադրբեջանի հետ շարունակել-ձգձգել, Լաչինի միջանցքը բանուկ պահել, Հայաստանը վերածել ռազմական բազայի, Հայաստանի, ռուսական առանձին շահագրգիռ շրջանների, Մոսկվայի ղարաբաղցի ձեռներեցների միջոցով անհրաժեշտ զենք, զինամթերք, վառելիք ու սնունդ ստանալ, թեժ պահել կրակը, մինչև Ռուսաստանը հարմար կհամարի միջամտել...

Ադրբեջանում Ղարաբաղի ռուսասիրությանն ու մեր ռուսահակվածությանը քաջածանոթ են ու ամենաշատը կատաղում ու զգուշանում են դրանից։ Լավ պատկերացնում են, որ Ղարաբաղի հակամարտությունը շարունակելը Ղարաբաղն ու Հայաստանն ամբողջությամբ կնետի ռուսաց գիրկը, հայերը նորից Անդրկովկասում ռուսաց հենարանը կդառնան։ Պաշտպանվելով Ադրբեջանից Հայաստանը կզոհի իր անկախությունը վտանգելով Ադրբեջանի անկախությունը։ Նաև սրանից է Ադրբեջանի հակվածությունը առանց միջնորդների գտնել Ղարաբաղի խնդրի լուծման Ադրբեջանին ու Հայաստանին ընդունելի տարբերակ։

Մի տևական շրջան Հայաստանը ռազմական բազայի վերածելն ու Հայաստանում ռազմատենչություն բորբոքելը ձեռնտու է առանձին կուսակցությունների, քաղաքական գործիչների, պատերազմով ապրող, հեքիաթային գումարներ դիզող խմբերի։

Մոսկվայի գլոբալիստները վատ գիտեն մեր պատմությունը կամ գիտեն, որ իրենց սխալը ճակատագրական կլինի Ղարաբաղի ու Հայաստանի համար, ոչ իրենց: Չի տուժի նաև Ղարաբաղի այն իշխանավորը, որը պատրաստ է Ղարաբաղից դուրս ապրելու:

Իսկ կլինի այսպես. եթե մենք շարունակենք կառչել Ռուսաստանից, Ադրբեջանին կստիպենք իրոք Ռուսաստանի միջոցով լուծել Ղարաբաղի հարցը: Կկայանա ռուս-ադրբեջանական պայմանավորվածություն, Ադրբեջանը կզիջի ռուսներին հետաքրքրող կարևոր մի հարց, իսկ Արցախը կհայաթափվի հաշված օրերում և վերջնականապես:

Ղարաբաղի խնդիրը երեկ էլ, այսօր էլ հայ-ադրբեջանական հակամարտություն է, որքան էլ Հայաստանի իշխանությունները պարզունակ փորձեր անեն այն ներկայացնելու որպես Ադրբեջան-Լեռնային Ղարաբաղ հակամարտություն ազգային ինքնորոշման հողի վրա:

Ինչպե՞ս ծնվեց Ղարաբաղի հարցը: Ճիշտ-սխալ, ժամանակին-անժամանակ, մեղավոր-արդար. այս հարցադրումների ժամանակը դեռ կգա: Այս թեմաներով «հայ-ադրբեջանական շարունակվող ասուլիսը» ժամանակավրեպ է ու վտանգավոր: Հայաստանի պատգամավորների ուղերձում մենք խելամտորեն հրաժարվեցինք նման վեճերից առաջին անգամ երկու ժողովուրդներին առաջարկելով համատեղ գնահատել հայ-ադրբեջանական խորացող հակամարտության հնարավոր զարգացումն ու հետևանքները: Այս հակամարտության խորացումն սպառնում է դրկից երկու ժողովուրդների անկախ պետությունների կայացմանը: Հայաստան-Ադրբեջան բարիդրացիությունը, ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը, երկու պետությունների քաղաքական-տնտեսական փոխշահավետ համագործակցության վերականգնումը, դրա հետագա զարգացումն ու ծավալումը երկու պետությունների անկախության ու ժողովրդավարության անհրաժեշտ պայմաններ են, Ադրբեջանում սա ավելի ու ավելի շատ են սկսում հասկանալ: Չի կարելի շարունակել թերագնահատել մեր հարևանին. սա էր «Ազգ» թերթի նոյեմբերի 14-ի այնքան աղմուկ հանած

«Ինքնաթղթադրամի» գլխավոր դասը: Մեր պատմությունը ցույց է տալիս, որ մենք միշտ պատժվել ենք այդպիսի դասերը ոտնահարելու համար:

Թե Արցախում, թե Հայաստանում եկեք ազնվորեն մոտենանք ինքնապաշտպանության հայ զինվորներին: Հիանանք նրանցով ու գնահատենք անձնազոհության հասնող նրանց արիությունը: Եվ մեր զոհված տղաների ու եղբայրների հիշատակը հարգենք բացառելով նոր զոհեր. իր ժողովրդի և պետության զինվորն իր գործը լավ է անում: Եկել է ժամանակը, որ պետությունն ու ժողովուրդը պաշտպանեն զինվորին: Հայրենիքի ապահովությունն այսպիսի պատերազմով վտանգել, նոր-նոր կազմավորվող բանակը գցել եղբայրասպան սպանդի մեջ, հանցանք ենք գործում: Ղարաբաղում կռվող զինվորը մեծ գործ է արել և դեռ պիտի անի: Իր անկոտրում վճռականությամբ նա իր հողում ապրելու իրավունքի անհրաժեշտ երաշխավորն է, Լեռնային Ղարաբաղի լինելիության առհավատչյան:

Պատերազմը մերժելով կամ ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորմանը կողմ լինելով խաղաղություն չի հաստատվի ոչ Ղարաբաղում, ոչ Հայաստանում, ոչ էլ Ադրբեջանում: Արդար վճռի անհույս ակնկալիքով մենք մեր հարևանի հետ վեճը քարշ տվեցինք միջազգային ատյաններ մեզ մխիթարելով քաղաքակիրթ ընկերակցության ցավակցություններով ու անհեռանկար հուսադրումներով: Փորձելով սևացնել և «ըստ արժանվույն» ներկայացնել մեր հարևանին մենք խորացրինք թշնամությունն ու առճակատումը: Զուր ջանքեր. Ամենավերին ատյանների ՄԱԿ-ի ու ԵԱՀԽ-ի վճիռները Ադրբեջանին ձեռնտու են: Ուրեմն ի՞նչ ենք փնտրում մեծ աշխարհի մայրաքաղաքներում: Փորձված են բոլոր միջնորդ պետությունների հնարավորությունները: Ծնված մեռել են զինադադարի ու հրադադարի տարբեր պայմանավորվածություններ, բազում համաձայնագրեր: Հայաստանի պատգամավորների հայտնի ուղերձում առաջարկում ենք ամենակարճ ու հավաստի, ցավալիորեն մինչ այս անտեսված ճանապարհը հայ-ադրբեջանական

հակամարտության կարգավորում երկկողմ-անմիջական հայ-ադրբեջանական հարաբերություններով, առանց միջնորդների:

Հերիք է «հարսնություն» անենք: Հողի հարց է: Լքեցիր հողդ գաղթական ես ու հանցագործ: Անկեղծ ու ճշգրիտ չես լռիր. ցավդ ու ազգային երազդ ներսումդ խեղդիր. անելիքդ հստակիր ու պատասխան տուր չարածիդ համար: Ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ Ղարաբաղի ու Հայաստանի ժողովրդի նյութական հնարավորություններից չծնված, հայ իրականությունից դուրս իրողություններում ձևավորված խնդրի լուծումը չունենք: Չի կարելի, լսո՞ւմ եք, վերջապես ստիպենք-օգնենք իրարու, որ մեր պետությունը հասկանալի ձևակերպի ի՞նչ հարց կամ խնդիր ենք լուծում, ի՞նչ է նշանակում Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորում, ինչպե՞ս իրագործել: Ու լծվենք իրագործմանը:

**Հայրենի հողի ու նրա վրա ապրող ժողովրդի անկորուստ փոխանցումը սերնդից սերունդ յուրաքանչյուր սերնդի գլխավոր պատգամն է ու գլխավոր գործը**

Հայրենի հողի ու հողի տիրոջ կորուստի համար չկա անձնական պատասխանատվություն: Մեր սերնդի ի խստագույնս կդատեն հաջորդ սերունդները, և վերջ: Արցախի հարցի լուծման պատասխանատուն Հանրապետության նախագահը չէ, ոչ էլ Գերագույն խորհուրդը կամ Լեռնային Ղարաբաղի այսօրվա իշխանությունը, ոչ էլ երեքը միասին: Պատասխանատուն միայն մեր սերունդն է յուրաքանչյուրս իր չափով: Ղարաբաղի խնդիրը մի լուծում-իրագործում կարող է ունենալ Հայաստան պետության ձևակերպումը: Բայց մինչև ձևակերպումը այն պիտի ձևավորվի. դրան պիտի մասնակցեն հասարակական-քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները, Հայաստանի ու Ղարաբաղի իշխանությունների բոլոր մակարդակները, իր հողում ապրելու վճիռ կայացրած ղարաբաղցին ու հայաստանցին: Հայրենի հողը չկորցնելու այդ մեն-միակ լուծումը, ճանապարհը կամ հնարավորությունը կարող է իրագործվել միայն Հայաստանի պետության ու ժողովրդի, Լեռնային Ղարաբաղի ու նրա ժողովրդի հոգևոր հանճարի ու նյութական միջոցների գերագույն լարումով ու կազմակերկմամբ: Իսկ հիմա Հայաստանում և Ղարաբաղում,

մտավորական, իշխանավոր, զինվոր, աշխատավոր ու քաղաքական գործիչ, մաքուր թուղթ ու գրիչ վերցրեք ու, խնդրեմ, պարզ-հասկանալի ձևակերպեք Ղարաբաղի խնդրի լուծման Հայաստան պետության այսօրվա տեսակետը... Պատկերացնո՞ւմ եք տեսակետների ի՞նչ խայտառակ խճանկար կստացվի իմ սերնդի հանցավոր անպատասխանատվության ու տհասության խարանը:

**Իշխանությունը նախ և առաջ պատասխանատվություն է**

Ժողովուրդ ու ընդդիմություն այսօրվա իշխանություններին ու ՀՀՇ քաղաքական գործիչներին չեն ներում Ղարաբաղի հարցի շահարկումն ու օգտագործումն իրենց իշխանական նպատակների համար: Ասում են «միացում» ու «Ղարաբաղ» վանկարկելով տապալեցիք կոմունիստների իշխանությունը, հիմա ուզում եք հրաժարվե՞լ Ղարաբաղից: Այս խոսակցությանն իմ մասնակցելն անազնիվ կլինի, չնայած ես ՀՀՇ վարչության անդամ դարձա 1989 թ. նոյեմբերին, 1990 թ.-ից ՀՀ խորհրդարանի անդամ եմ: Շարժման առաջին պահանջատիրական փուլում ես եղել եմ շարքային անդամ, ինչպես հարյուր հազարները, շարժման երկրորդ հայոց պետականության կայացման փուլին ես մասնակցել եմ որպես ՀՀՇ վարչության անդամ և պատգամավոր ունենալով Ղարաբաղի խնդրի կարգավորման այսօրվա մեր տեսակետը: Դժվար չէ ապացուցելը: Պարզապես մինչև վերջերս այդ տեսակետը լայն շրջանների կողմից չէր ընկալվում: Չէր ընկալվում անգամ ՀՀՇ վարչությունում... Ինչևէ: Ես ասում եմ, որ այսօր և Ղարաբաղում, և Հայաստանում ժողովուրդը պիտի արգելի որևէ իշխանավորի ու քաղաքական գործչի Ղարաբաղի խնդրի շահարկումը ցանկացած հիմնավորմամբ ու ձևակերպմամբ: Իշխանավոր, մտավորական ու քաղաքական գործիչ մեր պատասխանատվությամբ կկարողանա՞նք վեր կանգնել քաղաքական առևտրից ու գործարքից, հաղթահարել չարագործությունն ու նեղացածությունը, լինել հնարավորին չափ անկեղծ ու առավելագույնս պատրաստակամ, եթե հարցն առնչվում է Ղարաբաղի խնդրի կարգավորմանը: Մեր նոր-նոր ձևավորվող քաղաքական միտքը շատ շուտ կուսակցականացվեց ճնշելով անհատականության դրսևորումը: Ինչպե՞ս Հայաստանում ծնված ու մեծացած մտավորականը հանկարծ մեկ տարում կարողացավ յուրացնել Հայ հեղափոխական դաշնակցության կամ Ռամկավար ազատական կուսակցության

տասնյակ տարիների քաղաքական մտածողությունը, որ դա է կիրառում Ղարաբաղի բարդ ու զգայուն խնդրի լուծումները փնտրելիս: Նույնը հաստատ կարելի է ասել նաև այս հողում ձևավորված կազմակերպությունների անդամների համար:

Հատուկ նշանակության հարց է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հարաբերության հարցը: Նախ այսօր Լեռնային Ղարաբաղի իշխանություններն այնքան են ներկայացնում Ղարաբաղի ժողովուրդը, որքան այսօր Հայաստանի իշխանություններն են ներկայացնում հայ ժողովուրդը: Ոչ ավելի: Շարժման ողջ ընթացքում գործողությունների պլանը թելադրվել է Ղարաբաղից: Տասնյակ կարևորագույն վճիռների, դրանց ժամկետների ու կիրառման հետ համաձայն չէին ոչ միայն Հայաստանի այն ժամանակվա իշխանությունները, այլև «Ղարաբաղ» կոմիտեն կամ ՀՀՇ վարչությունը: Փոխանակ սկզբունքային բաց-փաստարկված խոսակցության ընթացքում փոխադարձ ընդունելի որոշումը գտնելու ամոթխած, կեղծ համերաշխությունը, իրար դուր գալու ու էլի ինչ-որ բաներ այլ ուղղությամբ էին կողմնորոշում: Կամ «Ղարաբաղ» կոմիտեն էր ժողովրդի միջոցով անմիջապես ազդում իշխանությունների վրա, կամ ժողովրդի միջոցով ինչ-որ խմբեր ազդում էին «Ղարաբաղ» կոմիտեի վրա, և վերջինս էլ իր հերթին... Սա եղել է, լավ, բայց սա շարունակվո՞ւմ է: Այսօր ժողովրդի գործոնը չկա: Ղարաբաղի իշխանությունների ցանկացած վճիռ Հայաստանի իշխանություններին է ներկայացվում որպես Ղարաբաղի ժողովրդի միասնական կամքի վերջնական արտահայտություն: Եվ Հայաստանի առանձին քաղաքական խմբեր ստանձնում են ժողովրդի դերն ու անմիջապես սկսում հարձակվել՝ ստիպել Հայաստանի իշխանություններին անվերապահ ընդունել այս կամ այն վճիռը: Այսպիսի գործելակերպը հասցրել է այսպիսի աբսուրդի՝ Ղարաբաղի խնդրի լուծումը ղարաբաղցիների հարցն է: Առանց Ղարաբաղի իշխանությունների Հայաստանի իշխանություններն այսօր ոչ միայն ինչ-ինչ փաստաթղթեր ստորագրելու, այլև ինչ-ինչ առաջարկներով ու գործողությունների ծրագրերով հանդես գալու իրավունք չունեն: Այսպես փոխանակ իրար օգնելու, համագործակցելու և ոչ հիմնավոր քայլերից իրար ետ պահելու, կործանում ենք մեկմեկու: Իր վճիռները կայացնելիս Ղարաբաղը նախ և առաջ Հայաստանի հնարավորությունների վրա է հենվում: Բայց Ղարաբաղն անտարբեր չէ և,

ինչպես ցանկացած հայ գաղթօջախ, պատասխանատու է Մայր Հայրենիքի ճակատագրի համար։ Հայաստանի պետությունը իր գործողություններում պարտավոր է առաջնորդվել Լեռնային Ղարաբաղի անվտանգության ու նրա ժողովրդի ապահովության շահերով, իսկ այդ շահը ձևակերպվում է Հայաստանում։

Հայաստանի ու Ղարաբաղի իշխանավոր ու քաղաքական գործիչ, թեկուզ մեծ ուշացումով, բայց կունենա՞ն իրար ուղիղ նայելու և ուղիղ խոսելու շիտակություն, դառը ճշմարտությունները չշրջանցելու խիզախություն։ Ղարաբաղի խնդրի կարգավորման համաձայնեցված ծրագիրն անհնարին կլինի իրագործել առանց սերտ համագործակցության ու համապատասխան կառույցների։ Հայաստանի ու Ղարաբաղի համար գլխավորն ու սկզբնականը Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման համաձայնեցված բանաձևի շուտափույթ մշակումն է։

**Իշխանությունը մահանում է, երբ օտարում է իր անելիքը՝ իր իսկ լուծելիք խնդրի նկատմամբ պահանջատեր դառնալով**

ՀՀ ԳԽ-ը փորձեց հանրապետության քաղաքական կյանքի այս տարվա հունիսյան ճգնաժամը շրջանցել՝ խուսափելով պատասխանատվությունից։ Լեռնային Ղարաբաղի մասին հուլիսի 8-ի հայտնի որոշումով խորհրդարանն իրեն փաստորեն մեկուսացրեց Ղարաբաղի քաղաքական կարգավորման խնդրից հայտնվելով մի տեսակ «խաղից դուրս վիճակում»։ Չճանաչելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը խորհրդարանը Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարեց միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում։ Ստանձնելով Ղարաբաղի խնդրի կարգավորման պահանջատիրոջ կեցվածք խորհրդարանը մտասևեռվեց խնդրի կարգավորման ուղղությամբ ՀՀ Նախագահի արածի ու չարածի վրա։ Ղարաբաղի հարցի լուծումը այդ որոշումով ոչ միայն չթեթևացավ ու չպարզվեց, այլև խճճվեց-բարդացավ...

Ահա և ՀՀ ԳԽ Արցախի հարցերի հատուկ հանձնաժողովի 1992 թ. նոյեմբերի հայտարարության նախագիծը։ Սա, իհարկե, ՀՅԴ պատգամավորական խմբակցության մոտեցումն է, որը պաշտպանում է նաև Հայ Հեղափոխական Դաշնակցությունը։ Դաժան

ու անտարբեր դատարկվող հողի ճակատագրի առաջ նորից նույնը. «Հայաստանի Հանրապետության ԳԽ-ը գտնում է, որ նման բանակցությունների արդյունավետությանը մեծապես կնպաստեր առաջընթացը ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ լուծման գործում, որը հիմնական եւ անհրաժեշտ պայման պիտի դառնա անմիջական երկխոսության Ադրբեջանի Հանրապետության և ԼՂՀ-ի միջև։

Հայաստանի Հանրապետության ԳԽ-ը կոչ է անում Ադրբեջանի իշխանություններին անհապաղ սկսել բանակցություններ ԼՂՀ-ի օրինական իշխանությունների հետ երաշխավորելով Հայաստանի Հանրապետության ԳԽ-ի ամենայն աջակցությունը»։

Այս նախագիծն ստացել է 85 պատգամավորի քվե, իսկ խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքցյանը ոչ միայն կողմ է քվեարկել, այլև փորձում էր հայտարարությունն անցկացնել առանց քվեարկության որպես «առարկություն չունեցող»... Սա ճիշտ հուլիսի 8-ի ԳԽ-ի որոշումն է, որից հրապարակավ դժգոհ է հանրապետության Նախագահը։ Դա, որպես «ներքաղաքական պարտադրված կոմպրոմիս» Բաբկեն Արարքցյանը ստիպված ընդունեց։ Ուրեմն այնքա՞ն անլուրջ բա՞ն է քաղաքականությունը, որ կարելի է և որպես պետություն չճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, և կոչ անել, որ դա անի Ադրբեջանը (անհապաղ սկսել բանակցություններ ԼՂՀ-ի օրինական իշխանությունների հետ) խոստանալով Հայաստանի աջակցությունը։ Իսկ ավելի վաղ կարելի էր հայտարարել, որ ԼՂՀ-ի ճանաչման փաստը ոչ մի կասկած չի հարուցում, մնում է պահը ճիշտ ընտրել... Հետո կարելի է ապացուցել, որ ճանաչելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հայաստանը բռնում է պատերազմի ուղին մերժելով Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման ճանապարհը... Եվ այս բոլորը օրը ցերեկով, մեկնաբանելով թերթով ու հեռուստատեսությամբ։ Ի՞նչ հասկանա այս անսովոր զբաղմունքից հանրապետության անմեղ-հոգսաշատ քաղաքացին։

Քաղաքականության և Ղարաբաղի հարցի մասին Հայոց համազգային շարժման չորրորդ համագումարի ընդունած բանաձևը ՀՀՇ-ի հերթական փորձն է մեկտեղելու երկու անհամատեղելի խնդիր՝ հայոց պետականության կայացումը տարածաշրջանում

հարևանների հետ խաղաղ, փոխշահավետ գոյակցության առաջնահերթ նախապայմանով, և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրողության խաղաղ հաստատումը... Փաստաթղթի հակասականությունը համագումարին ցույց տալու իմ ու Կտրիճի ջանքերն անօգուտ եղան։

«Հայոց համազգային շարժումը դատապարտում է քաղաքական կոնֆլիկտները զենքի ուժով լուծելու փորձերը և հայտարարում, որ միայն Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների խաղաղ բանակցություններն են հարցի կարգավորման միակ ուղին։ Ելնելով ստեղծված իրավիճակից, կրելով մեծագույն պատասխանատվություն ազգի և նորաստեղծ պետության ճակատագրի հանդեպ ՀՀՇ չորրորդ համագումարը գտնում է, որ Հայաստանի իշխանությունները հնարավոր բոլոր միջոցները պետք է օգտագործեն պատերազմից խուսափելու համար, գործադրեն բոլոր հնարավորությունները, որպեսզի Արցախում ապահովեն մարդու իրավունքներն ու ազգի ինքնորոշման իրավունքը և հասնեն այն բանին, որ Ադրբեջանի հետ բանակցություններում Արցախը ճանաչվի որպես բանակցող կողմ»։

Ահա հանրապետության իշխանությունների քաղաքական մտքում իշխող երկվությունն է, որ ձգձգեց հայոց անկախ պետության կայացումն ու զորացումը։ Եվ այսքանից հետո ի՞նչ կա զարմանալու, որ ՀՀ ԳԽ ՀՀՇ ներկայացնող պատգամավորները կողմ են քվեարկում Գերագույն խորհրդի հուլիսի 8-ի որոշմանը, դեմ չեն Դաշնակցության ներկայացրած հայտարարության նախագծին անվերջ պատերազմով պարտադրել Ադրբեջանին խաղաղ կարգավորման ուղին այդպես էլ ոչ մի անգամ խիզախություն ու պատասխանատվություն չունենալով հստակել խաղաղ կարգավորման ուղին, խաղաղ կարգավորման բանաձևի իրենց ուրվագիծը...

Ես բարձր եմ գնահատում իմ մի խումբ գործընկերների այս տարվա նոյեմբերի 2-ի ուղերձը հասցեագրված Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին, խորհրդարաններին, քաղաքական գործիչներին ու մտավորականներին։ Այս ուղերձով 56 պատգամավորներ վերջապես հայտնում են Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման գլխավոր գործոնը դառնալու իրենց վճռականությունը։ Ուղերձն,

իհարկե, քաղաքական գործիչների քաղաքացիական փաստաթուղթ է, որը հետո տարբեր քննարկումների արդյունքում պիտի ծնի քաղաքական տարբեր փաստաթղթեր։ Այլ կերպ այս ուղերձն այդպես էլ կյանք չի ունենա։ Ուղերձի քաղաքացիական-հուզական բնույթը չի նսեմացնում ոչ փաստաթղթի կենսունակությունը, ոչ էլ նրա հեռահարությունը։

**Երկարատև անորոշությունից իշխանությունը նաև կաթվածահար է լինում**

Այսօր Հայաստանում հանրապետության նախագահն իրագործում է Ղարաբաղի խնդրի կարգավորման իր ծրագիրը։ Ահա այդ ծրագիրը մեկ նախադասությամբ. «Չհայտարարված, բայց իրական պատերազմ Ադրբեջանի հետ մինչև Ղարաբաղի անվտանգության միջազգային երաշխիքների ապահովումը»։

Նախագահը հետևողական է իր ծրագիրն իրագործելիս հարցի եռանդուն միջազգայնացում, հավերժ Ռուսաստանի հետ հանուն ռուսաց զենքի, զինամթերքի ու վառելիքի, հայ-ադրբեջանական միայն էպիզոդիկ հարաբերություններ... Իհարկե, նախագահն ամենից լավ գիտի, որ Լեռնային Ղարաբաղը ցանկացած դեպքում մնալու է Ադրբեջան պետության կազմում, բայց ամեն ինչ անում է հանուն Անկախ Ղարաբաղի, Հայաստանն ավերակի վերածում ու, քանդելով-սեղմելով Ղարաբաղը, ապացուցում Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտման անհնարինությունը... Մինչև դանակը հասնի ոսկորին, ու հարցն ընթացքում լուծվի, ինչպես հանրապետական ներտնտեսական բնույթի ցանկացած լուրջ հարց։ Խաղաղ կարգավորման ծրագի՞ր։ Թվում է՝ մեկ տարի առաջ նախագահի ծրագիրը վիճարկելն իմաստ ուներ, իսկ այսօր, երբ Ղարաբաղի ու Հայաստանի տնտեսական-քաղաքական իրողությունները մեր առաջ են, մի տեսակ ամոթով ու սարսափով եմ կարդում իր նախագահության մեկ տարվա առթիվ նրա հեռուստատեսույթը... Կարծես ոչինչ չի եղել...

**Իշխանությունը բարոյազրկվում է, երբ ժողովրդի, պետության լինել-չլինելու հարցերը վճռելիս երկնչում է ու առաջնորդվում մեծ հանրությանը դուր գալու գործելաձևով**

Առաջին վարչապետը 2-3 տարում ավետյաց երկիր խոստացավ, հետո մխիթարեց ժողովրդին՝ Հայաստանում սով չի լինի, վերջում նեղացավ աշխարհից, որ իրեն ըստ արժանվույն չգնահատեցին, ու գնաց։ Այսօր նա պաշտպանության նախարար է և հրամայում է հավատալ, որ տասը տարի հետո Հայաստանին շատերը կնախանձեն։ Մեղք չե՞նք տասը տարի այսպիսի կյանքով... Իսկ մեր ազգային բանակում ամեն ինչ շատ լավ է նաև այսօր։

Եթե նախարարն իրագործի իր ազգ-բանակ (ազգովին զինվորագրվենք բանակին) ծրագիրը, բոլորս կփրկվենք 850 գ հաց, տաքացվող ու լուսավոր «կազարմաներ», տաք շորեր...

Երկրորդ վարչապետը խոստացավ բավարար հաց, բավարար ջերմություն և բավարար կենցաղ։ Ուղղակի նրանից կախված չէին հանգամանքները, և ստիպված էինք տարվա եղանակին կամ ամիսների հետ էներգետիկ մի ռեժիմից անցնել մյուսին։ Այդպես վեց թե ութ ռեժիմ հանդուրժեցինք։ Հրաժեշտին նա ժառանգություն թողեց հացի դատարկ շտեմարաններ ու վառելանյութի դատարկ տարաներ...

Երրորդ վարչապետը դեկտեմբերին 350 գ հացով, ամսական 300 գ մսով ու մի այդքան էլ կարագով ապահովելու խնդիր դրեց...

Հաշմանդամ ու թոշակառու ժողովրդի բարեգործ առաջնորդներ, վերջապես աշխատելու, աշխատանքով ընտանիք ու երկիր շենացնելու, իշխանություն ու հաշմանդամ պահելու հնարավորություն ստեղծեք։

Քաղաքական հա՞րց է։ Ինչո՞ւ եք տնտեսականով այլափոխում։ Քաղաքական լուծումներ գտեք, պարտադրեք։ Սա ի՞նչ բարեգործական պատերազմ է։ Եթե Հայաստան պետություն-թիկունքը չի աշխատում, եթե կյանքը կանգնել է վերջնականապես, ու չեն երկիրը վերածել մի գերեզմանոցի, ի՞նչ հույսով եք կռվում։ Եթե չենք աշխատում, ո՞ւմ հաշվին ենք սնվում ու կռվում։ Եթե սրբազան կռիվ է այս մաքառումը, ինչո՞ւ ոչ մի կերպ

չենք համախմբվում, կազմակերպվում, զորանում, այլ շարունակ կազմալուծվում ենք, թշվառանում ու բարոյալքվում: Եթե համոզված եք, որ ձեր բռնած ուղին ճշմարիտ է, ու տեսնում եք, թե ուր եք տանում ժողովուրդն ու պետությունը, խիզախեք ու ասեք ժողովրդին՝ դիմացեք մեկ տարի, երկու տարի, արեք այս ու այն, և կհասնենք մեր ուզածին: Մի խաբեք:

**Սա է մեր տեղը, սա է մեր հողն ու հայրենիքը, ուրեմն ճիշտ քաղաքականություն բանեցնենք մահմեդական հարևանների հետ**

Ես թշնամի եմ անկախությանը, եթե նրա հաստատման չարչարանքը հայրենի հողն է դատարկում, բնիկ ժողովրդին դարձնում գաղթական, թշվառացնում հայրենիքն ու բարոյալքում ժողովուրդը: Ով շարունակում է իմ սերնդին պարտադրել այսօր անլուծելի, իմ սերնդի հավաքական ուժից վեր խնդիր Անկախ Արցախ պետության հաստատում, նա պարտվողականությամբ անդամալուծում է իմ սերունդը:

Մեզ պարտվել չի կարելի: Այսքա՛ն մաքառումից, նվիրումից ու անձնազոհությունից հետո հայոց համար պարտությունը ճակատագրական է: Ադրբեջան պետության կազմում Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովումը հնարավոր է: Դա է մեր հաղթանակը: Ադրբեջան պետության քաղաքացի ղարաբաղցու իր պապենական հողում ապահով ապրելն իրագործելի է: Հայաստանի պետությունն ահա այս լուծմանը պիտի ուղղի իմ սերնդի հոգևոր ու նյութական ուժերը: Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորումը շատ ավելի մեծ ու բարդ աշխատանք է, քան հայ-ադրբեջանական այս չհայտարարված պատերազմը շարունակելը: Մեր հարևանի հետ մեր վեճի խաղաղ կարգավորումը երկու ժողովուրդների ստեղծագործ-կառուցողական բոլոր ուժերի բացառիկ կազմակերպում ու համախմբում կպահանջի: Բայց այս աշխատանքի ընթացքում մենք կվերականգնենք հայ-ադրբեջանական բարիդրացիությունն ու տնտեսական-քաղաքական բոլոր կենսական կամուրջները, իսկ արդյունքում կունենանք Հայաստան-Ադրբեջան անկախ պետությունների քաղաքակիրթ համակեցության կերպը որպես Լեռնային Ղարաբաղի ու նրա ժողովրդի անվտանգության ու խաղաղ կյանքի

ապահովման գլխավոր երաշխիք։ Մի հայրենիք ադրբեջանցին ունի, մի հայրենիք՝ հայը։ Եվ ղարաբաղցու հայրենի հողում ապրելու վճռականությունն անկոտրում է։ Եթե շարունակ իրար կյանքը թունավորելու համար չենք ստեղծված, եթե ապրել-շենանալ ենք ուզում, պիտի վերջապես գտնենք բարիդրացիության բանալին։

*04.12.1992թ.*

## Անցածով հիպնոսացած քնած է ժողովուրդը

*Իսկ քնածի գլխին միշտ պատահարներ են գալիս. այդպես եղավ եւ 1915 թվին. որ կոչվում է Մեծ Եղեռն:*

Հայոց հերթական անհամբերությունը կամ ավելի ճշգրիտ «կրավորական համբերությունը», հատավ 1988 թ. փետրվարին, երբ այլոց խոստումներից, նպաստավոր թվացող պայմաններից ու աչքերից խանդավառ, անպատրաստ ու անծրագիր մեր հավաքականությունը դրսևորեց իրեն բնորոշ հապճեպությունն ու կիսատ-պռատությունը «հայոց համազգային պոռթկումով» ղարաբաղյան շարժումով, որ, որպես ինքնախաբեություն թե համազգային մխիթարանք, շարունակում ենք ներկայացնել իբրև ազգային-ազատագրական շարժում: Մեզանից դուրս գտնվող իրողության մեր կողմից այդպես էլ չճանաչված շրջապատի հրամցրած «նպաստավոր» հանգամանքներից օգտվելը, այսպես կոչված, «քաղաքական ճիշտ կողմնորոշումներ» կատարելը հայոց ամբողջ անփոփոխ պատմությունն է մինչև այսօր: Հիմա, երբ խոստումների կիրարկումներն անվերջ ուշանում են, ու «նպաստավոր» պայմաններից ստացված արդյունքները սպասվածի հակառակն են դուրս գալիս, իր տեսածից-արածից-պոռթկումից հիպնոսացած քնա՞ծ է ժողովուրդը: Ամեն ոք քաշվի իր տո՞ւնը, գերագույն ճիգով հոգա իր թշվառ կենցաղը, չարացած իշխանությունից ու ՀՀՇ-ից ձեռքը թափ տա... ու իր բախտը, իր վաղվա տնօրինումը հանձնի այսօրվա իշխանություններին ու քաղաքական գործիչներին, ովքեր, այսպես թե այնպես, այս կամ այն չափով գլխավոր մեղավորն ու պատասխանատուն են այս հինգ տարի տևող գեհենի: Անցյալապաշտ ու ընդօրինակող, Մովսես Խորենացու գիտակցությունից ու ինքնադատությունից զուրկ, հետևաբար շրջապատից անտեղյակ, ուզվոր ու անձնահաշիվ ինչ ուզում ենք անե՞նք, հա՞...

**«Եթե այսօր երեկվա նման է, վաղը կլինի այսօրվա նման»**

Ոչ ԽՄԿԿ քաղբյուրոյի 1988 թ. փետրվարի 21-ի որոշումը, ոչ Սումգայիթի ջարդը, ոչ առաջին բռնագաղթը, ոչ առաջին շրջափակումը, ոչ առաջին զինված ընդհարումը, ոչ ռուսաց առաջին զինաթափումը, ոչ Խորհրդային Միության փլուզումն ու Ադրբեջանի,

Հայաստանի անկախ պետությունների հռչակումը, ոչ հայ-ադրբեջանական սահմանի վրա առաջին կրակոցները, ոչ հայ-ադրբեջանական խաղաղ բնակավայրերի առաջին գնդակոծումները ոչինչ չսթափեցրեց մեզ, չպարտադրեց գիտակից ու պատասխանատու քննադատական միտք: Չէ՞ որ պետք է կանխատեսել աներևակայելին, չէ՞ որ կառավարել նախ նշանակում է կանխատեսել, եւ չէ՞ որ կանխատեսելու համար անհրաժեշտ է կատարելապես ու մշտապես ճանաչել շրջապատը, առաջին հերթին հարևաններին: Շատ լավ: Մինչև խորհրդային պետության փլուզումը, Շուշի-Լաչին գործողությունները, մինչև Հյուսիսային Կովկասում բուռն ծավալվող իրադարձությունները կարելի էր արդարացնել, բացատրել նոր իշխանությունների քաղաքական անփորձությամբ ու անցման շրջանի առանձնահատկություններով, մեր համազգային պոռթկման իներցիայով... Իսկ այսօր, հայ-ադրբեջանական խորացող առճակատման, հանրապետությունով մեկ կյանքի անապահովության, երկարատև ու կատարյալ էներգետիկ քաղցի, հայոց համար հանապազօրյա հացի մշտական հայթայթման ու տնտեսական-արտադրական գործունեության անհեռանկար անշարժության պայմաններում ինչպե՞ս բացատրել իշխանությունների ու այսօրվա քաղաքական գործիչների կարճատեսությունը: Հանրապետության Նախագահը իր շրջախմբով, ուզում է «կույրերի» երկրո՞ւմ իշխել: Ո՞ւմ եւ ինչի՞ն են ծառայում Հայաստանը «կռվան» դարձնող դաշնակցական կուսակցության, քաղաքական ընդդիմություն ներկայացնող այլ կազմակերպությունների ավելի ու ավելի բարձր հնչող անպատասխանատու կոչերը, որոնք, թվում է, նախ և առաջ պիտի զգաստացնեին: Իսկ ժողովուրդը փութաջան պատրաստվի իր արդեն ավանդական, երկարատև «ձմռան քնի՞ն»...

Այլ կարևոր գործերից առաջ իշխանության որևէ ղեկավար մարմնի անելիքն իր ղեկավարած զանգվածների զարգացումն ապահովելն է, ինչպիսին էլ որ լինեն պայմանները: Գոյատևումը, մի կարճ շրջան, գուցե կանխավճար ու նախապատրաստություն է զարգացումից առաջ: Բայց երբ անկախ պետություն կառուցող մի ողջ ժողովուրդ, որ նաև Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարի երաշխավորն ու նեցուկն է, ազգային գոյատևումը դարձնում է նպատակ ու խնդիր...

Դիմանալու, դժվարություն ու զրկանք անխոս տանելու անկարողությունը չէ, որ խոսում է, այլ անհատ ոչնչացնող ու պանդուխտ դարձնող, ավելորդության զգացման համատարածումը: Իսկապես, երեքուկես միլիոն հայաստանցուց հարյուր հազարն, ասենք, անմիջապես մասնակցում է հայ-ադրբեջանական առճակատմանը, մի հարյուր հազար մարդ էլ անհրաժեշտ է կռվողներին սպասարկելու համար, իսկ ի՞նչ անի երեք միլիոնը... Չի սովորում, չի աշխատում, չի խաղում, չի ծնում ավելորդ ուտող բերան ու ծանրացող բեռ է պետության համար: Պիտի հեռանա առաջին հերթին ընդունակն ու ըմբոստը, առանց ստեղծելու ապրել չկարողացողը, կենսասերը... Իսկ ժողովուրդը համազգային ու համապետական չմարող կոչերից հուսահատ ոչ մի հեռանկար ու լուսավոր ճանապարհ չտեսնելով, պիտի քնի՞...

**Ինչո՞ւ ես գնացի Բաքու**

Ինչպե՞ս ցնցել այս թմբիրի մեջ գտնվող իշխանություն ու քաղաքական գործիչ, մտավորական ու աշխատավոր, ինչպե՞ս արթնացնել նրանց պարտադրելով մեզ համակած անհանգստությունն ու իրագործելի թվացող ծրագիրը: Կտրիճ Սարդարյանի հետ վճռեցինք գործել մեր պատասխանատվության գիտակցման չափով: Հոկտեմբերի 2-ին «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթում լույս տեսավ իմ «Անապահով հողը հայրենիք լինել չի կարող» հոդվածը: Հոկտեմբերի 22-ին «Ազգ» թերթում տպագրվեց «Այլախոհության պահն է անց, խորհելու եմ կոչում» իմ հոդվածը, որտեղ շարադրված էին հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման մեր ճանապարհը հայ-ադրբեջանական երկկողմ-ուղղակի, առանց նախապայմանների հանդիպումներ ու համաձայնեցված գործողություններ... Իմ առաջարկած ուղերձը 55 պատգամավորների օգտակար թվաց: Այն, որ ուղերձի ռուսերեն ու հայերեն տարբերակները մի քանի օր «շրջում» էին խորհրդարանում, այն, որ յուրաքանչյուրն ուշադիր կարդում էր, հարցեր տալիս, իր գործընկերների հետ խորհրդակցում ու մտքեր փոխանակում, և այն, որ 150 պատգամավորներից ուղերձը ստորագրել էր 55-ը, հերքում են ամեն մի կասկած ու դավ: Յուրաքանչյուր ոք գիտեր ինչ էր անում: Իսկ ուղերձը որպես փաստաթուղթ, ես շատ եմ կարևորում ու ողջունում եմ այն ստորագրած իմ գործընկերներին:

Ուղերձը եմ կարող էի ֆաքսով, փոստով թե ձեռաց հանձնել հասցեատերերին ու համարել մեր գործն ավարտված։ Բայց այս մի քանի տարում ամեն «ջուռի» հարյուրավոր փաստաթուղթ տեսած Հայաստանում ու Ադրբեջանում ուղերձը կնկատվեր որպես հերթական... Հասարակական աղմուկ էր պետք, որը հասարակության ուշադրությունը սևեր ուղերձի, նրա առաջարկած խաղաղ կարգավորման ճանապարհի հեռահարության ու մատչելիության վրա։ Համ էլ աշխարհի հզորների հորդորներով հայ-ադրբեջանական հարաբերությունները մենք այնպես ենք խճճել-անլուծելի դարձրել, որ «կաբինետային քաղաքականության» շարունակումը քիչ բանով կօգնի։ Հայ և ադրբեջանցի քաղաքական գործիչների հարաբերման չօգտագործված, ուղերձի ոգուն հավատարիմ և նրա իմաստից բխող ձևեր են անհրաժեշտ՝ անսպասելի-խոցելի, բայց և կարճ ու շիտակ։

Հայաստանում շատերը գիտեին Ադրբեջան գնալու իմ վճռի մասին։ Չեմ մտածել թաքցնելու մասին։ Գուցե շատերը լուրջ չէին մոտենում կամ չէին հավատում։ Վիրավորական է, որ աջ ու ձախ կասկածում են, թե ՀՀՇ-ի կամ հանրապետության նախագահի հանձնարարությունն եմ կատարել։ Սիրով կկատարեի, որովհետև հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման մեր առաջարկած ծրագիրն անհնար է իրագործել առանց Հայաստանի պետության ու ժողովրդի, Ղարաբաղի իշխանությունների ու Ղարաբաղի հողում ապրելու վճիռ կայացրած բնակչության գերագույն լարումի։ Ոչ միայն հանձնարարական չկար, այլև իմ այցի ընթացքում Հայաստանից սպասելիքը քաղաքական աջակցությունը չեղավ։ Հակառակը. Արդեն Բաքվում Բաքվի հեռուստատեսային ծրագրով լսեցի ուղերձը ստորագրած 16 պատգամավորների ստորագրությունից հրաժարվելու մասին։ Ադրբեջանի քաղաքական շրջաններում զգուշությունն իմ այցի նկատմամբ ավելի նկատելի դարձավ։ Ինձ մնաց իմ միակ զենքը՝ շահագրգիռ, շիտակ ու ամբողջական խոսակցությունը հայ-ադրբեջանական հակամարտության ծագման գնահատականների ու հարաբերությունների վերականգնման թեմայով։ Արդեն Բաքվում, այցի վերջում ուրվագծել էի 3-4 հոդված, մշակել սկսած աշխատանքի զարգացման ծրագիր։

Երևան ժամանելուս հաջորդ օրը երեկոյան, այցելեցի հանրապետության նախագահին։ Մինչ այդ նա, առանց ինձ հետ խոսելու, այցի արդյունքներին չծանոթացած, մամլո

ասուլիսում հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման մեր մոտեցման որակումը տվել էր մեր քաղաքական կյանքի քարտեզում ծայրահեղ պացիֆիզմի գոյությանը պետք է հանդուրժող մոտենալ, ինչպես և ծայրահեղ ռազմատենչության գոյությանը: Նախագահն ինձ լսեց հոգնած-անտարբեր: Վերջում շեշտեց, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորումն առանց միջնորդի չի պատկերացնում: Այնինչ, մինչև մեկնելս և հավանություն կար, և չկար թերահավատություն:

ՀՀ ԳԽ նախագահ-փոխնախագահ ինձ ընդունելու ժամանակ չունեցան: Իսկ ԳԽ նախագահությունում ուղերձի և իմ այցի հետ կապված քննարկման մասին ինձ մոռացան տեղեկացնել: ՀՀՇ վարչությունում ինձ լսեցին շատ ավելի շահագրգիռ, բայց երբ եկավ վճիռ կայացնելու պահը, բավարարվեցին արձանագրելով՝ «Ընդունել ի գիտություն»: Ինձ ոչինչ չէր մնում անելու, քան ապավինել միայն հասարակական կարծիքի ուժին: Իսկ հասարակական կարծիքն իր այնքա՛ն խուլ-փցացած ականջներով ինչպե՞ս կընկալի, կլսի, ինչպե՞ս լսելի լինել:

Կրակը վերցնելով ինձ վրա ես որոշեցի թմբկահարել հասարակության ընկալման թաղանթը, լսել տալ ինձ շոշափելով ազգային արժանապատվության նուրբ լարերը, առաջարկելով ինքնաճանաչման ու ինքնաքննադատության միջոցը, որն առաջին քայլն է դեպի արթնությունը, զգաստությունն ու շրջապատի ըմբռնումը... Ստացվե՞ց: Ինչպես ես ենթադրում էի հասարակական մեծ աղմուկից, անձնական թույն ու լուտանքից հետո հասարակության մեջ ծայր առավ լուրջ-պատասխանատու խոսակցություն մեր հարևանի հետ մեր վեճի հեռանկարի, վեճի զարգացման ու կարգավորման հնարավոր ճանապարհների, հայ-ադրբեջանական բարիդրացիությունն անմիջական-երկկողմ հարաբերությունների միջոցով շուտափույթ վերականգնելու մասին: Վկա Վալերի Միրզոյանի, Սենեքերիմ Մելքոնյանի, Հակոբ Պողոսյանի, Արմեն Խաչատրյանի խոհեմ, անկեղծ ու անհանգիստ մտորումները: Վկա ընդդիմության աղմուկ-ասելիքը անփաստարկ, անիրական ու շատ հաճախ այնքա՛ն գնդրամիտ ու սնանկ, որ հայհոյանքով չես ծածկի: Չհրաժարվելով հոդվածի որևէ մտքից, ոչ մի պարբերությամբ

չմեղանչելով ճշմարտության դեմ ասում եմ ներեցեք, եթե մեկին այդ հոդվածով անիրավ վիրավորել եմ։

*10.12.1992 թ.*

## Հասարակական ողբերգությունից ցնցվելու համար «Ծայրահեղ Պացիֆիստ» կամ Թումանյան լինել պետք չէ

Այս տարվա դեկտեմբերի 10-ին Հայաստանի պաշտպանության նախարարության ուժերը, նախօրոք մշակված պլանի համաձայն, մինչև 8-9 կմ խորացել են Ադրբեջանի Զանգելանի շրջանի տարածքում, գրավելով շրջանի Կապանին սահմանակից տասնյակի չափ ադրբեջանական գյուղեր ու բարձունքներ:

Կասեցնելու համար հայկական զինուժի առաջխաղացումը կամ օգտվելով ներկայացած առիթից Ադրբեջանի ռազմական ուժերը դեկտեմբերի 10-ից 13-ը աննախադեպ ուժգնությամբ հակահարված են հասցրել Կապան ու Գորիս քաղաքների ուղղությամբ: Հակառակորդն օգտագործել է օդուժ: Քառասունից ավելի միայն խաղաղ բնակիչ է զոհվել, վիրավորների թիվն անցնում է հարյուրից: Կան զգալի ավերածություններ: Տասնյակ հազարավոր կապանցիներ ու գորիսեցիներ մեկ օրում դարձել են փախստական ստիպված լինելով անկազմակերպ թողնել բնակավայրերը: Հազարավոր մարդիկ պատսպարվել են կենցաղային տարրական հարմարություններից զուրկ կացարաններում: Օդային գնդակոծության են ենթարկվել նաև Կրասնոսելսկի ու Սևանի շրջանները:

Կապան ու Գորիս քաղաքների բնակիչներն անտեղյակ են եղել Զանգելանի ռազմական գործողությունների ու դրանց հնարավոր հետևանքների մասին: Անտեղյակ են եղել նաև Գորիսի քաղաքային եւ շրջանային ղեկավարները: Այդ գոտու ժողովուրդն անպաշտպան ու խաղաղ, հանկարծակիի եկած օդային ուժգին հարվածներից, հանձնվել է ճակատագրի տնօրինմանը: Չունենալով էվակուացիայի կամ քաղաքացիական պաշտպանության համար նվազագույնը (սկսած հեղուկ վառելիքից վերջացրած հակահրդեհային միջոցներով) Գորիս ու Կապան քաղաքների բնակիչները հայտնվել են բացառիկ անպաշտպանության պայմաններում: Միայն մեկ թիվ Կապանի բաղխորհուրդը դեկտեմբերի 13-ին և Գորիսի բաղխորհուրդը դեկտեմբերի 12-ին իրենց տրամադրության տակ ոչ մի լիտր բենզին չեն ունեցել: «Երկրաշարժը» Կապանում առաջացրել էր ուժեղ, երկրաշարժին բնորոշ խառնաշփոթ: Իսկ Հայաստանի

իշխանություններն այս անգամ էլ հարմար չգտան ընդունված կարգով գոնե ցավակցել ողբերգության զոհերին...

Դատապարտելով Ադրբեջանի զինուժի անմարդկային գործողությունները խաղաղ քաղաքների բնակիչների նկատմամբ, սգալով մեր հայրենակիցների ողբերգական մահը, ցավակցելով այդ բարբարոսության բոլոր անմեղ զոհերի հարազատներին ու կոչ անելով հանրապետության կառավարությանն ու բարի կամքի տեր մարդկանց շուտափույթ օգնության ձեռք մեկնել հատկապես մեծ աջակցության կարոտ Կապանին ու կապանցուն ես իմ քաղաքացիական ու պատգամավորական պարտքի գիտակցմամբ հայտարարում եմ.

Հայ-ադրբեջանական սաստկացող ռազմական առճակատման պայմաններում, հերթական ռազմական արկածախնդրության արդյունքում Հայաստանը, չունենալով քիչ թե շատ հակաօդային պաշտպանություն, փաստացի հանձնված էր Ադրբեջանի օդուժի ողորմությանը: Օդուժի հարվածը կարող էր ավելի մեծ լինել, կարող էր ռմբակոծվել Հայաստանի ցանկացած բնակավայր, այդ թվում Երևանը:

Ադրբեջանին սահմանակից հայկական բնակավայրերի ռմբակոծումներն այնքան սովորական են դարձել, որ Հայաստանի իշխանություններն ու երևանցիները հաշտվել են Հայաստանի պետության սահմանների անպաշտպանվածության իրողության հետ: Սովորական է ընկալվում անսովորը խաղաղ շինականի մահը, ու հանդուրժվում անթույլատրելին տասնյակ տարիների չարչարանքով ստեղծածի ավերումը:

Իշխանությունները անվրդով են պատերազմ է, իսկ երևանցիները պատերազմի ամենօրյա չարիքներին հետևում են այնպես, կարծես դա վերաբերում է Հարավսլավիային կամ Սոմալիին: Սահմանային գոտին արդեն չի դիտվում որպես մեր ժողովրդի բնակավայր, այլ Հայաստանի պետության «միջուկի» պաշտպանիչ օղակ: Հայաստանի նորաստեղծ պետությունը իր գլխավոր պարտքը չի կատարում

սահմանամերձ բնակավայրերի հարյուր հազարավոր քաղաքացիների հանդեպ. նրանց կյանքն ու կայքը խրոնիկ անպաշտպան են:

Եթե Հայաստանի իշխանություններն անկարող են տևական խաղաղություն հաստատել Ադրբեջանին սահմանամերձ շրջաններում, եթե պատերազմն անխուսափելի է, պիտի գործել պատերազմի կանոններով ու անջատել թիկունքը ռազմաճակատից: Սահմանամերձ շրջանների մեր հայրենակիցներին պարտավոր ենք տեղափոխել թիկունք, կյանքի համար ապահով վայրեր: Անհնա՞ր է նման լայնածավալ էվակուացիան: Հանրապետության իշխանությունները պիտի վճռական ու անդավաճան բռնեն հարևան պետության հետ հակամարտության խաղաղ կարգավորման ուղին: Այլ ելք չկա: Հարկադրված ենք օր առաջ վերագտնել մեր հարևանի հետ խաղաղ գոյակցության կերպը:

Ինչպե՞ս որակել դեկտեմբերի տասի Կապանը շոշափող Զանգելանի «լեզվակի» սարսռմանն ուղղված ռազմական լայնածավալ գործողությունները, եթե ոչ որպես հերթական քաղաքական արկածախնդրություն ու պետական ռազմատենչության նոր դրսևորում հարյուր հազարավոր անպաշտպան քաղաքացիների սահմանամերձ գոտու մեր հայրենակիցներին, պատանդի կարգավիճակով մշտապես հանձնած Ադրբեջանին: Հանրապետության Նախագահին կից գործող Ազգային անվտանգության խորհրդում քննարկվե՞լ է Ադրբեջանի Զանգելանի շրջանի դեմ ուղղված մեծածավալ ռազմական գործողությունների անհրաժեշտության ու դրանց հնարավոր հետևանքների հարցը: Տեղեկացվա՞ծ էին այդ մասին ՀՀ ԳԽ Նախագահությունն ու կառավարությունը: Չգիտե՞ր հանրապետության նախագահը ծրագրվող գործողության անցկացման մասին: Ինչպե՞ս է նա Հայաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատարը, հսկում իր զինված ուժերի գործողությունները: Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորման հերթական անգամ բաց թողնված հնարավորություններից հետո ի՞նչ արժեք ունեն հանրապետության նախագահի կոծկող-արդարացնող հայտարարությունները: Այս անգամ, ահա, այս տեսքով. «Հերթական անգամ կանխամտածված կերպով ստեղծվում է պարադոքսալ

իրավիճակ, երբ հարաբերությունները կարգավորելու երկու պետությունների ղեկավարության քաղաքական կամքին հասցվում է ծանր հարված»: Ո՞վ է այդ ոչ մի կերպ չբռնվող աներևույթ թշնամին...

Կարո՞ղ էր Ադրբեջանը պատերազմ հայտարարել Հայաստանին վկայակոչելով Հայաստանի զինուժի կողմից իր տարածքների զավթման հերթական փաստը: Ինչպե՞ս ենք մենք երաշխավորված Հայաստանի զինուժի նոր կամայականությունից: Այսպիսի ռազմական գործողություններով ինչպիսի՞ վնաս կրեց հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման ընթացքը: Քանի՞ արդեն պատրաստ ու մշակվող ծրագիր ու համաձայնագիր ձախողվեց: Ո՞վ է վերջապես անձնական պատասխանատվություն կրելու այսպիսի գործողությունների արդյունք անմեղ զոհերի ու ավերածությունների համար: Ե՞րբ: Չէ՞ որ հայ-ադրբեջանական սահմանների ուղղման գոյություն ունեցող քաղաքականությունը, որը Հայաստանի սահմանային շրջանների ապահովության անհուսալի միջոց է, առաջին անգամ չէ, որ կիրառվում է իր ողբերգական հետևանքներով: Ցայտուն վկան 1992 թ. Իջևանի շրջանի Ազատամուտ գյուղի բարձունքների գրավման գործողությունը: Մի՞թե ակնհայտ չէ, որ սահմանների «ուղղման» մեջ անշարժ թվացող քաղաքականությունն իրական ու իսկական ագրեսիա է հարևան անկախ պետության նկատմամբ խորացնելով-խճճելով-անլուծելի դարձնելով հայ-ադրբեջանական հակամարտությունը:

Այս տարվա հունիսի 6-ի բաց նամակում, ուղղած Հայաստանի ու Հայաստանի խորհրդարանի Նախագահներին, ես մեր պետության ղեկավարների ուշադրությունը փորձեցի հրավիրել Ադրբեջանի Լաչինի շրջանի «հայացման» արկածախնդրության Ղոչազ գյուղի մոտ զոհված 30-ից ավելի հայ անմեղ երիտասարդների ողբերգության վրա շեշտելով. «Հայաստանի իշխանությունների և անձամբ Ձեր այդ ողբերգությանը, հանրապետության հասարակայնությանը հրապարակավ չարձագանքելը, կատարված ողբերգության «ստվերային» ներկայացումը, լայն հասարակության խուլ-խեղդված վերաբերմունքը ողբերգության հանդեպ մերկացրին մեր այսօրվա կյանքի ամենածանր

իրողությունը ամեն ոճիր հանդուրժելի է այլևս, քանզի մեզանում ոչինչ չարժե Աստծո պարգևը կյանքը: Քանզի Հայաստանի Հանրապետությունում ոչ թե դժբախտ պատահարի հետևանքով, այլ ողբերգականորեն, մեկ միջադեպում զոհվում են 30-ից ավելի երիտասարդներ. ինձանից առավել իմ եղբայրները, և հասարակությունը դրանից չի ցնցվում, չի շտկվում, խոստովանություններ չի անում ու մեղավորներին անձնապես չի պատժում կանխելու նոր ողբերգությունները»: Այս անգամ ամեն ինչ դաժանորեն ու մեծ ծավալների մեջ կրկնվեց, իսկ իշխանություն-մամուլ-մտավորական չտեսնելու տվեցին. կամ Զանգելանի դեպքերը ներկայացրին չոր տեղեկատվության տեսքով, կամ ողջը բարդեցին հավերժ ագրեսոր-հարևանի վրա: «Լրատվական բլոկադան» ճեղքելու իմ բոլոր ջանքերն այս անգամ էլ նախորդի նման ապարդյուն անցան: Պաշտոնական ու ոչ պաշտոնական մամուլի մեծաքանակ լրագրողների աջակցությամբ, հարյուր հազարավոր մտավորականների թողտվությամբ դեռ չկայացած փլուզվում է քաղաքացիական հասարակությունը: Խորհրդարանն անգամ փակ նիստում չուզեց լսել իրողությունը, իսկ հրատապ հարցից օգտվելու իմ կանոնադրական իրավունքը հանցավոր վարպետությամբ խաղարկվեց խորհրդարանի նախագահի ու տեղակալների կողմից: Իսկ այս տարվա դեկտեմբերի 3-ին հայ երիտասարդների համար գերեզմանոց դարձած «Լաչինի խաղաղասիրական միջանցքում» կատարված նոր ողբերգության մասին հասարակությանն ո՞վ կասի ճշմարտությունը, որտե՞ղ կկարդաս: Հանրապետության նախագահին ուղղված այս տարվա նոյեմբերի 30-ի բաց նամակում ես ստիպված էի նրա ուշադրությունը հրավիրել մամուլով ու հեռուստաթերթերով քարոզվող ռազմատենչության մոլուցքի վրա, որը սպառնում է վերջնականապես խլացնել-խեղդել հասարակության հետ սթափ-պատասխանատու խոսակցությունը հասարակության համար բախտախնդիր նշանակության խնդիրներ քննարկելիս:

Այսօր ես չեմ դիմի ոչ հանրապետության նախագահին, ոչ խորհրդարանին, որովհետև գործ ունենք հանրապետությունում թափ առնող պետական ռազմատենչության հետ: Ես ահազանգում եմ միայն հասարակությանը ակնկալելով նրա աջակցությունը, քանզի պաշտոնական ու ոչ պաշտոնական մամուլ ու հեռուստաթերթեր, մտավորական ու տեղական իշխանություն դարձել են միջոց հանրապետությունում չթուլացող

ռազմատենչության համար, հլու-հնազանդ ծառայելով նրան: Իշխանություն ու քաղաքական ընդդիմություն, բացահայտ շահարկելով Արցախի խնդրը, մշտապես վառ պահելով ադրբեջանական «ագրեսիայի ու ագրեսորի» նկատմամբ ատելությունն ու հասարակական գիտակցության մեջ ներարկելով Հայաստանի ժողովրդի ու Արցախի անպաշտպանության փաստն իր «ելուզակ հարևանից», խարխլում են հայոց դեռ չկայացած պետականության հիմքերը: Հայաստանի վերին իշխանությունները շարունակում են գործել որպես ղարաբաղյան շարժման ու Հայ Դատի գրասենյակներ: Հայաստանի կառավարությունը վերածված է հանրապետության ռազմաճակատի անդամալույծ թիկունքի նվազագույն ու չերաշխավորված կենսապահովման դիսպետչերական ծառայության: Իշխանությունն ու ժողովուրդը փոխել են դերերը. կառավարության գլխավոր գործն է դարձել ժողովրդի համար «չեղածից» հանապազօրյա հացի հայթայթումը, մոռանալով իր գլխավոր անելիքը՝ քաղաքացու անձի ու ունեցվածքի անձեռնմխելիության ապահովումը և ստեղծարար աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Իսկ ժողովուրդը ստիպված է պետության փոխարեն ինքը հոգալ իր անձի և ունեցվածքի ապահովության մասին զրկված լինելով ստեղծագործ աշխատանքով պետություն շենացնելու հնարավորությունից: Հայաստանի Հանրապետության նախագահն ու ՀՀ խորհրդարանի նախագահը, ղարաբաղյան շարժման անցյալի բեռով ու խոստումներով ճզմված, անդամալուծել են հանրապետության գործադիր ու օրենսդիր իշխանություն վերջնականապես փակելով հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման ու Հայաստանը ստեղծված կացությունից դուրս բերելու «նվազագույն կորստի ու առավելագույն ձեռքբերման» ուղին:

Հանրապետության իշխանությունների այսօրվա քաղաքական ընդդիմության հիմնական մասը մի նպատակ ունի՝ շահարկելով Ղարաբաղի խնդիրը, հայ-ադրբեջանական զինական առճակատումը մշտապես բորբոքելով, հանրապետության չաշխատող տնտեսության վերջին միջոցները ծառայեցնելով ռազմական կարիքներին, բնակչության

սոցիալական բողոքի խուսափողի դերն ստանձնելով՝ պատրաստ լինել հարմար պահին ընկած իշխանությունը առաջինը վերցնելու:

Հանրապետությունում անհեռանկար կանգնեցված կյանքը, արհամարհանքը ապրելու եւ ստեղծելու բնական ձգտման նկատմամբ, ստիպում են ընդունակին ու ըմբոստին գաղթել հանրապետությունից: Ավելորդության զգացումը օր-օրի թակում է նորանոր ընտանիքների դռները: Իր տեսածից, գլխովն անցածից ու անսանձ թշվառությունից հիպնոսացած կամ քնած է ժողովուրդը:

Ի՞նչ անել: Օրը ցերեկով բոլորիս մասնակցությամբ ողբերգականորեն զոհվում է լեզվի կրողը, երբ լեզուն, որպես մշակույթ ստեղծող բնիկն իր պետության ներսում դառնում է գաղթական վերջնականապես կորցնելով պետական պաշտպանվածության զգացումը: Իսկ հայոց խորհրդարանը մեծագույն լրջությամբ քննում է արխիվների ու լեզվի մասին օրենքը: Մեզ պիտի մխիթարենք որպես ազգ արխիվներում մնալո՞վ, իսկ լեզուն պիտի հարատևի, երևի, կրողից դուրս, օրենքի ձևո՞վ...

Ի՞նչ կապ ունենք Հայաստանի այսօրվա իշխանություններս հայ ժողովրդի ու հայոց պատմության այսօրվա խնդիրների հետ:

Մենք Արցախի հողը դատարկող ու պետություն թշվառացնող պատերազմը բորբոքող, հայ մարդու կյանքին ու նրա աստվածային բնույթին թշնամի իշխանություններ ենք: Հանճարեղ էր պետք լինել 3-4 տարում չեն հանրապետությունը «որբի ու որբի երկրի» վերածելու համար: Ոչ մի օտար ու թշնամի դա անել չէր կարող: Առանց մեր կատարածի ահավորության գիտակցման շարունակելու ենք իրար վրա գցել եղածի մեղքը կամ ապացուցել արդեն կատարվածի անխուսափելիությունը: Ամենաթարմ ու վառ ապացույց-վկան Զանգեզուրի վերջին բոթը... Իսկ Հայաստանի իշխանությունները հանրապետության նախագահի ու կառավարության, հրավիրվել են հանրապետության Գերագույն խորհրդարան: Եվ ի՞նչ. նույն կռիվն իշխանության համար, նույն շահարկումը

այս անգամ էլ նոր Սահմանադրություն և պառլամենտական հանրապետություն ունենալու, Գերագույն խորհրդի ու հանրապետության նախագահի նոր ընտրությունների շուտափույթ անցկացման անհրաժեշտությամբ, մարդկանց սոցիալական պաշտպանվածության կեղծ անհանգստությամբ... Ինչպե՞ս ենք այդ մասին խոսում...

Այս ամենին նայում եմ այսօրվա ղափանցու եւ գորիսեցու, կարմիրցու եւ վարդենիսցու աչքերով, արցախցու, իջևանցու, տաշիրցու, երասխցու անհանգստությամբ, ովքեր սարսափով են նայում երկնքին, որոնց միակ հույսը Երևանն է ականջն ուղղված Երևանից եկող լուրերին, ոչինչ չունեմ նրանց ու ինձ մխիթարելու, որովհետև այս պատերազմն անարգել մտնում է յուրաքանչյուրիս տունը: Պատերազմի մարդկային տարրական անպաշտպանվածության հրդեհը լափում է Հայաստան պետությունն ու Արցախ Աշխարհը:

Ո՞րն է ելքը: Ժամանակն է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ գործի իր անձնական պատասխանատվության գիտակցման չափով իր համեստ, բայց անհրաժեշտ մասնակցությունը բերելով հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման գործին: Անձնական նախաձեռնությունների ժամանակն է: Ժողովուրդ-հասարակությունը և Հայաստանում, և Արցախում վերջապես պիտի լսելի բարձրացնեն իրենց ձայնն ընդդեմ պատերազմի: Այս հինգ տարվա մաքառումը կասկած չթողեց՝ ճիշտը ժողովրդի իմացածն է, ապրածն ու փոխանցածը. Իր հարևանի հետ խաղաղ-հաշտ ապրելու տասնյակ տարիների իր կենսաձևը ժողովուրդն ինքը պիտի վերահաստատի:

Ինչո՞ւ չի կարող ժողովուրդն իր իմացած ելքն ու իր կամքը պարտադրել շրջանային-քաղաքային ու հանրապետության իշխանություններին: Հատկապես վճռական ու անհողդողդ պիտի գործեն սահմանամերձ շրջանների, ավանների, գյուղերի ու քաղաքների բնակիչները: Բոլոր իշխանավորներս սովորույթ ենք դարձրել ժողովրդի անունից խոսել վկայակոչելով ժողովրդի շահը:

Խորհրդարանի պատգամավորներս երկար ժամանակ խուսափում ենք մեր ընտրողների հետ հանդիպելուց, փակվելով խորհրդարանում ու տրվելով հողից կտրված անպտուղ զրույցների ու վեճերի: Գնանք դեպի ժողովուրդը: Որքան էլ մեղավոր, որքան էլ մոլորված մեր փրկությունը ժողովրդի հետ շիտակ-խիզախ խոսքն է: Ընտրողները պիտի պարտադրեն մեզ այս հանդիպումները հնարավորություն տալով յուրաքանչյուր պատգամավորի ու իշխանավորի հստակ շարադրելու Ղարաբաղի խնդրի լուծման, հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման ու Հայաստանի այսօրվա կացության բարեփոխման սեփական ուղին ստանալով ընտրողների քվեն: Առանց այս հարցերի շուրջ անձնական տեսակետի հստակեցման ոչ մի ներկայացուցչական մարմին այսօր իրավունք չունի շարունակել գործել, լինի թե Գերագույն խորհուրդ ու պատգամավոր, թե շրջխորհուրդ-բաղխորհուրդ ու նրա պատգամավոր: Առանց ժողովրդին հասկանալի-ընդունելի ծրագրի այսօր իրավունք չունի իշխել-կառավարել ոչ հանրապետության նախագահը, ոչ կառավարության անդամը, ոչ շրջխորհուրդ-բաղխորհրդի գործադիր կոմիտեի նախագահը: Եթե մեր ընտրողների խոսափողն ենք խորհրդարանում, պիտի ամբողջական ներկայացնենք մեր ընտրողների իրական տեսակետն այնպիսի ճակատագրական հարցում, ինչպիսին մեր հարևանի հետ սաստկացող պատերազմն է: Չի՞ ընդունում ընտրող հասարակությունը այսօրվա իշխանությունների տեսակետը պիտի գան նոր իշխանություններ: Ռադիո-հեռուստաթերթեր, մամուլ և վերլուծական կենտրոններ պիտի վերջապես կարևորեն ժողովրդի իրական վերաբերմունքը իշխանությունների ու առանձին քաղաքական կազմակերպությունների Ղարաբաղի խնդրի կարգավորման ուղիների նկատմամբ: Ո՞ւր են Ղարաբաղի խնդրի կարգավորումը լուսաբանող ամենատարբեր սոցիոլոգիական հարցումների արդյունքները, ո՞ւր է սոցիալական տարբեր խմբերի տեսակետների դինամիկան: Հստակ պատկերացնո՞ւմ է Հայաստանի և Արցախի ժողովուրդը իշխանությունների ու կուսակցությունների Ղարաբաղի խնդրի կարգավորման այսօր գոյություն ունեցող ծրագրերը. Որ ծրագիրն է մերժում ու որը ողջունում: Ո՞րն է վերջապես հայ-ադրբեջանական հակամարտության ու Ղարաբաղի խնդրի կարգավորման Հայաստան պետության որդեգրած տեսանելի ուղին վերածված

վերջնական ու ամբողջական գործողությունների, ապացուցելի եւ ընդունելի Արցախի եւ Հայաստանի ժողովրդի համար, այնպես, որ իշխանության կամայական մարմին, ամեն մի քաղաքական գործիչ ու հասարակության յուրաքանչյուր անդամ իմանա իր անելիքն ու գործնականում մասնակցի պետական ծրագրի իրականացմանը: Թե չէ ստացվում է, որ մի քանի հարյուր մարդ, կազմելով կուսակցություն և ունենալով թերթ, մասնագիտանում է ժողովուրդ ներկայացնելու գործում ու անիրականանալի, ցնորամիտ կարգախոսներով խախտում լինելիք պետականության հիմքերը:

Թե իսկապես կայացած պետություն լինեինք, հիմա իշխանության բոլոր մակարդակներով զբաղված կլինեինք Զանգելանի իրադարձությունների անաչառ գնահատմամբ: Եթե պետության զարգացման կանոններով գործեինք, հրապարակավ հրաժարական պիտի տային Հայաստանի վարչապետը, պաշտպանության նախարարն ու այդ գործողությունները ղեկավարող գեներալը, հանրապետության ԳԽ Նախագահության ողջ կազմը, հանրապետության գլխավոր դատախազն ու հանրապետության նախագահի ազգային անվտանգության գծով գլխավոր խորհրդականը:

Այսօր Ադրբեջանի հետ պատերազմի սանձման մի հնարավորություն կա՝ Արցախի ու Հայաստանի ժողովրդի ակտիվացում մինչև իշխանություններին գործողություններ պարտադրելու աստիճանը: Ժողովուրդը պիտի արթնանա, կենդանանա, արգելի իշխանավորին իրեն դուր գալը ու խրատի քաղաքական գործչին վաղուց հասունացած վճռական ու հաստատ քայլեր կատարելու: Հայրենի հողի ու հողի տիրոջ կորուստի համար չկա անձնական պատասխանատվություն: Պատասխանատուն մեր ամբողջ սերունդն է յուրաքանչյուրս իր չափով: Գործենք վերջապես յուրաքանչյուրս պատասխանատվության այս չափով:

*16.12.1992 թ.*

## Կամ աստծուն են ծառայում կամ մամոնային

Սիրելի Կարինե Դանիելյան, ամենաքիչը դատավորի կոչումն է ինձ ձգում, ոչ էլ ահա, մեր շուրջը կատարվողին անմեղ-անմասն մնալու խնդիր ունեմ: Օրեր առաջ ձեռքս ընկավ «Երկիր» թերթի հունվարի 21-ի Ձեր հարցազրույցով համարը: Չարացա, մի լավ կռվեցի Ձեզ հետ, իսկ այսօր, արդեն խաղաղված ու Ձեզ նամակ գրելու ներքին պարտադրանքով ասում եմ. Անձնական ոչինչ չունեմ, ճշմարիտ պիտի լինեմ, ներեցեք, եթե խիստ ստացվի: Դուռ դռան, փոխադարձ հարգանքի պայմաններում ես և Դուք աշխատել ենք Երևանի քաղաքապետարանում: Առավել ևս օրինավոր է իմ այս գիրքը:

Դուք ասում եք. «...Եվ ես ժամանակին պ. Մելքոնյանի նշած հավաքներին մասնակցում էի ոչ թե նախարարի աթոռ նվաճելու, այլ համազգային էկոլոգիական մտածողություն ձևավորելու մտահոգությամբ»: Հավատա՞նք:

Թե իրոք պիտի զբաղվեիք «համազգային էկոլոգիական մտածողություն ձևավորելու մտահոգությամբ», կշարունակեիք էկոլոգիական լուսավորության Ձեր տարիների գործը, կզարգացնեիք ու կծավալեիք այն, Ձեր ամսագիրը կհիմնեիք, էկոլոգիական կրթության դպրոցական ծրագիր ու դասագիրք կկազմեիք, բնության պահպանմանը նվիրված հեռուստահաղորդումների շարք կվարեիք: Ձեր ինչի՞ն էր պետք առաջ փոխքաղաքապետի, այսօր բնության ու շրջակա միջավայրի պահպանության նախարարի պաշտոնը: Չէ՞ որ որպես գործադիր իշխանություն Դուք նախ և առաջ պատասխանատու եք հանրապետության այսօրվա էկոլոգիական վիճակի համար:

Մի տևական շրջան նորերս, մինչև իշխանության գալը, զբաղված էինք 70-ամյա անցածը քննադատելով-վերլուծելով: Անհրաժեշտ էր դա ու պիտի արվեր: Ափսո՛ս, որ զուգահեռ չզբաղվեցինք մեր հետագա անելիքի ծրագրմամբ ու ճշտմամբ: Երբ իշխանության եկանք, թողած այս օրը, մեր գլխավոր գործը դարձրինք ազգի լուսավոր վաղվա նկարագրումն ու «կոնցեպտուալորումը», իսկ մեր այսօրը, մեր ներկան, որպես անվարգ մի ձի, չտեսնել չեք կարող, փախչում է մեր տակից: Մեր սերունդը, Ձեր հանցավոր քաղաքական ռոմանտիզմով դատապարտված մարմնապահպան կռվի, կորցրել է զարգացման ճամփան ու 40-50 տարի կենցաղով ետ շպրտվել: Կներեք, հանուն ինչի՞: Գիտե՞ք, թե մեր

այս մաքառման արդյունքում ինչ ենք շահելու: Ոչ իրական ու ոչ հնարավոր մեր շահը, հավաստի ու բազմապատկվող հոգևոր-նյութական-մարդկային մեր կորուստներն իրար կողքի են այսօր: Ինչպե՞ս եք կարգադրում այսուհետև շարունակել ապրել, տիկին նախարար:

«Համազգային էկոլոգիական մտածողություն ձևավորելու մտահոգությամբ» տարված հաշիվ տալի՞ս ենք մեզ, Կարինե, որ մի ողջ սերնդի մեկ-երկու տարում բարոյազրկեցինք ու դարձրինք ոճրագործ, զավակ-թոռնիկներին այն ընտրություն չթողնելով քան իրենց հայրերի ու պապերի այնքան դժվարությամբ աճեցրած մի քանի ծառը կտրելը: Իսկ ի՞նչ եք ասում Դուք. «նույն արդար զայրույթն ու վրդովմունքը շատերի շուրթերից կայող են հնչել: Բայց, ավա՜ղ, այլ բան պատասխանել չեմ կարող, բացի կրկնել հիշեցնելու, որ մեր էկոլոգիական ներկա վիճակը պայմանավորված է հանրապետության ընդհանուր վիճակով»:

Դուք Հայաստանի բնության ու շրջակա միջավայրի պահպանության նախարարն եք, կառավարության անդամ, այսօրվա գործադիրներից մեկը: Պրոֆեսիոնալ էկոլոգ եք: Ձերը ամենօրյա սև ու չարքաշ աշխատանքն է, խնդիր ունենալով մեր սերնդի ժառանգած բնությունն ու շրջակա միջավայրն անվնաս փոխանցել հաջորդ սերնդին: Ճիշտ եք ասում. «Չիջեցնել Սևանի ջրի մակարդակը, ուրիշ ոչինչ»: Հնարավորության սահմաններում չարչարվում եք, հավատա՞նք: Իրոք, ինչո՞վ չափել և ինչպե՞ս գնահատել, օրինակ, Ձեր արածն ու չարածը: Կտրված ծառերի քանակո՞վ, թե՞ ղեկավարի «անհանգստությամբ ու զայրույթով»: Բայց չէ՞ որ նույն արդար զայրույթն ու վրդովմունքն ամենքի շուրթերում են. ի՞նչ օգուտ դրանից բնությանը: Չափենք Ձեր աշխատանքը Սևանի ջրի մակարդակի իջած մետրերո՞վ, թե՞ Ձեր հարցազրույց ահազանգերով ու կառավարությանը հասցեագրված «SOS»-երով: Դուք սրա պատասխանն էլ ունեք. «Ինչ խոսք, ես պատասխանատվության մեր բաժնից խուսափել չեմ ուզում»: Շա՜տ ծանոթ, հիմնովին անհասկանալի ու ամբողջովին մերժելի: Ոչնչանում են անտառները, իջնում է Սևանի ջրի մակարդակն իր բոլոր ողբերգական հետևանքներով: Հետո՞: Ձեզ, որպես

մխիթարություն, պատժում են, ազատում աշխատանքից: Գալիս է նորը, որը պատասխան չի տալիս իր նախորդի արածների համար. ծանոթ, այլանդակ պատմություն է: Բայց բնությունն ու Սևանն ի՞նչ են շահում: Ո՞ւր էր թե կտրված առաջին ծառի ու Սևանը վտանգող առաջին նշանների հետ Դուք ընդվզեիք, գործեիք հստակ ու հատու, էկոլոգ նախարարի Ձեր անդավաճան, շիտակ ու անհաշտ գործելակերպով փորձեիք արգելել հասարակությանն ու պետությանը, գնալ բնության ու Սևանի վտանգման ճանապարհով: Անհնա՞ր էր: Ինչո՞ւ ուրեմն առ այսօր հրաժարական չեք տվել: Իմ գիտածով էկոլոգը մի հայրենիք ունի Բնությունը: Իսկ Դուք հայ-էկոլոգին բնորոշ որակներ եք դրսևորում: Դուք հայրենասեր էկոլոգ եք ու քաղաքական գործիչ էկոլոգ: Համ Աստծուն եք ուզում ծառայել, համ էլ Մամոնային: Հանուն Ձեր անիրական երազի, ծովից-ծով Հայաստանի մի բեկորի Անկախ Արցախի, որպես քաղաքական գործիչ դուր գալու արվեստ եք բանեցնում, կյանքում մետր-մետր զոհում հայոց միակ Հայրենիքի իրական ծովը Սևանը, մեր մի քանի անտառն ու ջրավազանը: Մի՞թե սա է էկոլոգ-նախարարի Ձեր հավատամքը. «Չիջեցնել Սևանի ջրի մակարդակը, ուրիշ ոչինչ»: Իսկ չիջեցնելն այսօր նշանակում է օրերով սառեցնել ժողովրդին, թողնել բացարձակ ցուրտ ու խավարի մեջ: Մնացել ենք երկու քարի արանքում... Համեստ միակ խորհուրդը պիտի տամ Ձեզ, հարգելի Կարինե, դեն գցեք մի քարը, որ Ձերը չէ. հանրապետության նախագահինն է ու վարչապետինը, բայց Ձերը չէ: Ձերը Սևանի ու բնության հոգսն է, կտրվող ծառի ցավն ու իջնող ջրի ողբերգությունը: Սարսափելի է ու ավերը կշարունակվի, քանի հանրապետության ամեն մի քաղաքացի ու նախարար, զինվոր ու պատգամավոր, բժիշկ ու մանկավարժ չի մտածում ու չի գործում իր կոչմանը հավատարիմ: Բոլորս «ծովից-ծով» Հայաստանի ճարտարապետներն ենք ու գաղափարախոսները...

Այո, ոչ միայն մեր էկոլոգիական ներկա վիճակն է պայմանավորված հանրապետության ընդհանուր վիճակով, այլև մեր կենցաղը: Ուրեմն փոխել է պետք հանրապետության ընդհանուր վիճակը: Ո՞րն է Ձեր ծրագիրը: Չգիտեի՞ք, ինչ է, որ ընթացող-խորացող պատերազմն ու մեր տնտեսության մեկուսացվածությունը արտաքին աշխարհից

ստեղծելու է մեր իրականության այսօրը: Չգիտեի՞ք երեկ հավատում եմ: Մի՞թե Սևանա լճի երևացող հատակն այսօր սթափեցնող անդունդը չէ...

Եթե որպես կառավարության անդամ, չունեք պատերազմը կանխելու և հանրապետության ընդհանուր վիճակը կարգավորելու, Սևանն անվտանգ դարձնելու ու ծառն իր տնկողից ու խնամողից պաշտպանելու ծրագիր, ինչո՞ւ էիք ստանձնում նախարարի պարտականությունները թողած «համազգային էկոլոգիական մտածողության ձևավորման» Ձեր կյանքի գործը...

Իսկ հրաժարական նախարարի պաշտոնից պարտավոր եք տալ: Ոչ միայն Դուք, այլև ցանկացած իշխանավոր ու պետական պաշտոնյա, ով չունի հանրապետության ընդհանուր վիճակի կարգավորման իրատեսական ծրագիր, ով իր կյանքի գլխավոր գործը չի դարձրել այդ ծրագրի իրագործումը, բարոյական իրավունք չունի պաշտոնավարել: Թողեք նախարարի ծանր բեռը, բացատրեք մարդկանց, թե ինչո՞ւ դա արեցիք, ազատագրվեք որպես քաղաքացի ու էկոլոգ, փորձեք համախմբել Հայաստանի, Ադրբեջանի ու աշխարհի էկոլոգների ջանքերն ընդդեմ պատերազմի: Օր առաջ մասնակցեք Հայաստան Աշխարհը բռնած պատերազմի հրդեհը հանգցնելուն: Կրակի օղակի մեջ են Սևանի ավազանը, անտառներն ու այգիները, հանցագործ դարձնելով հողագործին ու այգեգործին, մատնելով բոլորին խորացող թշվառության ու հասարակական շփոթի: Մի դավաճանեք Սևանին, Կարինե, ներում չի լինելու, որովհետև չկա բացատրություն:

*Ջերմ բարեմաղթություններով Ա. Բլեյան*

*25.01.1993 թ.*

## Ստեղծման պատճառները

Առճակատումը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ շարունակվում է։ Պատերազմի հետեւանքով հայաթափվել է Լեռնային Ղարաբաղի կեսից ավելին։ Պատերազմը վաղուց դուրս է եկել Ղարաբաղի տարածքից եւ վերածվել հայ-ադրբեջանական մշտական սահմանային բախումների։ Արդեն մեկ տարի տեւող այս չհայտարարված պատերազմի հետեւանքով ավերվել են Հայաստանի սահմանային գրեթե բոլոր գյուղերն ու քաղաքները։

Հայաստանն իր բոլոր ուժերն ու միջոցները տրամադրեց այդ պատերազմին։ Այսօր խոր շրջափակման մեջ գտնվող, բոլոր ռեսուրսները սպառած երկիրը իր կաթվածահար տնտեսությամբ, բարոյալքված ազգաբնակչությամբ կանգնած է ազգային իղձերի ու օբյեկտիվ ռեալության դեմ-հանդիման։

Ստեղծված վիճակը հիմնականում արդյունք ու հետեւանք է Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականության, որոնք ՀՅԴ կազմակերպության լուռ համաձայնությամբ շեղվեցին նրա իսկ քաղաքական սկզբունքներից։ Եթե դա ինչ-որ տեղ հասկանալի էր կայսրության շրջանում, ապա անհասկանալի է անկախ պետություն դառնալուց հետո, որովհետեւ դրանք բոլորովին տարբեր հարթություններ են։ Անկախ պետություն դառնալուց հետո էլ այլոց միջոցով Ղարաբաղի հարցը լուծելու գայթակղությունը նոր իշխանությունների համար դարձավ քաղաքական վարքագիծ։

Շուշիի ու Լաչինի գրավումը, Թեհրանի բանակցությունների ձախողումը հստակորեն ցույց տվեցին, որ Հայաստանը ոչ թե ինքն է մշակում ու իրականացնում քաղաքականություն, այլ իրադարձությունների թելադրանքով է շարժվում։ 1992 թվականի հունիսին ակնհայտ դարձավ, որ Հայաստանի իշխանությունների վարած պահանջատիրական քաղաքականությունը ձախողվել է, որի հետեւանքով Հայաստանի ներքաղաքական կյանքը լուրջ ճգնաժամ ապրեց։ Կատարվածը խոր վերլուծության ենթարկելու եւ քաղաքականության մեջ դրանից բխող էական խմբագրումներ կատարելու փոխարեն իշխանությունները եւ ընդդիմությունը բավարարվեցին ՀՀ Գերագույն խորհրդում ընդունելով հուլիսի 8-ի որոշումը։ Այս որոշումը նպաստեց

ներքաղաքական ճգնաժամի ժամանակավոր հաղթահարմանը։ Ուժերի դասավորման մեջ հստակություն կմտներ, եթե Հայաստանի քաղաքական ուժերի համաձայնությունը կայացվեր քաղաքական որեւէ հստակ գծի շուրջ։ Այս առումով էլ ՀՀ Գերագույն խորհրդի հուլիսի 8-ի որոշումը սնանկության համաձայնություն էր իշխանությունների եւ ընդդիմության միջեւ։ Այն հնարավորություն տվեց հանրապետության Նախագահին շարունակելու իր որդեգրած առճակատման քաղաքականությունը, որի հետեւանքով երկիրը հայտնվեց այս վիճակում։

Հայաստանի նորաստեղծ պետության գոյությունը եւ հետագա զարգացումը վտանգված էին։ Հայոց պետականության եւ հայ ժողովրդի համար այս վճռական պահին անհրաժեշտ են լուրջ եւ արմատական փոփոխություններ քաղաքականության մեջ։

Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման մասին իշխանությունների եւ ՀՀՇ կազմակերպության հայտարարությունները դարձել են օդից կախված տեսական դրույթներ, որոնք ոչ մի կապ չունեն վարվող քաղաքականության հետ։ Վերլուծելով հանրապետությունում գործող քաղաքական ուժերի հակվածությունը մենք տեսնում ենք, որ չկա այն ուժը, որը կարող է սեփականել եւ հայ քաղաքական մտքի սեփականությունը դարձնել հարեւան մուսուլմանների հետ խաղաղ, քաղաքակիրթ գոյատեւման գաղտնիքը։ Սա հայ քաղաքական մտքի պատմության մեջ բնավ նորություն չէ, այլ մեր մոռացված պատմական փորձն ու դասն է, որի իրագործմանը խանգարում է շրջադարձային պահերին ազգային իղձերի պետական խնդիրների ոչ ճիշտ համադրումը։ Ամենաազնիվ ազգային վեհ ու առաքինի նպատակներից բխող, բայց օբյեկտիվ ռեալությունը հաշվի չառնող մեր բոլոր քայլերը դատապարտված ու դատապարտվում են այսօր։ Գաղտնիքը մեկն է. պետք է փոխել մեր հարեւանների հետ հարաբերվելու դարավոր կերպը։ Որքան էլ դժվար լինի, պետք է ընդունենք, որ այդ վիճակում պարտված կողմը մենք ենք եղել։ Ղարաբաղի այսօրվա վեճը այդ պարտված վեճի շարունակությունն է։

Անտեղի էր 1991թ. աշնանը քաղաքական ուժերի վերադասավորումներից ոգեւորվելը, հուսալը, որ նորոգյալ Ռուսաստանի միջոցով հնարավոր է լուծել մեր հարցերը։ Թվացյալ

էր։ Մեզ չէր վերաբերվում։ Վտանգավոր է, որովհետեւ, եթե այս անհույս պատերազմում երկիրը հասցնենք վերջնական պատրաստականության, մնում է մեկ-միակ ճանապարհը՝ պանդխտությունը։ Այո, արդեն Հայաստանից արտագաղթել ցանկացողների թիվը անցել է մեկ միլիոնից։ Հողը դարձել է անապահով, եւ ժողովուրդը չի հավատում գալիքին։ Այն ճանապարհը, որով գնացին մեր իշխանությունները, այլ բան չէր խոստանում, որովհետեւ դրանում քաղաքական նոր որակ չկար, դա հնի նորօրյա կրկնությունն էր, ոչ նույնությամբ նմանությամբ։ Արդյունքում Հայաստանը կրկին դարձել է գաղթականության երկիր։ Արտաքին առճակատումները եւ անհաջողությունները հանգեցնելու են ներքին առճակատումների։ Ժողովրդին դուր գալը եւ քաղաքական լուծում պահանջող խնդիրները տնտեսականով փոխարինելը վտանգավոր նախադրյալներ են ստեղծում եւ իշխանությունների համար դառնում են գործելաձեւ։ Այդպես կլինի այնքան ժամանակ, քանի դեռ ազգային իղձերի ու օբյեկտիվ հնարավորությունների անհամատեղելիությունը վերջնականապես չի բարձրացվել քաղաքական գործունեության մակարդակի։ Հարցադրումը քաղաքական է ու բնավ չի նշանակում ազգային խնդիրների անտեսում, որովհետեւ հայրենասիրությունը կապ չունի քաղաքականության հետ։ Թե հայությունը ընդհանրապես ինչ է ուզում եւ մեզ է հայտնի, եւ մեր հարեւաններին։ Քաղաքական, առավել եւս պետության խնդիրն է՝ որոշել, թե ինչ ենք մենք կարող, ինչի ենք մենք ընդունակ։ Պատմականորեն մեկ անգամ չէ, որ հայ ժողովուրդը եւ նրա քաղաքական առաջնորդը կանգնել են այս երկընտրանքի առաջ։ Եվ նախապատվությունը մեծ մասամբ տրված է ազգային իղձերին ու ցանկություններին։ Սա Վարդանի ու Վասակի, Մամիկոնի ու Արամի վեճի շարունակությունն է։

Այսօր իշխանությունների լուռ համաձայնությամբ ժողովուրդը Ավարայրով ոգեկոչողները գոնե հասկանո՞ւմ են՝ ի՞նչ են կոչ անում։ Ո՞ւր են տանում ժողովրդին։ Գիտե՞ն իրենց պատմությունը։ Տարբերո՞ւմ են առասպելն իրականությունից։ Չգիտե՞ն՝ վատ է։ Գիտենալով են անում՝ սարսափելի է։ Անտեսվում է պատմական փորձը։ Չեն սովորում սեփական սխալներից, որովհետեւ իրենցն է։ Ոգեւորվեցին պատերազմով, տեսան, որ իզուր է, չի ստացվում։ Հիմա էլ ասում են ոչ պատերազմ, ոչ խաղաղություն։

Միջազգային երաշխիք են ուզում: Անտեսում են, որ Ղարաբաղի հարցի միջազգայնացումը ձեռնտու է Ադրբեջանին: Ընդհանրապես, վերջին մեկ տարում Ղարաբաղի հարցի լուծման ուղղությամբ Ղարաբաղի եւ Հայաստանի իշխանությունների ձեռնարկած բոլոր քայլերը ձեռնտու են Ադրբեջանին:

Հայաստանի իշխանությունները վարում են ազգային-ազատագրական պայքարի յուրահատուկ ավանդական պատրանքային քաղաքականություն: Ակնհայտ է, որ այդ քաղաքականությունը կործանելու է Ղարաբաղը եւ վտանգի տակ է դնելու հայոց պետականության գոյությունը: Արդյունքում այն նաեւ մեծ հարված է լինելու սփյուռքահայությանը: Այսօր բնավեր ու ցիրուցան է լինում կովկասահայությունը: Վտանգվում է հայությունը Միջին ու Մերձավոր Արեւելքում: Դարասկզբին կատարվածը կրկնվում է դարավերջին: Անհրաժեշտ էր, որ զուսպ ու հստակ գործելակերպով, ծրագրված քաղաքական նախաձեռնությունների հետեւողական իրագործմամբ Հայաստանը դառնար տարածաշրջանում խաղաղ գոյակցության ջատագովը՝ եռանդուն մասնակցելով Կովկասյան տան շինարարությանը, իր բոլոր քաղաքական վճիռները հարմարեցնելով Վրաստանի ու Ադրբեջանի հետ: Դրա փոխարեն մենք դարձանք տարածաշրջանի ապակայունացման գլխավոր գործոնը: Նման վիճակը հիմնականում կապված է քաղաքական նոր արժեքների ու պետական մտքի բացակայության հետ: Հայաստանի իշխանությունների քաղաքականությունը լավագույն ապացույցն է այն բանի, թե ինչպես կարելի է պետություն չկառուցել: Հայաստանում ճգնաժամը խորանում է ու անհաղթահարելի է դառնում նաեւ այն պատճառով, որ վարվող քաղաքականությունը, փաստորեն, ընդդիմություն չունի: Չկա այն քաղաքական ուժը, որի համար հստակ է առանց դարավոր հարեւանների հետ հարաբերվելու կերպը փոխելու ու խաղաղ բանակցության բանաձեւեր գտնելու անհնար է հայոց պետականության կայացումն ու զարգացումը: Անիմաստ ու աննպատակ պատերազմը հարվածում է մեզ: Հայաստանում այսօր վարվող քաղաքականությունը վերջնականապես փոխում է հայ ժողովրդի զարգացման ու Հայրենիքի կայացման հեռանկարները: Պատասխանատվություն կրելով Հայաստան պետության ու նրա

ժողովրդի ճակատագրի համար՝ մենք նախաձեռնում ենք «ՆՈՐ ՈՒՂԻ» կազմակերպության ստեղծումը։

**Կազմակերպության առաջնահերթ խնդիրները**

Վերլուծելով մեր ժողովրդի պատմությունն իր բոլոր գործոնների հանրագումարով նկատում ենք մի առանձնահատկություն, որը եւ բնորոշում է մեր անցած ճանապարհի բարդությունն ու հակասությունը։ Դա քաղաքական մտքի երկվությունն է, որը հատկապես պայմանավորվում է մի կողմից կորցրած տարածքները ետ բերելու ցանկությամբ, մյուս կողմից օբյեկտիվ իրականությամբ։ Անցումային բարդ ու հակասական շրջաններում, երբ առաջին պլան է մղվում ինքնուրույն պետություն ստեղծելու անհրաժեշտությունը, մեր քաղաքական միտքը չի կարողանում ճիշտ համադրել հնարավորության ու ցանկության, ճգնաժամերի ու կարողությունների սահմանագծերը։ Եվ այս երկվությունից վճռական պահին գրեթե միշտ առաջնություն է ստանում կորցրածը ետ բերելու հակվածությունը։ Դրա լավագույն ապացույցը վերջին երկու տարվա փորձն է։ Թվում էր, թե այս անգամ քաղաքական նոր մտածելակերպը սեփականվել է այն ուժերի կողմից, որոնք պետք է պատրաստ լինեին պետական քաղաքականություն վարելու։ Բայց դա միայն թվում է, որովհետեւ նրանք չկարողացան անել (կամ չհասկացան) հիմնական քայլը՝ անմիջապես հարաբերություններ հաստատել հարեւան երկրների հետ, որոնց մեջ առանձնանում էին Ադրբեջանն ու Թուրքիան։ Քայլը հստակ էր՝ Ադրբեջանի հետ անմիջական բանակցությունների միջոցով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իր հողում ապրելու իրավունքի ապահովում ու Ադրբեջանի տարածքում ամբողջականության ճանաչում։ Անշուշտ, այս քայլը պետական իմաստնություն եւ քաղաքական համարձակություն էր պահանջում, ընդհուպ մինչեւ իշխանության կորուստ։ Այս քայլով էր պայմանավորված ազգային պետականության ճանաչումը։ Չարվեց այդ մեկ-միակ քայլը, որի հետեւանքով արժեզրկվեցին մյուս բոլոր ձեռնարկումները։ Ժողովրդավարությունը վերածվեց անարխիայի ու քաոսի, ազատամտությունը՝ ազատ անմտության։ Խմբապետությունն ու հարկահանությունը դարձան սովորական երեւույթներ։ Այս պայմաններում արդեն բոլորովին իմաստազրկվում է տնտեսության մի ձեւից մյուսին անցումը եւ, ընդհանրապես,

ցանկացած դրական ձեռնարկ։ Այս ամենն արդյունք է ու հետեւանք այն բանի, որ չվարվեց հստակ ու համակարգված պետական քաղաքականություն։ Ազգային իղձերին հետամուտ գործելակերպից բխող քաղաքական քայլերը պետական մարմիններին տվեցին Հայ Դատի գրասենյակների կերպարանք։ Հայ քաղաքական մտքի պատմության մեջ կատարվեց հերթական տեղապտույտը, որը հղի է վտանգավոր հետեւանքներով։ Ելնելով այս քաղաքական իրողություններից, որոնք վտանգի տակ են դնում Հայաստան պետության գոյությունն ու հետագա զարգացումը, անխուսափելի ու վերջնական հայաթափում Արցախի հողը, մենք այսօր Հայաստան պետության ու ողջ հայ ժողովրդի համար առաջնահերթ խնդիր ենք համարում հայ-ադրբեջանական հակամարտության օր առաջ կարգավորումը։ Կարգավորման մեր մոտեցումն այս է.

- Հայաստան-Ադրբեջան դրացիական հարաբերությունների հաստատումը, ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը, Հայաստան-Ադրբեջան տնտեսական ու քաղաքական փոխշահավետ համագործակցության վերականգնումը, դրա հետագա զարգացումն ու ծավալումը երկու պետությունների գոյատեւման ու հետագա զարգացման անհրաժեշտ նախապայմանն են։
- Ադրբեջանի հետ անմիջական բանակցությունների միջոցով Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Ղարաբաղի համար։
- Հայաստանի համար հարցի խաղաղ կարգավորումը միակ ելքն է։
- Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորումն այսօր ձեռնտու է նաեւ Ադրբեջանին։
- Անհրաժեշտ են Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների համատեղ վճիռները։ Հարցերը քննարկելիս պիտի առաջնորդվել Լեռնային Ղարաբաղի եւ Ղարաբաղի հայության ճակատագրի հանդեպ Հայաստան պետության պատասխանատվության չափանիշով։
- Պետք է անհապաղ, առանց նախապայմանների, Լեռնային Ղարաբաղի իշխանությունների անմիջական մասնակցությամբ սկսել բանակցությունները

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, որոնց ընթացքում կմշակվի հարցի խաղաղ կարգավորման բանաձեւը։

- Հարցի խաղաղ կարգավորման մշակվելիք բանաձեւի հիմքում հարկ է դնել հետեւյալ սկզբունքները.

  ա) Լեռնային Ղարաբաղի անվտանգության եւ Ղարաբաղի ժողովրդի իր հողում ապրելու իրավունքի ապահովում,

  բ) երկու պետությունների տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչում եւ հարգում։

- Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման երաշխիքը ղարաբաղցու իր հողում ապրելու անկոտրում վճռականությունն է։ Այդ վճռականությունը խնդրի խաղաղ կարգավորման ողջ ընթացքում ղարաբաղցին արտահայտում է նաեւ զինական անպարտելի ինքնապաշտպանությամբ։

Ե՛վ Հայաստանի, եւ՛ Ղարաբաղի քաղաքական գործիչները պիտի անվերապահ հավատան խնդրի խաղաղ կարգավորման անխուսափելիությանն ու հաջողությանը եւ ողջ ընթացքում չդավաճանեն դրան ու ընտրված գործելակերպին։

Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորմանը պիտի նախորդի ու կարգավորման ընթացքը պիտի ուղեկցվի Հայաստան-Ադրբեջան, Ադրբեջան-Ղարաբաղ տնտեսական-քաղաքական, հոգեւոր-մարդկային ավանդական կապերի վերականգնմամբ՝ հակամարտության, թշնամության ու օտարության մթնոլորտը աստիճանաբար փոխարինելով վստահության ու համագործակցության մթնոլորտով։

*Նոյեմբեր, 1992թ.*

## Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածու Աշոտ Բլեյանի նախընտրական քաղաքական ծրագրի հիմնադրույթները

## Յոթ դիմում Հայաստանին

## ժառանգության ուխտ

Ժառանգորդն ենք երկհարյուրամյա ազատագրական պայքարի, որի գերնպատակը անկախ հայկական պետականության ստեղծումն ու կայացումը պետք է լինի։ Ժամանակն է մեկընդմիշտ մերժել պերմանենտ հեղափոխականությամբ վարակված ազատագրական շարժումը, հայոց ազատամարտը, որը շարունակաբար վտանգել եւ վտանգում է պատմական հայրենիքի տարածքներում հայ ժողովրդի ապրելու իրավունքը։

Ժառանգորդն ենք 1918-20թթ. Հայաստանի Հանրապետության՝ 20-րդ դարում հայոց անկախ պետականության առաջին արտահայտության։ Յուրացրած Առաջին Հանրապետության ողբերգության դասերը թույլ չենք տա դրա կրկնությունն այսօր։

Ժառանգորդն ենք Խորհրդային Հայաստանի՝ իբրև ազգային վերածննդի եւ սոցիալ-տնտեսական վերելքի հիմքի։ Սակայն սկզբունքորեն դեմ ենք, որ ապագային ուղղված մեր այսօրվա հայացքը կրկին շրջվի դեպի անցյալը, եւ իր էությամբ անպտուղ կարոտախտը թուլացնի արժանավոր ապագա կերտելու ազգային կամքը։ Սա նույնպես հեղափոխականություն է։ Խորհրդային համակարգն անդառնալի անցյալ է, եւ նրա թողած ժառանգության անաչառ գնահատմամբ անհրաժեշտ է գտնել Հայաստանի Հանրապետությունում սոցիալական արդարության եւ հասարակական նոր համակեցության բանաձևերը։

Ժառանգորդն ենք նորանկախ Հայաստանի յոթնամյա պատմության, որ հայկական պետականության նոր էջ է բացել 21-րդ դարում աշխարհի ժողովուրդների ընտանիքում իրավահավասար ապրելու հնարավորություն։ Մերժում ենք այսօր ավելի ու ավելի սպառնալի դարձող, ընթացքից, ոտքի վրա եւ «ամենակարճ ժամկետներում» անկախության տարիներին անցած լավն ու վատը արմատապես վերանայելու եւ

հասարակությանը «նոր երջանկություն» պարտադրելու արատավոր եւ, ըստ էության, զուտ դեմագոգիական գործելաոճը։ Մեզ պրոֆեսիոնալների պետություն է պետք. գործուն ու արդյունավետ պետական մեխանիզմ, որը կպաշտպանի հայ հասարակությունը ցնցումներից եւ հակասական գաղափարաբանական բևեռների միջև թավալգլոր լինելուց։ Միայն ժողովրդի սոցիալական պահանջների բավարարումով, միայն նրա հայրենասիրական շահերի ձևավորումով կարելի կլինի դառնալ կայուն, իրավական պետություն։

**Լեռնային Ղարաբաղի շահերի պաշտպանության անխախտ երաշխիքներ**

Ինքնիշխան, ուժեղ եւ ժողովրդավարական Հայաստանն է միայն, որ կարող է ազգային բոլոր խնդիրների, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի պաշտպանության երաշխիքը լինել։ Առանց միջազգային ընկերակցությունում իր դիրքերը հաստատած Հայաստանի չկա եւ չի կարող լինել ազգային խնդիրների հանգուցալուծում։ Կայացած, ուժեղ Հայաստանի պայմաններում, նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններից դուրս բնակվող հայրենակիցների անվտանգության ապահովումն է գերխնդիրը։ Եթե կա իր տարածքում ապրող ժողովուրդ, Հայաստանի հետ նրա միավորման հնարավորությունը պահպանվում է։ Բայց եթե փոխադարձ դիմակայությունն ու թշնամությունը հասնում են մինչև այն աստիճանը, որ հարևանը դիմում է էթնիկական զտման քաղաքականության, ապա տեղահանության արդյունքը լինում է պատմական հայրենիքի տարածքների եւ նրա բնակչության կորուստը։ Այսպես մենք անդառնալի կորցրինք Դաշտային Ղարաբաղը, Հյուսիսային Արցախը։

Լեռնային Ղարաբաղը ոչ թե կարոտ է նոր փորձությունների, այլ հմուտ դիվանագիտության աջակցության, խաղաղ ու արարիչ շինարարության։ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը իր պապերի հայրենիքում անվտանգ ու ապահով ապրելու կարիք ունի, ինչը հնարավոր չէ առանց հարևան Ադրբեջանի հետ համակեցության փոխադարձաբար ընդունելի տարբերակների առաջադրման եւ հաստատագրման։ Այս հարցում ցանկացած հապաղում հղի է շրջանում լարվածության նոր աճով եւ Լեռնային Ղարաբաղի բնակչության նոր արտագաղթով։ Նման իրողությունների գիտակցությամբ է,

որ պատրաստ ենք ստանձնելու Լեռնային Ղարաբաղի ապագայի հանդեպ պատասխանատվությունը։

**Համակողմանի աջակցություն տարասփյուռ հայությանը**

Հայաստանի Հանրապետությունը այլևս չի կարող իր ներքին եւ արտաքին քաղաքականությունը կառուցել առանց հաշվի առնելու տարասփյուռ հայության կենսական շահերը։ Մեծաքանակ Սփյուռք ունեցող Հայաստանի համար Սփյուռքի հետ կապերն ապահովող հաստատությունները, հայրենադարձության եւ ներընդգրկման օղակները պետք է լինեն պետության կարևորագույն ինստիտուտները։ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի համար նախ եւ առաջ կարևորում ենք հայրենադարձությունը, քանզի ազգային պետությունն առաջին հերթին բոլոր հայերի հնարավորությունն է վերադառնալու հայրենիք։ Այս հարցում կարելի է եւ պետք է օգտագործվի խորհրդային տարիների ուսանելի փորձը։ Այս անգամ շատ ավելի մեծ լայնախոհություն ցուցաբերենք եւ հայրենիք ներգաղթը չպայմանավորենք գաղափարախոսական, լեզվական կամ դավանաբանական խնդիրներով։ Խիտ բնակեցված Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը ազգային անվտանգության ամենագործուն երաշխիքներն են։

Ինչ վերաբերում է օտարահպատակությունը պահպանող Սփյուռքին, ապա պետությունը պետք է միշտ պատրաստ լինի իր հնարավորությունների առավելագույնով աջակցել նրան եւ ընդունել նրա աջակցությունը՝ պետության առաջնայնությունը հրամայական ճանաչելով։ Սփյուռքի ծառայությունն ու աջակցությունը հայրենիքին Հայաստանում ներքաղաքական ազդեցության լծակ չի կարող լինել։

**Համակեցություն անմիջական հարևանների հետ**

Անմիջական հարևաններին չեն ընտրում։ Անմիջական հարևանները պատմական իրողությունների արդյունք են, եւ հաշվի չնստել այդ իրողությունների հետ նշանակում է հերթական անգամ հարցականի տակ դնել ազատագրական պայքարի գլխավոր ձեռքբերումը՝ անկախ պետականությունը։ Պատմական, ազգային հասունության գերագույն վկայությունն անմիջական հարևանների հետ համակեցության փոխադարձաբար ընդունելի նորմերի հաստատագրումն է։ Դա էր գերխնդիրը 1918-

20թթ. Առաջին Հանրապետության ժամանակ, ինչը ձևակերպված է Հովհաննես Քաջազնունու գլխավորած կառավարության 1918թ. օգոստոսի 1-ի ծրագրում: Օբյեկտիվ թե սուբյեկտիվ պատճառներով Առաջին Հանրապետությունում այդ խնդրի լուծումը չգտնվեց, և կորսվեցին թե պետականությունը և թե պատմական հայրենիքի տարածքների մի մեծ հատված: Մենք այս խնդրի իրագործումը ստանձնում ենք ազգային ու պետական շահերի ճկուն պաշտպանության մեխանիզմների գործադրման միջոցով: Հայաստանից դուրս մեր բոլոր հայրենակիցների համար պիտի հասկանալի լինի, որ պետությունը կայանում է, երբ ընդհանրության ազգային հատկանիշներին ավելանում է նաև հայրենիքում ապրելու ընդհանուր շահը:

**Ազգային անվտանգության պաշտպանություն**

Այսօր արդեն Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը սպառնալիքի տակ է տնտեսական փլուզման և հաղորդակցման ճանապարհների շրջափակման հետևանքով: Ժամանակն է հստակեցնելու և միանշանակություն հաղորդելու «Ազգային անվտանգություն» հասկացությանը: Միայն այս կերպ հնարավոր կլինի խուսափել այն թյուրիմացություններից, որոնք պարբերաբար ցնցում են հանրապետությունը: Եթե չկա «Ազգային անվտանգության» համապարփակ դոկտրինը, չի կարող լինել և առ այսօր չկա «Ռազմական դոկտրինը», ինչը անհանդուրժելի է պատերազմական վիճակում գտնվող երկրի համար: Սա իր հերթին հնարավորություն չի տալիս հստակ սահմանելու դիվանագիտության լիազորությունների սահմանները, ձևավորելու գործուն արտաքին գործոց նախարարություն և նախանշելու Ազգային անվտանգության պետական վարչության աշխատանքային խնդիրները: Նույն պատճառներով է, որ ազգային բանակի կազմավորման և ամրապնդման խնդիրները լուծվում են տարերայնորեն ու իրավիճակից ելնելով: Ազգային բանակը պետք է կազմավորվի ոչ թե առավելագույն բանակի զինվոր հավաքելու, այլ առավելագույն արդյունավետության սկզբունքով: Նաև բանակը պետք է դառնա երկրի արտաքին պաշտպանության և ոչ թե ներքաղաքական ու տնտեսական հարաբերությունները որոշող գործոն, ինչպես հիմա է:

**Զարգացած տնտեսությունը, կրթությունն ու գիտությունը իբրև պետության ինքնիշխանության և ազգային անվտանգության երաշխիք**

Տնտեսությունը ժամանակակից պետությունների հիմնաքարն է, հաղորդակցման ճանապարհների բանուկությունը՝ ինքնուրույնության գրավականը։ Հաղորդակցման բնական ճանապարհներից զուրկ, հարևանների հետ հակամարտության կամ լարվածության մեջ գտնվող երկրների տնտեսությունը համաշխարհային ֆինանսա-տնտեսական կառույցների գերին է դառնում, իսկ իշխող վերնախավը՝ նշված կառույցների քաղաքական կամակատարը։ Հայաստանի տնտեսական և հաղորդակցական շրջափակումը Միջազգային արժութային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող գումարներով չի փոխհատուցվում։ Հետպատերազմյան շրջանի աշխարհի պատմությունը չի հիշում նույնիսկ մեկ դեպք, որ նորանկախ երկրի տնտեսությունը կառուցված և զարգացած լինի ՄԱՀ-ի ու Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ։ Ընդհակառակը, այն պահանջները, որ ներկայացնում են վերջիններս, ֆինանսավորվող կողմին վաղ թե ուշ հանգեցնում են սոցիալական և տնտեսական կախվածության, երբ օրվա հացն անգամ աշխատավորը կուլ է տալիս հանցավորի դառնությամբ։

Խորհրդային տնտեսակարգից նորին ազատ-մրցակցային տնտեսակարգին անցնելու արդյունքում այսօր մեկ գլխավոր սեփականատիրոջ՝ պետության փոխարեն ունենք հազարավոր սեփականատերեր՝ ի դեմս մասնավոր անձանց ու ակցիոներների։ Ճիշտ է, վարկերի հաշվին, բայց արդի չափանիշները բավարարող տնտեսության սպասարկու ենթակառուցվածքներ ձևավորվեցին (բանկային, տեղեկատվական, խորհրդատվական, հաղորդակցական և այլ համակարգեր ու ծառայություններ)։ Հասարակությունը թանկ վճարեց տարիներ տևած ու դեռ շարունակվող երևույթի ապապետականացման կամ մասնավորեցման համար՝ պետական բյուջեն, քաղաքացու եկամուտները դրանից չաճեցին, արդյունաբերությունը դարձավ անարդյունավետ, ու արտադրական կյանքը հանգավ։

Ունեցվածքի նոր վերաբաշխումը, սեփականատիրոջ նոր փոփոխությունը հարյուր հազարավոր քաղաքացիներին ու պետությանը ոչ միայն ոչինչ չեն տա, այլև վերջին հարվածը կլինեն արտադրելու հնարավորությանը: Մեր քաղաքացիների ու պետության շահերը պահանջում են անել անհրաժեշտ քաղաքական քայլերը, ապահովել տնտեսական գործունեության կենդանացման միջավայր ու պայմաններ:

Հայաստանի տնտեսական զարգացումն ու հզորացումն ինքնուրույն տնտեսական քաղաքականություն են պահանջում, ինչը հնարավոր է միայն և միայն անմիջական հարևանների հետ հարաբերությունների կարգավորման և հաղորդակցման բոլոր ճանապարհների վերականգնման, տնտեսական ու հոգևոր լիարժեք գործակցության դեպքում:

Հայաստանի տնտեսության կենդանացում, ստեղծող ազգի ինքնավստահության վերականգնում, երաշխավորված խաղաղության միջոցով մասնավոր ներդրումների խթանում, աշխատանքի պաշտպանմունքի հաստատում, արտադրական աշխատանքով աշխարհում մեր նվաճելու խնդիր. սրանք կձևավորեն նոր հասարակություն: Հասարակություն, որը կպահանջի նոր համակեցություն, նոր արժեքներ յուրացրած սերունդ: Միայն այս ճանապարհով կրթությունը, գիտությունն ու մշակույթը կրավորական վիճակից կդառնան հասարակության զարգացման ու համախմբման կարևոր գործոն: Միայն այս պայմաններում հասարակության բոլոր շերտերը կգան համաձայնության կրթության բարեփոխման հարցերում, և կգտնվեն անհրաժեշտ միջոցներ ուսուցչի և դասախոսի աշխատանքը պատշաճ գնահատելու համար:

**Նոր Հայաստան**

Խորհրդային կայսրության փլուզմամբ մեզ նորից պարտադրվեց անկախություն, որն այս անգամ ընդունվեց 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեով: Վերևից իջեցված անկախությունը կազմակերպված նվաճելու արդյունք համարելը վկայում է տվյալ ազգի գիտակցական որոշ մակարդակի մասին, բայց ոչ ավելին: Ազգի գիտակցականության ու միասնականության բարձրագույն աստիճանի մասին վկայում են ինքնորոշման համար պայքարը կամ էլ անկախ պետությունը կորցնելու սպառնալիքը կանխելը: Եվ եթե մենք

տարբեր հազարամյակներում նույն կերպ ձեռք ենք բերել ու նույն կերպ էլ կորցրել մեր ինքնուրույն պետականությունը, նշանակում է, որ իշխող վերնախավը ոչինչ էլ չի արել այդ պետականությամբ շահագրգռելու նաև ռամիկ ժողովրդին և դրանով իսկ արագացնելու ազգային կոնսոլիդացիայի ընթացքը: Դա նշանակում է, որ ժողովրդի հիմնական մասն անտարբեր է վերաբերվել պետության ստեղծման ու անկման գործընթացին: Բայց եթե միջնադարյան իշխանական Հայաստանում դա հասկանալի էր, ապա հասկանալի չէ մեր օրերում: Իսկապես, ինքնուրույն հայկական պետականության ստեղծման ակտերին թե 1918թ. և թե 1991թ. նախորդել են համաժողովրդական խանդավառության ու համազգային միասնականության պոռկումներ՝ մի դեպքում Սարդարապատի ճակատամարտով, մյուս դեպքում Արցախյան շարժումով: Բայց ոգևորության երկու դեպքերին էլ հաջորդել է, ըստ էության, խորքում հակա-անկախ-պետական հիասթափություն: Եվ այսօր, երբ մեր հասարակության աչքին համազոր նշանակություն են ստացել թե սոցիալական, թե ազգային խնդիրները, մեր պետությունը կանգնել է լուրջ ընտրության առջև: Նա կամ պետք է այդ խնդիրների հաջող լուծումով գտնի համաժողովրդական աջակցություն և առաջին անգամ մտնի գոյության ամուր, ապահով հուն, կամ պետք է իր նախորդի նման թուլանա, կործանվի սեփական ժողովրդի անտարբեր հայացքների ներքո:

Հարկավոր է, որ մեր ժողովուրդը դառնա ոչ միայն անկախ պետության հռչակման մասնակից, այլև ինքնուրույն պետականությունը պահպանելու երաշխավոր: Դրա համար նրան պետք է հայրենիքի տեր դարձնել ո՛չ թե կարգախոսներով ու խոստումներով, այլ օրինուinternal հայրենասիրական շահը ձևավորելով: Երբ ինքնուրույն պետականության կորստի հետ ժողովուրդը կորցնելու լինի նաև իր շահը, նա կկանգնի այդ պետության թիկունքին կրկնակի եռանդով ու հայրենասիրությամբ:

Հանրապետության առաջին դեմքի օրինապահությունը վարակիչ պիտի լինի, պետական պաշտոնյաների միջոցով պիտի փոխանցվի Հայաստանի քաղաքացուն: Միայն օրինապաշտ հպատակությամբ կմաքրենք մեր պետական տունը անօրինությունների կեղտից: Օրինապահությունը պիտի դառնա դաստիարակչական առանցքը դպրոցից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություն:

*1998թ. փետրվար*

## Ի՞նչ է պետք մեզ ամենից առաջ

*Մի ճշմարիտ հայացք,*
*մի պարզ վերաբերմունք մշակել*
*դեպի այն պետությունները, որոնց ձեռքի տակ, թե*
*հարևանությամբ ապրում ենք։*
*Մի գիտակցական եւ մտածված վերաբերմունք,*
*որ գոյություն չունի ամենևին։*
*Եվ միշտ առաջնորդվում ենք*
*քամու հոսանքներով, նախապաշարումներով*
*ու թյուրիմացություններով,*
*ամեն անգամ էլ դառնությամբ հաշվելով*
*մեր կոպիտ սխալներն ու կորուստները,*
*ամեն անգամ և ամեն մեկը*
*ետին թվով հանդիսանալով*
*խելոք ու հեռատես,*
*երբ եղածն անցել է անդառնալի։*

**Հ. Թումանյան**